ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА

МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ

BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (17)

ԵՐԵՎԱՆ - 2015

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»

«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛСАРАНИ. МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ, ПОЛИТОЛОГИЯ»

«BANBER YEREVANI HAMALSARANI. INTERNATIONAL RELATIONS, POLITICAL SCIENCE»

Գլխավոր խմբագիր՝ **Միրզոյան Հ. Ղ.**

Խմբագրական խորհուրդ.

Ագլյան Վ. Ռ., Ալեքսանյան Ա. Ս. *(պատասխ. խմբագիր),* **Ավետիսյան Լ. Վ.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Բայբուրդյան Վ. Ա., Գոնչար Ն. Ա.** *(գլխ. խմբագրի տեղակալ),* **Ենգոյան Ա. Փ., Հովակիմյան Ա. Է.** *(պատասխ. քարտուղար),* **Պետրոսյան Գ. Հ., Սաֆարյան Ա. Վ., Սիմոնյան Ա. Հ., Վարդազարյան Մ. Ե., Վարդանյան Լ. Գ., Քեռյան Գ. Մ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**

Редакционная коллегия:

Аветисян Л. В. *(зам. главного редактора),* **Аглян В. Р., Алексанян А. С.** *(ответ. редактор),* **Байбурдян В. А., Варданян Л. Г., Вартазарян М. Е., Гончар Н. А.** *(зам. главного редактора),* **Енгоян А. П., Керян Г. М., Овакимян А. Э**. *(ответ. секретарь),* **Петросян Г. А., Сафарян А. В., Симонян А. Г.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**

Editorial Board:

Aglyan V. R., Aleksanyan A. S. *(Managing Editor),* **Avetisyan L. V.** *(Deputy editor-in-chief)***, Bayburdyan V. A., Gonchar N. A.** *(Deputy editor-in-chief),* **Hovakimyan A. E.** *(Executive Secretary),* **Keryan G. M., Petrosyan G. H., Safaryan A. V., Simonyan A. H., Vardanyan L. G., Vardazaryan M. E., Yengoyan A. P.**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԻ ԲԱԼԿԱՆՅԱՆ ՇՐՋԱԴԱՐՁԸ
(*երկրաքաղաքական էտյուդ*)

ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ

Աշխարհագրական առումով Հայաստանը իրենից ներկայացնում է բնական և գրեթե անառիկ ամրոց: Մի կողմից նա սահմանակցում է Ռուսաստանին, մյուս կողմից՝ իշխում է համաշխարհային այն բոլոր ուղիների վրա, որ Փոքր Ասիայով անցնում են իր բնական պատնեշների փեշերով, միացնելով Եվրոպայի հետ հարստագույն երկրներ ու ծովեր: **Կորցնելով Հայաստանը՝ Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց** (ընդգծումը իմն է - Լ. Շ.): Կարելի է գրեթե առանց չափազանցության ասել, որ ժամանակակից Թուրքիայի համար անգամ նեղուցներին տիրելը չպետք է որ այնպիսի ուշադրության արժանանա, ինչպես Հայաստանն իր համար պինդ պահելը՝ իր գոյատևման այդ վերջին և ամուր պատվարը*:

Պաուլ ՌՈՀՐԲԱԽ

Օսմանյան կայսրությունը XX դար թևակոխեց տարածքային զգալի կորուստներով: Բեռլինի կոնգրեսի (1(13) հունիսի - 1(13) հուլիսի 1878 թ.) սահմանած հավասարակշռությունը կորցնում էր իր ներքին կայունությունը: Փարիզի խաղաղության տրակտատով (18(30) մարտի 1856 թ.) Թուրքիային տրված անձեռնմխելիության երաշխիքները անտես «գոլորշիանում էին»: Առաջինը, որ խախտեց «տաբուն», հզորության գագաթնակետ մագլցող Իտալիան էր:

1911 թվականի սեպտեմբերի 29-ին համաշխարհային քաղաքականության մեջ ակտիվ դերակատարության հայտ ներկայացրած այդ երկիրը սկսեց Օսմանյան կայսրությունից խլել նրա ***հյուսիսաֆրիկյան*** տիրույթները՝ հռոմեական պատմական պրովինցիաները (գավառները)՝ Տրիպոլիտանիան և Կիրենաիկան: Այս ուղղությամբ նա դեռևս XIX

* «Deutseh-Asiatische Gesellschaf» ընկերության 1913 թվականի նոյեմբերի 23-ի խորհրդակցությունում ունեցած ելույթից:

դարի 90-ական թվականներին ստացել էր Գերմանիայի համաձայնությունը: «Գերմանիան Իտալիային «carte blanche» էր տվել Տրիպոլիտանիայում և Կիրենաիկայում»… «Ավելին, Իտալիան ոչ միայն իր դաշնակիցներից՝ Գերմանիայից և Ավստրո-Հունգարիայից էր ստացել իր պլանների ճանաչում, այլև Եռյակ համաձայնության տերությունների կողմից»[1]:

Պահը հարմար էր ընտրված: Խոշոր տերություններից «Ֆրանսիան զբաղված էր Մարոկկոյի գործերով, Թուրքիան չուներ բավարար նավատորմ, Գերմանիան Տրիպոլիտանիայի համար մտադիր չէր վիճել իր դաշնակցի հետ, Անգլիան բարյացակամորեն էր վերաբերվում Իտալիային՝ ձգտելով նրան վերջնականապես պոկել Եռյակ միությունից»[2]: Ավստրո-Հունգարիային ընդհանրապես ձեռնտու էր Իտալիայի՝ Ադրիատիկի ափերից ուշադրության շեղումը դեպի Արևմուտք՝ Հյուսիսային Աֆրիկա՝ Տրիպոլիտանիա: Ռուսաստանը դեմ չէր Իտալիայի ձգտումներին: Դեռևս 1909 թվականին Ռակոնիջիում Իտալիան պարտավորվել էր «բարյացակամորեն վերաբերվել Ռուսաստանի շահերին Նեղուցներում»՝ փոխադարձաբար ճանաչելով Իտալիայի «հատուկ իրավունքները» Տրիպոլիտանիայում:

Այսպիսով, շրջագիծը փակվում էր «Եվրոպայի հիվանդ մարդու» և քրիստոնյա ժողովուրդների «հավերժական սպանդանոցի» շուրջ: Եվ ինչպես նկատել է Ավստրո-Հունգարիայում և Իտալիայում ռուսական ռազմածովային գործակալ Բոյլը, «***տեղի ունեցավ զարմանալի բան. Իտալիան գնաց Թուրքիայի վրա Եվրոպայի ընդհանուր համաձայնությամբ»***[3] (ընդգծումը իմն է - Լ. Շ.): **Սկսվել էր Թուրքիայի արտամղումը Եվրոպայից:**

Ընդսմին, «Օսմանյան կայսրության արտաքին քաղաքական մեկուսացումը և պատերազմից ծնված ներքաղաքական ճգնաժամը մեծմասամբ պայմանավորեցին բալկանյան ժողովուրդների՝ թուրքական պետության դեմ հանդես գալու պահի ընտրությունը և Բալկանյան առաջին պատերազմի սկիզբը»[4]:

Իրոք:

1912 թվականի հոկտեմբերի 18-ին Լոզանում (Ուշի) Տրիպոլիտանիան և Կիրենաիկան ստանում են «լիակատար ինքնավարություն»: Իտալիայի «ժամանակավոր» տիրույթ են անցնում նաև Դոդեկանեզյան կղզիները: Սկիզբ է դրվում ապագա Լիբիայի անկախությանն ու նրա ժողովուրդների ազատագրության տևական գործընթացին: Նույն օրը, ի

---

[1] **Могилевич А. А**. Итало-турецкая война // **Могилевич А. А., Айрапетян М. Э**. На путях к мировой войне 1914-1918 гг. М., 1940, с. 91.

[2] Նույն տեղում, էջ 92:

[3] Նույն տեղում, էջ 93:

[4] **Зябрилов В. В**. Итало-турецкая война – 1911-12 // «Большая Российская энциклопедия». Т. 12. М., 2008, с. 216.

պաշտպանություն Չեռնոգորիայի, Բուլղարիայի և Հունաստանի, մարտական գործողություններով սկսվում է Բալկանյան առաջին պատերազմն ընդդեմ նույն «Եվրոպայի հիվանդ մարդու»:

Բալկանյան պատերազմները, ինչքան էլ տարօրինակ թվա, Արևելքի քրիստոնյա ժողովուրդների՝ առաջին հերթին հույների և հատկապես հայերի համար աղետալի և թերևս անդառնալի հեռագնա երկրաքաղաքական հետևանքներ ունեցան...

«Թուրքերի կողմից ստրկացված Բալկանների ժողովուրդները,- գրում են Ա. Գ. Զադոխինը և Ա. Յու. Նիզովսկին,- ազգային ազատագրության ճանապարհ թեակոխեցին աստիճանաբար: Առաջին փուլում ձևավորվեցին կիսաինքնավար, այնուհետև ինքնավար Չեռնոգորիան և Սերբիան, ապա Վալախիան և Մոլդավիան, որոնք հետագայում միավորվեցին Ռումինիայի կազմում: 1830 թվականին անկախություն նվաճեց Հունաստանը: 1875-1878 թվականների Արևելյան ճգնաժամի արդյունքում անկախություն ստացան Սերբիան, Չեռնոգորիան և Ռումինիան, և ձևավորվեց ինքնավար Բուլղարիայի իշխանապետությունը, որը 1909 թվականին դարձավ անկախ: 1912 թվականին անկախության հասավ Ալբանիան: Վերջապես, Առաջին համաշխարհային պատերազմից հետո կազմավորվեց Հարավսլավիան՝ հարավային սլավոնների պետությունը»[5]:

Անդրադառնալով Բալկանյան առաջին պատերազմի (9 հոկտեմբերի 1912 - 30 մայիսի 1913) նպատակներին և արդյունքներին՝ նույն հեղինակները գրում են. «Ոգևորված իրենց փայլուն հաղթանակներից՝ նրանք (Բալկանյան միությունը - Լ. Շ.) թուրքերի հետ բանակցում էին ծայրահեղ դաժանորեն. ***Թուրքիան պետք է ամբողջովին հրաժարվի իր բոլոր եվրոպական տիրույթներից:*** Թուրքերը հուսահատ դիմադրում էին, սակայն, հայտնվելով դիվանագիտական մեկուսացման մեջ, ստիպված էին համակերպվել դաշնակիցների բոլոր հիմնական պահանջներին»[6] (ընդգծումը իմն է - Լ. Շ.): Այնուհետև. «Օսմանյան կայսրությունը տապալված է: Սլավոնական ռեկոնկիստան (հետ նվաճելը - Լ. Շ.), որ սկսվել էր սերբական առաջին ապստամբությամբ, ավարտվեց թուրքերից Բալկանների լրիվ ազատագրումով»[7]: 1913 թվականի մայիսի 5-ին ստորագրվեց Լոնդոնի խաղաղության դաշնագիրը, «համաձայն որի՝ Թուրքիան կորցնում էր եվրոպական իր տիրույթները Էնեզ-Միդյա գծից հյուսիս, և ճանաչվում էր Ալբանիայի անկախությունը»[8]:

---

[5] **Задохин А. Г., Низовский А. Ю.** Пороховой погреб Европы. Балканские войны XX века. М., 2000, с. 19-20.

[6] Նույն տեղում, էջ 41:

[7] Նույն տեղում, էջ 42:

[8] «Балканские войны 1912-13» // «Большая Российская энциклопедия». Т. 3. М., 2005, с. 709.

Անկախ այն բանից, որ Բալկանյան երկրորդ պատերազմը բռնկվեց նախկին դաշնակիցների միջև, և այս անգամ ջախջախվեց Բուլղարիան, որի հետևանքով, ըստ «Բուխարեստի խաղաղության դաշնագրի (1913 թ. օգոստոսի 10)՝ Բուլղարիան Ռումինիային զիջեց Հարավային Դոբրուջան, Հունաստանին՝ Հարավային Մակեդոնիան և Արևմտյան Թրակիայի մի մասը, իսկ Սերբիային՝ ողջ Հյուսիսային Մակեդոնիան, իսկ Կոստանդնուպոլսի խաղաղ դաշնագրով (1913 թ. սեպտեմբերի 29) Թուրքիային վերադարձրեց Արևելյան Թրակիայի մեծ մասը և Էդիրնեն (Ադրիանապոլիս - Լ. Շ.)»[9], թուրքերի ճակատագիրը Եվրոպայում կասկածելի էր. թուրք նախամարդը եվրոպական մտրակի հարվածների տակ իր արյունոտ հայացքը շուռ էր տալիս դեպի Արևելք՝ Արևելյան Անատոլիա, որ նույնն է՝ հայության **սրբազան հայրենիք՝ Արևմտյան Հայաստան**:

Այլևս կանխորոշված էր հայության ապագան Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության ողջ տարածքում, հանգամանքների չարաղետ դասավորումով՝ այնուհետև նաև Այսրկովկասում:

Թերևս Բալկաններից հետո անտես փոխվում էր միջազգային հավասարակշռությունը Օսմանյան կայսրության շուրջ: Ժամանակի ռազմավարական համայնապատկերի խորքային ընկալումով քաջածանոթ անգլիացի պատմաբան Ալան Թեյլորը, արձանագրելով կայսրության շուրջ նշյալ տեկտոնական տեղաշարժը, գրում է. «Բալկանյան պատերազմների ավարտից հետո միջազգային հարաբերությունների վճռական հարցը դարձավ ասիական Թուրքիայի ապագան: ***Բալկանները մեծ հետաքրքրություն չէին ներկայացնում. Ասիայում բացվող հնարավորությունները թվում էին վիթխարի***: Այդ հարցը բաժան-բաժան արեց գոյություն ունեցող միությունները»[10] (ընդգծումը իմն է - Լ. Շ.):

Այսպիսով, Բալկանյան պատերազմները ծայրահեղորեն սրեցին միջազգային հակասությունները՝ արագացնելով Առաջին աշխարհամարտի գալուստը: Այդ հակասությունները խոշոր տերությունների (Անգլիա, Գերմանիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Ավստրո-Հունգարիա) շահագրգռությունների ու խարդավանքների կենտրոնը տեղավորեցին ***Թուրքիայի սրտում՝ Կոստանդնուպոլսում և Փոքր Ասիայում***[11]:

Այս նույն շրջանում է, որ ծնծղաների ուղեկցությամբ կյանքի կոչվեց «Հայկական բարենորոգումների ռուսական ծրագիրը»[*]՝ կոթնած

---

[9] Նույն տեղում:

[10] **Тейлор А. Дж. П**. Борьба за господство в Европе 1848-1918. М., 1958, с. 506.

[11] Տե՛ս նույն տեղը:

[*] Այս առնչությամբ տե՛ս **Коджоян Р. А**. Русская дипломатия и проблема реформ в Западной Армении накануне Первой мировой войны. Автореф. к.и.н. Ер., 1990, **Ն. Զաուպ**, Գերմանական կայսրությունը և Հայկական հարցը (1878-1914), թարգմ. գերմ., Եր., 2008, **Ա. Հ. Խաչատրյան**, Կայսերական Գերմանիան և հայկական բարենորոգումները 1912-1914 թթ., Եր., 1999:

Բեռլինի մեռնող տրակտատի 61-րդ հոդվածին: Ուշագրավ է այստեղ Վահան Փափազյանի (Կոմս) դիտարկումը. նախաձեռնությունը, գրում է նա, գալիս էր «Թիֆլիզի և Մոսկվայի առաջավոր հայ մտավորականությունից»: Այն «խորհրդակցություն կունենա ռուս կառավարության և Կովկասյան փոխարքայության հետ՝ Ռուսաստանի հովանավորությունը խնդրելու Հայկական բարենորոգումներու վերաբերմամբ, թե՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմե հեղինակավոր հայ հանրային գործիչներու թելադրությամբ՝ Կովկասյան փոխարքայի խողովակով, հիշատակագիր մը հանձնված էր Ռուսիո կայսրին, խնդրելով ***ստանձնել նախաձեռնությունը հայ դատի լուծման***… Անակնկալ էր մեր ռուսահայ եղբայրներու այս քայլը… Հետաքրքրականը այն էր, որ բոլոր այս վճռական և ճակատագրական քայլերուն ձեռնարկած էին, առանց գոնե ի տեղեկություն հաղորդելու Ազգային Պատրիարքարանին...»: Իսկ հաջորդիվ, ցավով խոստովանում է. «Մենք, անշուշտ, խորապես կգիտակցեինք մեր փափուկ դիրքը - ապրիլ Օսմանյան կայսրության մեջ, լինել անոր հպատակը, վայելել ազգային սահմանադրական ինքնավարություն, բնականոն հարաբերություններ պահել կառավարության հետ և միևնույն ատեն դավադիր գործ կատարել, այսինքն՝ օտար պետություններուն դիմել և անկե սպասել օգնություն: Անըմբռնելի հանդգնություն մըն էր այս, որուն արդյունքը վայելեցինք երեք տարի վերջը...»[12]:

Բալկանյան պատերազմները տարբեր գնահատականներ և հույզեր առաջացրին հայոց մեջ:

Առաջինը և գերիշխողը ավանդականն էր՝ գաղափարականը, առարկայազուրկը: Այս տեսակետը լավագույնս արտացոլված է Նիկոլ Աղբալյանի մտածումներում: Նա գրում է. «Շատերի հետ՝ մենք ևս մեր ուրախությունն ենք հայտնում կայացած հաշտության առիթով: Հայերը դարեր շարունակ տարել են թյուրքական լուծը. նրանք լավ են հասկանում, թե ինչ է նշանակում այդ լուծից ազատվել, և զարմանալի չէ, որ հազարավոր վերստեր հեռու՝ մենք սրտանց ուրախանում ենք բալկանյան ժողովուրդների ազատագրության համար…

Մենք ունենք ուրախության և մի ուրիշ պատճառ. Եվրոպական մեծ պետությունները խոստացել էին, որ Բալկանյան պատերազմի վախճանից հետո՝ կհարուցանեն հայոց հարցը: [Եվ գլուխկոտրուկ «կանխատեսումը» - Լ. Շ.]. Ամեն նշաններից երևում է, որ պատիր խոսքեր չեն եղած այդ խոստումները: Բնական է այն ուրախությունը, որ պիտի զգա ամեն հայ՝ լսելով հաշտության լուրը, որովհետև բալկանյան հաշտություն՝ նշանակում է հայոց հարցի հարուցում և ո՞վ գիտե՝ գուցե նաև լուծում այնպիսի ձևով, որ հայությունը ազատվեր թուրքական լուծից... Եվրոպական Թուրքիայի» ազատագրությամբ Եվրոպայի

[12] **Վ. Փափազյան**, Իմ հուշերը, Բեյրութ, 1952, հ. 2, էջ 185-186:

հանցավոր խղճից ընկնում է մի բեռ. մնում է մի ուրիշ ծանր բեռ - Հայաստանը և իր անհամար զոհերի արյունը... »[13]:

«Եվրոպական Թուրքիայի» այդ ազատագրության համար կռվում էր նաև «հայկական կամավորական վաշտը (270 մարդ) պոդպորուչիկ Գ. Նժդեհի և վոյեվոդա Անդրանիկի (Օզանյան) հրամանատարությամբ»[14]:

Երկրորդը իրատեսականն էր, դոգմաներ չհանդուրժողը՝ թելադրված ազգային շահի գիտակցումով և Թուրքիայի շուրջ առաջացած հավասարակշռությամբ: Այն առավել քան պարզորոշ արտահայտել է Ռուբենը (Մինաս Տեր-Մինասյան): Հռչակավոր «Հայրենիք» (Բոստոն) ամսագրի հիմնադիր-խմբագիր Ռուբեն Դարբինյանը իր հուշերում գրում է. «Երբ Բալքանյան պատերազմը արդեն բավական առաջացած էր և թուրքերը պարտված էին, հանկարծ իրմե (Ռուբենից - Լ. Շ.) ստացա նամակ մը, երկար նամակ մը, որուն մեջ խիստ հետաքրքրական մտքեր էր հայտնած և բախտորոշ առաջարկ մը կրներ: Ան կաշխատեր համոզել զիս, որ անկարելի էր զուտ դիվանագիտական ճանապարհով հետապնդել և լուծել Հայկական հարցը, ինչ որ ճիշտ էր, անկասկած: Բայց ան միաժամանակ կաշխատեր նաև համոզել զիս, որ չափազանց նպաստավոր պայմաններ ստեղծված էին այդ օրերուն՝ ապստամբություն մը կազմակերպելու համար Թրքահայաստանի մեջ: ***Պետք է, կըսեր, օգտվիլ թուրքերու պարտություններն և Բալքաններու մեջ և Պոլսո շուրջ չափազանց զբաղված ըլլալեն և ոտքի հանել Թրքահայաստանը*** (ընդգծումը իմն է - Լ. Շ.): Միաժամանակ կհաղորդեր, որ եթե ապստամբության ծրագիրը ընդունվեր, ինքը անմիջապես պիտի ձգեր Ժնևը և պիտի ուղևորվեր Թրքահայաստան՝ ապստամբության մասնակցելով»[15]: Հրաչ Դարպասյանը ևս վկայում է. «1912-ին Ռուբեն Ժնևեն երկար նամակ մը կգրե Ա. Չիլինգարյանին (Ռ. Դարբինյանին - Լ. Շ.) և կառաջարկե Պոլսո մեջ պաշտպանել իր ծրագիրը, այսինքն՝ ըմբոստանալ Հայաստանի մեջ՝ օգտվելով Պալքանյան պատերազմերեն»[16]: Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին կոթնած հայությունը, անշուշտ, չօգտվեց պատեհ առիթից:

Իսկ խելահեղ աշխարհը Բալկաններից հետո մղվում էր աշխարհամարտի: «Հայկական բարենորոգումների» նեցուկ և ներշնչող Ռուսաստանը գնաց իր տեսլականի հետևից՝ գերադասելով, ինչպես նկատում է Բ. Հ. Լիդլ Հարտը, «մեկուսացումը» և «չցանկանալով զոհաբերել Կոստանդնուպոլսի և նեղուցների անեքսիայի իր երազը»[17], իսկ Եվրո-

---

[13] «Հորիզոն», 1913, թիվ 111:

[14] «Հայկական հարց: Հանրագիտարան». Եր., 1996, էջ 74, տե՛ս նաև **Trotsky L**. The Balkan Wars («Andranik and his Troop»). N.Y., 1980:

[15] **Ռ. Դարբինյան**, Կյանքիս գրքեն: Բեյրութ, 1972, հ. Ա, էջ 421:

[16] Նույն տեղում, էջ 9:

[17] **Лиддел Гарт Б. Г**. Правда о войне 1914-1918 гг. М., 1935, с. 121.

պայից արտամղված և ներքին հավասարակշռություն որոնող Թուրքիան հետևեց Հայկական հարցի վերջնական ու ամբողջական «լուծման» իր տեսլականին՝ գերադասելով Հայոց մեծ եղեռնը երաշխավորող կայսրության՝ Գերմանիայի հետ դաշինքը: Այս առնչությամբ հայկական խնդրին քաջածանոթ Անդրե Մանդելշտամը գրում է. «1914 թվականի Մեծ պատերազմը երիտթուրքերի ղեկավարներին՝ Էնվերին, Թալեաթին, Ջեմալին, թվաց որպես իրենց բոլոր նպատակների վայրագ և անհապաղ իրականացման անսպասելի առիթ: Նրանք այդպիսով իրենց ազգին նետեցին թոհ ու բոհի մեջ Գերմանիայի կողքին՝ ունենալով հստակ որոշում՝ ազատվելու ամենից առաջ թուրքական պետության քրիստոնյա տարրերից և այդպիսով ամեն տեսակի *հումանիտար ինտերվենցիան* (ընդգծումն իմն է - Լ. Շ.) ապագայում դարձնելու անիմաստ»[18]: Ահա թե ինչու Թուրքիան որոնեց ու գտավ Արևելքում ազգային իր ձգտումները՝ միանալ ցեղակից-հավատակից ժողովուրդների հետ, երաշխավորող և հովանավորող խոշոր տերության: Բնականաբար, այդ երկիրը չէր կարող լինել Ռուսաստանը: Նման դերում հնարավոր չէր պատկերացնել Անգլիան կամ Ֆրանսիան: Այլ էին նրանց աշխարհակալական մղումները:

Այդ գերուժը կարող էր լինել և եղավ աշխարհակալության հայտ ներկայացրած, «Drang Nach sten»-ը («Թռիչք դեպի Արևելք») որդեգրած Գերմանիան: Ահա այդ երկու կայսրությունների՝ հոհենցոլերների և օսմանցիների, չզարմանաք, տիտղոսակիր ժողովուրդների գիշատիչ բնազդների նույնականացման խաչմերուկում էլ ծնվեց թուրք-գերմանական ***զինակցության*** մասին 1914 թ. օգոստոսի 6-ի համաձայնագիրը:

Հիրավի, կտրուկ վատթարացող իրավիճակը հայոց համար բխում էր թուրք - գերմանական ձևավորվող դաշնադրությունից: Գերմանիայի դեսպան Հանս Ֆրայհեր Ֆոն Վանգենհայմի՝ ի դեմս Օսմանյան կայսրության մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշայի 1914 թվականի օգոստոսի 5-ին ներկայացված պահանջի՝ ապահովել «փոքրիկ սրբագրում» Թուրքիայի արևելյան սահմանների վրա, որը նրան հարաբերության մեջ կդնի Ռուսաստանի մահմեդականների հետ, օգոստոսի 5-ին Բարձր դուռ (կառավարություն) մեծ վեզիրին փոխանցվեց Վանգենհայմի վեց կետանոց պատասխան - նամակը, որը բխում էր 1914 թվականի գերմանա-թուրքական «միության մասին պայմանագրից»: Ժամանակաշրջանի ռազմաքաղաքական խարդավանքներին քաջածանոթ Ե. Ֆ. Լուդշուվեյտը գրում է. «Ծանրության կենտրոնը գերմանական պարտավորությունների մեջ 1-ին կետն էր, որը նախատեսում էր «Գերմանիայի աջակցությունը՝ կապիտուլյացիաները վերացնելու գործում»: Բայց և այնպես վճռական դեր խաղաց 5-րդ կետը. «*Գերմանիան (Ռու-*

[18] **Mandelstam A**. La Société des Nations et les Puissances devant le Problème Arménien. 2-eme edition, Liban, 1970, էջ 23:

սաստանին - Լ. Շ.) կստիպի Օսմանյան կայսրության սահմանները շտկել այնպիսի ձևով, որ Թուրքիայի համար ապահովվի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ»[19]: «Այսինքն՝ ռուսական Հայաստանի նվաճում», - ճշգրտում-մեկնաբանում է Վ. Գոտլիբը՝ անգլիացի քննախույզ հետազոտողը[20], այսինքն՝ տարածքային փոխհատուցում Ռուսական կայսրության հաշվին: «Այդ կետի՝ գերմանական պարտավորությունների մեջ ընդգրկման վրա Սայիդ Հալիմ փաշան հատկապես պնդում էր՝ ցույց տալով, որ դա անհրաժեշտ է այն բանի համար, որ ընդունված որոշումների պաշտպանությունը խորհրդարանի և հասարակական կարծիքի առջև հեշտացվեր»[21]:

Ակնհայտ է՝ գրում է պատմաբան Ե. Ֆ. Լուդշուվեյտը, որ այդ կետի իմաստը Գերմանիայի կողմից երեք սանջակների (Բաթում, Արդահան, Կարս) գրավման հավակնությունների ճանաչումն էր, «որը այս կամ այն չափով նշանակում էր համաթուրանական ծրագրի իրականացում»[*]: Սակայն, որպես խորհրդային պատմաշինարար, գրչի մի շարժումով հարցադրումը «բուն էությունից դուրս է հանում»[22] («вокруг до около»)՝ ծածկելով Ռուսաստանի այս կամ այն չափով մեղսակցությունը XX դարի առաջին և մինչև օրս չգերազանցված Ոճիրին՝ Հայոց ցեղասպանությանը: Քանզի «համաթուրանական ծրագրի իրականացումը» ենթադրում էր «մահմեդական ժողովուրդների»՝ Կովկասի թաթարների, Ատրպատականի թյուրքական ցեղերի, կումիկների, բալկարների, կարաչայների և այլոց հետ միավորում, վերացումը «հայկական թումբի», որ նույնն է՝ «*բարենորոգումների ռուսական ծրագրի…*»: «Այդ

---

[19] **Mühlman C**. Deutschland und Türkei, 1913-1914. Berlin-Grünewald, 1929, p. 96-97.

[20] Տե՛ս **Готлиб В**. Тайная дипломатия во время Первой мировой войны. М.,1960, էջ 51:

[21] **Лудшувейт Е. Ф**. Турция в годы Первой мировой воины 1914-1918 гг. Военно-политический очерк. М., 1966, с. 33.

[*] Ի վերջո, Թուրքիան հասավ իր առաջադրած հիմնախնդրի իրագործմանը՝ կենտրոնանալով Նախիջևան-Շարուր-Շահթախտի, այնուհետև Սուրմալուի մայր Հայրենիքից օտարման վրա, 1920 թ. դեկտեմբերի 3-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով [հոդվ. 2. «Նախիջևանի, Շարուրի և Շահթախտի շրջաններում, որտեղ հետագայում հանրաքվեի միջոցով կհաստատվի հատուկ ադմինիստրացիա, Հայաստանը պարտավորվում է չմիջամտել այդ ադմինիստրացիայի կարգին, անկախ այն բանից, թե ադմինիստրացիան որ կողմը կթեքվի»], 1921 թ. Մոսկվայի մարտի 16-ի պայմանագրով [հոդվ.3. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են Նախիջևանի մարզը… կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո, պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չի զիջի մի երրորդ պետության»] և 1921 թ. հոկտեմբերի 13-ի պայմանագրով [հոդվ. 5. «Թուրքիայի կառավարությունը և Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունները համաձայն են, որ… Նախիջևանի մարզը կազմի ինքնավար տերիտորիա՝ Ադրբեջանի խնամակալության ներքո»]: Սկզբում դեմ լինելով ցարական Ռուսաստանին և պատերազմելով նրա դեմ, այնուհետև կողմ լինելով և համագործակցելով պանթյուրքիստ բոլշևիկների հետ՝ հենված Կովկասի թաթարների վրա՝ սերտ համագործակցությամբ վրացի թունդ նացիոնալիստների հետ: Էլ չենք խոսում Սուրմալուի գավառի մասին, որը չէր մտցվել նույնիսկ թուրքական «Ազգայիին ուխտի» (1920 թ., հունվարի 28) մեջ:

[22] **Лудшувейт Е. Ф**. Указ. соч., с. 33.

հոդվածով Գերմանիա վկայագիրը տված եղավ թրքական հետագա վայրագություններու ի կատար ածումի՝ ի խնդիր սահմանային սրբագրումներու»[23]: Այսպիսով, Թուրքիան Գերմանիայից ստանում էր, որպես Եռյակ միության դաշնակցի՝ ընդդեմ Անտանտի, իր ազգային իղձի՝ հայության բնաջնջման և Հայաստանի նկատմամբ թուրքական տիրապետության հավերժացման Գերմանիայի երաշխիքն ու հովանավորությունը, նաև օրհնանքը:

Եվ այսպես, այլատյացությունը՝ արտահայտված հակամշակույթով՝ կոնկրետացած հայատյացությամբ*, Բալկաններից արձակված «թուրքական Եվրոպայի» ազատագրության թունավոր նետերը «ահարկու ողջակիզեցին» («ghastly holocaust»՝ Ջոզեֆ Հոքինգ, 1918 թ.) հայությանն իր բնօրրանում՝ Հայաստան Հայրենիքում:

Եվ եռյակ համաձայնության՝ Անտանտի կառավարությունները Սանկտ Պետերբուրգում, Լոնդոնում և Փարիզում 1915 թվականի մայիսի 24-ին արձանագրելու էին. «Գրեթե մեկ ամսից ի վեր ***Հայաստանի*** քուրդ և թուրք բնակչությունը հայերին կոտորելու հարցում գործում է օսմանյան իշխանությունների թողտվությամբ և հաճախ աջակցությամբ: Այդպիսի կոտորածներ տեղի են ունեցել ն. տ. ապրիլի կեսերին... (Արևմտյան Հայաստանի տեղանունների թվարկում - Լ. Շ.) և համայն Կիլիկիայում... Միաժամանակ Կ. Պոլսում օսմանյան կառավարությունը դաժանորեն է վարվում անպաշտպան ***հայ բնակչության*** հետ»:

Եվ ի լուր ողջ աշխարհի ազդարարելու էին.

«***Մարդկության*** և ***քաղաքակրթության*** դեմ ուղղված ***Թուրքիայի*** այս նոր ***հանցագործություններին*** ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ են պահում Բարձր դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն ***օսմանյան կառավարության բոլոր անդամներին***, ինչպես նաև նրա ***այն գործակալներին***, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում» (ընդգծումներն իմն են - Լ. Շ.):

Վճռի իրագործումը ցայսօր մնում է օդում կախված...

Բանալի բառեր - *Բալկաններ, Հայաստան, ռազմավարություն, շրջադարձ*

ЛЕВОН ШИРИНЯН – ***Балканский перелом Армянского вопроса (геополитический этюд).*** – Каждая страна, участвовавшая в Первой мировой войне, руководствовалась собственной мотивацией. Была своя тщательно скрываемая мотивация и у Османской империи. Выброшенная в результате балканских войн из Европы, а после войны с Италией – из средиземноморского региона, Османская

[23] Հանգամանորեն տե՛ս **Լ. Վարդան**, Հայկական տասնհինգը և թուրք- գերմանական դաշինքը, «Հայկական հայագիտական հանդես», Եր., 1971, էջ 45-80:

* Այդ մասին տե՛ս **Լ. Շիրինյան**, Թուրքական էթնոֆոբիան և Հայոց ցեղասպանությունը, Եր., 2011, 40 էջ:

империя пыталась найти свой центр стратегического баланса в Малой Азии и на Армянском нагорье. Это привело её к решению уничтожить Армению и армян. Программа российских реформ и противоречия крупнейших держав по турецкому вопросу усилили тенденцию. Об этом свидетельствует и выбор союзника в лице Германии. Мировая война дала возможность исполнить задуманное. Таким образом, Османская империя вступила в мировую войну, чтобы «окончательно решить» Армянский вопрос. Исполнение замысла Арменоцида казалось вопросом времени.

Ключевые слова: *Балканы, Армения, стратегия, перелом*

LEVON SHIRINYAN – *Balkanian Turning Point of Armenian Question (geopolitical etude).* – In World War I, each participating country had its own motivation. The Ottoman Empire, from the viewpoint of a deep understanding of the prevailing geostrategic realities around him, which carefully concealed, had its own motivation.

As a result of the Balkan wars, finally thrown out of Europe, and later, the Italian-Turkish War, banished from the Mediterranean region, the Ottoman Empire was trying to find its own center of the strategic balance in Minor Asia and in the Armenian Highlands. This led to the empire's ambitions to destroy Armenia and Armenians. Russian reform program and contradictions of major powers on the Turkish issue intensified the formed trend. This is evidenced also the choice of Germany as an ally. The First World War gave the opportunity to do so. Thus, the Ottoman Empire entered the First World War to solve the Armenian question in the Turkish understanding. The idea of Armenocide and its execution has been a matter of time.

Key words: *the Balkans, Armenia, strategy, turning point*

ԻՐԱՔԻ, ԼԻԲԻԱՅԻ, ՍԻՐԻԱՅԻ ԴԵՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ

Քսանմեկերորդ դարի սկիզբը աչքի ընկավ մի շարք հակամարտություններով, որոնցից են ռազմական գործողություններն Իրաքում, Լիբիայում, Սիրիայում:

Նշված իրադարձությունները մի շարք հարցերում ունեն ընդհանրություններ՝ քիմիական զենք, միջազգային ահաբեկչություն, ժողովրդավարական հիմնախնդիրներ, տարաբնույթ ներքին հակասություններ (հիմնականում միջկրոնական, միջցեղային) և այլն[1]: Իրադարձությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ տեղեկատվական գործողությունները նախապես մտածված և միևնույն նպատակին են միտված եղել: Ռուս հեղինակներ Վ. Վ. Ցիգանովը և Ս. Ն. Բուխարինը գտնում են, որ տեղեկատվական պատերազմների մեխանիզմները կանխատեսելու, պլանավորելու, պաշարներ առանձնացնելու և դրանց իրականացումը խթանելու կանոնների և գործընթացների՝ որոշակի նպատակներ հետապնդող ամբողջություն են: Դրանք հետազոտելու և մշակելու համար օգտագործվում են մոդելներ, որոնցով ձևավորում են տեղեկատվական պատերազմներ վարելու հիմնական կանոնները: Ընդհանուր և սկզբունքորեն համընկնող մեխանիզմները կիրառվում են տարբեր համակցությամբ, տարբեր ոլորտներում: Գործնականում կիրառվող մոդելների քանակը այդքան էլ մեծ չէ: Ավելին՝ դրանք բոլորը միևնույն բազային մոդելի ձևափոխումներն են[2]:

Սույն հոդվածում նպատակ ունենք ներկայացնելու իրաքյան, լիբիական և սիրիական բախումների վերաբերյալ ազդեցիկ ԶԼՄ-ի[3] հիմնական շեշտադրումները՝ պայմանավորված միջազգային հասարակական կարծիքի ձևավորմամբ, ինչպես նաև ցույց տալ այդ իրադարձությունների լուսաբանման ընդհանրությունները:

---

[1] Տե՛ս **McCluskey M.**, The United States' 'outdated' terror list, Aljazeera, 26 January, 2014, http://www .aljazeera.com/indepth/features/2014/01/united-states-outdated-terror-list-0141267333982434.html

[2] Տե՛ս **Цыганов В., Бухарин С.**, Информационные войны в бизнесе и политике. Теория и методология. М., 2007, էջ 13:

[3] Ուսումնասիրությունները կատարվել են «Բի-Բի-Սի», «Սի-Էն-Էն», «Նյու Յորք Թայմս», ինչպես նաև «Ալ-Ջազիրա» և այլ հայտնի լրատվամիջոցների հրապարակած նյութերի հիման վրա:

Ժամանակակից յուրաքանչյուր պատերազմ նախ և առաջ սկսվում է մեդիա դաշտից: Այստեղ ձևավորվում է հասարակական կարծիք, այնուհետև ռազմական միջամտության անհրաժեշտության հարցում միջազգային հանրությանը համոզելու ակտիվ քայլեր են ձեռնարկվում: Այս տեխնոլոգիան կիրառվեց Իրաքում, Լիբիայում և Սիրիայում: Մինչև բուն ռազմական գործողություններին անցնելը նշված երկրներում «պարարտ հող» նախապատրաստվեց՝ հրահրելով տարաձայնություններ և բախումներ. որոշ օտարերկրյա ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ քաղաքացիական հասարակություն կառուցելու կոչեր հնչեցրին՝ պատճառաբանելով, որ իշխանությունները խախտում են մարդկանց իրավունքները, բացակայում է հանդուրժողականությունը[4]: Հետո բողոքի ալիք բարձրացավ: Տվյալ գործին լծված լրագրողները (որոնց մեջ, ըստ շրջանառվող տեղեկությունների, լրտեսներ կային)[5], վերլուծաբանները սկսեցին շրջանառության մեջ դնել քաղաքացիական հասարակություն «կառուցելու» հրամայականը. սկզբում՝ տեղային և փոքր մասշտաբներով, ապա ընդլայնվելով՝ երևան եկան քաղաքացիական պատերազմին բնորոշ տարրեր: Հենց այս՝ գրեթե նույն ձեռագրով և քայլերով սկսվեցին զարգացումները:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձություններից հետո, օգտագործելով ահաբեկչական լայնամասշտաբ գործողությունների մասին տեղեկատվությունը, միջազգային հանրությանը ներկայացվեց հետևյալը.

- *Իրաքի առաջնորդ Սադամ Հուսեյնը բռնապետ է, նա ժողովրդավար չէ, ուստի պետք է հեռանա: Նրա անվան հետ են կապված բազմաթիվ սպանություններ[6]: Մինչ այդ ԱՄՆ պետքարտուղարության պլանավորման բաժնի ղեկավար Ռիչարդ Հասը առաջ էր քաշում «ժողովրդավարության հաստատում մուսուլմանական երկրներում» գաղափարը, իսկ պետքարտուղար Քոլին Փաուելը խոսում էր Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման մասին[7]: Իրաքյան, լիբիական, սիրիական փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական գրոհների առաջնային թիրախ են դառնում երկրների առաջնորդները, «ջրի երես են դուրս գալիս» նրանց «սև» գործերը: Այս ամենի նպատակը, իհարկե, նախ և առաջ նրանց հեղի-*

---

[4] Տե՛ս World Report, Human Rights Watch 2010, http://www.hrw.org/sites/default/files/reports/wr2010.pdf, էջ 536-541, 555-561, World Report, Human Rights Watch 2011, http://www.hrw.org/sites/default/files/reports/wr2011.pdf, էջ 562-568, 584-591:

[5] Տե՛ս **Цыганок А.** Информационная война в Ливии: фальшивки НАТО // http://www.ci2b.info/3-texnologii-iw/4-informacionnye-vojny/ informacionnaya-vojna-protiv-livii/

[6] Տե՛ս Transcript of Bush news conference on Iraq, CNN International, 07 March, 2003, http://edition.cnn.com/2003/US/03/06/bush.speech.transcript/index.html

[7] Տե՛ս **Уткин А**. Правда об Ираке, или Битва в Месопотамии. М., 2007, էջ 94:

նակության նսեմացումն ու ոչնչացումն է:

- *Իրաքի ներսում տարաձայնություններ կային իշխանությունների և իրաքյան քրդերի միջև: Վերջիններիս ներուժը ևս օգտագործվեց երկրում ապակայունացում ստեղծելու համար:*
- *Իրաք ներխուժելու համար հիմք դարձավ քիմիական զենքի առկայության մասին լուրերի տարածումը:*
- *Արդեն ռազմական գործողությունների ծավալումից հետո շրջանառվում է՝ Սադամին լքել են իր կողմնակիցները, նա մնացել է նեղ շրջապատով[8], իսկ Բաղդադի բնակչությունը ողջունել է ամերիկյան տանկերի մուտքը մայրաքաղաք[9]:*
- *Իշխանամետ ուժերը սկսեցին պայթեցնել նավթահորեր՝ ասելով, որ այս պատերազմը «սև ոսկու» համար է, իսկ հակակառավարական ուժերը շտապեցին հանդես գալ նավթահորերի պաշտպանության մասին հայտարարություններով, և պատահական չէ, որ «Սի-էն-էն»-ի խմբագրությունը պատերազմի սանձազերծումից 10 տարի անց գրում է. «Իրաքյան պատերազմը պատերազմ էր նավթի համար, և այն պատերազմ էր ավարով՝ շատ նավթով»[10]:*

Այսպիսով, արևմտյան ազդեցիկ մի շարք լրատվամիջոցներ Իրաքի ներսում վախի, հուսալքության մթնոլորտ առաջացնելու, ինչպես նաև միջազգային հանրության շրջանակներում իրենց քայլերը հիմնավորելու ակտիվ քարոզչություն իրականացրին: Նման քարոզչությունը զուգակցվեց նաև ապատեղեկատվությամբ. Բաղդադի ղեկավարության դեմ ակտիվ գործողությունների ավարտը նշանավորվեց Սադամ Հուսեյնի մահապատժով: Պատերազմից տարիներ անց պարզ դարձավ, որ Իրաքում քիմիական զենք գոյություն չի ունեցել, իսկ պատերազմը սկսելու հիմնավորումը հենց դա էր:

Լիբիայի դեմ պատերազմի սկզբում և ընթացքում լրատվամիջոցները շրջանառության մեջ դրեցին իրաքյան իրադարձությունների ժամանակ կիրառված և սկզբունքորեն նմանատիպ տեղեկատվական հնարքներ: Առանձնացնենք դրանցից մի քանիսը:

- *Լիբիայում ժողովրդավարական արժեքները ոտնահարվում են[11], հասարակության հանդեպ երկրի ղեկավարությունը իրա-*

---

[8] Տե՛ս **Tariq A.**, Iraq War 10 Years Later: Where Are They Now?, NBC news, http://worldnews.nbcnews.com/_news/2013/03/19/17374192-iraq-war-10-years-later-where-are-they-now-tariq-aziz?lite

[9] Տե՛ս **Wood P.**, Reporters' Log: War in Iraq, BBC news, 9 April, 2003, http://news.bbc.co.uk/2/hi/2932021.stm

[10] **Juhasz A.**, Why the war in Iraq was fought for Big Oil, CNN, International Edition, 15 April, 2013 http://edition.cnn.com/2013/03/19/opinion/iraq-war-oil-juhasz/

[11] Տե՛ս **Jawad R.**, Deaths at Libya anti-militia protest in Tripoli, BBC news, 15 November,

գործել է տարատեսակ բռնություններ: Լիբիայի ղեկավար Մոամմար Քադաֆին և նրա ընտանիքը պետական միջոցներից յուրացրել են խոշոր գումարներ և պետք է պատասխան տան հանրության առջև: Բազմաթիվ հայտնի անձինք, այդ թվում՝ փաստաբաններ, բժիշկներ, ինժեներներ, պրոֆեսորներ, պահանջում են երկրի ղեկավարի հրաժարականը[12]:

- *Լիբիական ընդդիմությունը ներկայացվում է որպես այլընտրանքային բևեռ, որի միջոցով հնարավոր է փոփոխություններ իրականացնել[13]: Երկրի տարածքում բնակվող տարբեր ուժերի՝ իշխանական շրջանակների հետ սրված հարաբերությունները վերածվում են բախումների[14]:*
- *Երկրում ստեղծված խառնաշփոթի պայմաններում հայտնի լրատվամիջոցները շրջանառում են՝ Քադաֆին մնացել է միայնակ՝ փոքրաքանակ կողմնակիցներով և նույնիսկ փախուստի է դիմել Վենեսուելա, իսկ նրա որդին արդեն լքել է երկրի սահմանները[15]:*
- *«Ալ-Ջազիրա» հեռուսաբնկերությունը շտապեց հայտնել Լիբիայում օդուժ կիրառելու մասին, թեև այդ տեղեկատվության մեջ բացակայում էին փաստերը: Հատկանշական է, որ ցուցադրվեցին ընդամենը ականատեսների հետ հարցազրույցներ «կառավարության դաժանությունների» մասին[16]: Սա տեղեկատվական պատերազմների ժամանակ կիրառվող հայտնի մեթոդ է, երբ «ցանկալի» փաստերի բացակայության պայմաններում գործի են դրվում այդ բացը այս կամ այն կերպ լրացնելու ձևերը, այն է՝ «ականատեսների» վկայություններ, վերլուծաբանների մեկնաբանություններ և այլն:*
- *Սեփական իշխանությունը պահելու նպատակով կարող է քիմիական զենք կիրառել, ուստի անհրաժեշտ է հնարավոր բոլոր միջոցները ձեռնարկել դա կանխելու համար:*
- *Երկրում կան կարևոր նշանակություն ունեցող նավթամուղներ,*

2013, http://www.bbc.co.uk/news/world-africa-2495993

[12] Տե՛ս Benghazi the nerve centre as Libya protest turns to revolution, Lawyers, doctors and engineers attempt to take the city's destiny into their hands, The Guardian, 24 February, 2011, http://www.theguardian.com/world/2011/feb/24/libya-benghazi-muammar-gaddafi

[13] Տե՛ս **Shadid A., Fahim** K. Opposition in Libya Struggles to Form a United Front, New York Times, 8 March, 2011, http://www.nytimes.com/2011/03/09/world/africa/09rebels. html?_r=0

[14] Տե՛ս **Landler M**., Obama Tells Qaddafi to Quit and Authorizes Refugee Airlifts, New York Times, 3 March, 2011, http://www.nytimes.com/2011/03/04/world/africa/04president. html? r=0

[15] Տե՛ս «Libya: Gaddafi son Saif al-Islam says he is innocent», BBC news, 29 November, 2011, http://www.bbc.co.uk/news/world-africa-15503638

[16] Տե՛ս Информационная война против Ливии // http://meast.ru/article/informatsionnaya-voina-protiv-livii

նավթահորեր, որոնք պետք է պաշտպանել հարձակումներից: Քադաֆին սպառնացել է պայթեցնել նավթահորերը, հետևաբար անհրաժեշտ է փրկել լիբիական նավթը: Ի դեպ, նման սցենար կիրառվեց նաև իրաքյան պատերազմում, երբ հայտարարվեց, թե նավթահորերը պայթեցվում են:

- *Քադաֆին սպանվում է իր երկրի քաղաքացիների ձեռքով և դառնում ծաղրուծանակի առարկա:*

Սիրիայում 2011 թ. գրեթե նույն ձևով սկսվեցին հակակառավարական գործողությունները, այնուհետև՝ այսպես կոչված «քաղաքացիական պատերազմը»: Սկզբում Սիրիայում բարձրացավ դժգոհությունների ալիք, և շրջանառվեց, որ խաղաղության հաստատման համար Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադը պետք է հեռանա[17]: 2011 թ. մարտ ամսին մի շարք քաղաքներում, ինչպիսիք են Դամասկոսը, Հալեպը, Լաթակիան, Հոմսը և այլն, սկսվեցին հակակառավարական ցույցեր: Այդ ցույցերը ստացան «մարտի 18-ի հեղափոխություն» անվանումը, որտեղ ցուցարարները պահանջում էին ժողովրդավարական բարեփոխումներ և նախագահ Բաշար Ասադի հրաժարականը[18]: Տեղի ունեցան ահաբեկչական մի շարք գործողություններ, այդ թվում՝ Հալեպի համալսարանում, որի կազմակերպման պատասխանատվությունը փորձեցին գցել Սիրիայի ղեկավարության վրա:

Հայտնի լրատվամիջոցները հայտնեցին, թե Բաշար ալ Ասադը իր իշխանությունը պահելու համար պատրաստ է ամեն քայլի, այդ թվում՝ ինքնապաշտպանության նպատակով քիմիական զենք կիրառելուն: Քիմիական զենքի թեման շրջանառելով՝ մեծացան միջազգային ճնշումները, ընդ որում՝ լուրեր տարածվեցին, թե վարչակարգը քիմիական զինանոցը տեղաբաշխել է երկրի տարբեր հատվածներում, որը վնասազերծելու համար բազմաթիվ հարվածներ պետք է հասցնել: Եվրամիությունը մտցրեց պատժամիջոցներ Սիրիայի դեմ: Օգոստոս ամսին ՄԱԿ-ի ԱԽ ներկայացուցիչը հայտարարեց, որ մարդու իրավունքները խախտվել են, և Սիրիայի խաղաղ բնակչության հանդեպ իշխանությունների կողմից ուժ է կիրառվել:

Տեղեկատվական պատերազմների ոլորտում հայտնի մասնագետ Ի. Պանարինը, Լիբիայի և Սիրիայի դեմ կազմակերպված տեղեկատվական գրոհների վերաբերյալ հղում տալով ֆրանսիացի լրագրող Թիերի Մեյսոնին, հայտնում է, որ այս դեպքում կիրառվել են նոր մե-

---

[17] Տե՛ս **Arsu S**., Turkish Premier Urges Assad to Quit in Syria, New York Times, 22 November, 2011, http://www.nytimes.com/2011/11/23/world/middleeast/turkish-leader-says-syrian-president-should-quit.html

[18] Տե՛ս **Barnard A**., Damascus Puts on Pro-Assad Rally, but Protesters Won't Be Silenced, New York Times, 15, March 2012, http://www.nytimes.com/2012/03/16/world/ middleeast/syria-mass-damascus-rally-for-assad.html?_r=0

թողներ[19]. «Ալ-Ջազիրան» հրապարակել է տեսանյութեր և լուսանկարներ, որոնք արված էին հատուկ՝ արհեստական նկարահանման հրապարակներում՝ Սիրիայի (լիբիական բախումների ժամանակ՝ նաև Լիբիայի) գլխավոր քաղաքների հրապարակների նմանակումներով: Այս ամենի նպատակը իրական և ակտիվ պատերազմի տպավորություն ստեղծելն էր:

Սիրիական հակամարտության վերաբերյալ «Ասիա Թայմսը» գրում է, որ ընթանում է տեղեկատվական պատերազմ՝ ուղղված միջազգային կարծիքի ձևավորմանը: Հեղինակի կարծիքով, դա տեղեկատվական պատերազմների մի նոր մակարդակ է, ներկայացված իբրև մարդու իրավունքների և ժողովրդավարության հաստատման համար պայքար: Այն հիմնված է խեղաթյուրման, մանիպուլյացիայի, ստի և կեղծ տեսաժապավենների վրա[20]: Հատկանշական է, որ հոդվածի հեղինակը զուգահեռներ է անցկացնում սիրիական իրադարձությունների զարգացման և իրաքյան (2003) արշավի միջև: Վկայակոչելով ԿՀՎ ներկայացուցիչ Փոլ Փիլարին՝ նա նշում է, որ դա շարունակությունն է այն ձևաչափի, որը կիրառվում էր նախագահ Ջ. Բուշի կողմից Իրաքում: Այստեղ առկա է նույն մտայնությունը[21]:

Նմանություններ ենք տեսնում նաև հայտնի լրատվամիջոցների տեղեկատվության հաղորդման հիմնական ձևերում. օրինակ՝ քիչ են ներկայացված կամ ընդհանրապես բացակայում են հավաստի աղբյուրները, հղումները, վկայակոչումները: Տեղեկատվությունը կարող է փոխանցվել այնպես, որ տարածված լուրերը հերքվելու դեպքում նահանջի տեղ մնա: Մեղադրանքներն ու քննադատությունները ոչ թե կոնկրետ մեկ հարցի կամ երևույթի շուրջ են, այլ բաղկացած են շատ կետերից: Այն կետը, որը կունենա ավելի լայն արձագանք, դա էլ կսկսի խորացվել: Տեղեկատվական պատերազմների ժամանակ օգտագործվող հնարքներից է մեծ քանակությամբ և միաժամանակ իրարամերժ նորությունների տեղատարափը, որպեսզի ստեղծվի քաոսային իրավիճակ, լսարանը չկարողանա «թացը չորից» տարբերել: Ընդ որում՝ իրարամերժ տեղեկատվական հոսքերում հատուկ ուշադրության կենտրոնում է պահվում գլխավոր նպատակը, որը հետագայում պետք է քննարկվի ավելի մանրակրկիտ և ներկայացվի որպես հասարակության շահերից բխող տեղեկատվություն: Այն կարող է լինել չափազանցված և առաջացնել վախի մթնոլորտ, լարվածություն:

---

[19] Տե՛ս **Панарин И.** СМИ, пропаганда и информационные войны. Сирия и информационная война // http://propagandahistory.ru/books/Igor-Panarin_SMI--propaganda-i-informatsionnye-voyny/42

[20] Տե՛ս **Byrne A**., Covering Syria: The information war, Asia Times online, 12 July, 2012, http://www.atimes.com/atimes/Middle_East/NG12Ak01.html

[21] Տե՛ս նույն տեղը:

Իրաքյան, լիբիական և սիրիական իրադարձությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս հետևյալը.

- *նշված զարգացումների լուսաբանման մեջ նկատելի են որոշակի ընդհանրություններ: Իրաքի, Լիբիայի և Սիրիայի դեմ իրականացվող տեղեկատվական պատերազմների ընդհանրությունների (մարտավարական, տեղեկատվության հաղորդման հիմնական ձևերի և այլն) վերաբերյալ փաստում են նաև մի շարք օտարերկրյա լրագրողներ, «տեղեկատվական պատերազմների» ոլորտի մասնագետներ, վերլուծաբաններ և այլն:*
- *Տեղեկատվության տարածման հարցում բավականին ակտիվ են արևմտյան կողմնորոշում ունեցող ազդեցիկ լրատվամիջոցները, որոնք լուսաբանելիս ունեն հստակ նպատակներ: Հասարակական կարծիք ձևավորելու գործում կիրառվում են ինչպես տեղեկատվական պատերազմների ավանդական (ապատեղեկատվության տարածում, առաջնորդների բացասական կերպարի ստեղծում, վախի մթնոլորտի ստեղծում և այլն), այնպես էլ նորագույն (լիբիական, սիրիական քաղաքների հայտնի վայրերի նմանակումներով արհեստական նկարահանման հրապարակներում տեսանյութերի և լուսանկարների պատրաստում) միջոցներ:*
- *Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների համեմատական վերլուծությունից ակնհայտ է դառնում նշված իրադարձությունների կա՛մ նախապես պլանավորված լինելու, կա՛մ միևնույն սկզբնաղբյուրն ունենալու հանգամանքը:*
- *Նշված երկրների դեմ տեղեկատվական պատերազմների ուսումնասիրումը կարևոր նյութ է տալիս մեզ. մեր հանրապետությունը, շրջապատված լինելով թշնամական երկրներով, հեռու չի կարող մնալ տեղեկատվական-հոգեբանական գրոհներից: Նաև՝ հայտնի լրատվամիջոցները, սեփական շահերով առաջնորդվելով, կարող են համապատասխան հասարակական կարծիք ստեղծել մեզանում: Ուստի, հետագա մարտահրավերներին դիմակայելու համար այսօրինակ երկրների դեմ կիրառված փորձը, տեղեկատվական պատերազմների նորագույն մեթոդների հետազոտումը շատ կարևոր է մեզ համար:*

Բանալի բառեր – *տեղեկատվական պատերազմներ, համեմատական վերլուծություն, զանգվածային լրատվամիջոցներ, հասարակական կարծիք, քարոզչություն, քիմիական զենք*

АЙК НАЗАРЯН – ***Сравнительный анализ информационных войн против Ирака, Ливии, Сирии***. – Известно, что реальным военным действиям предшествуют (а с их началом сопровождают) информационные атаки, цель которых – оказать психологическое давление. Такого рода давление может привести к расколу сил противника. В условиях быстрого развития коммуникационных и информационных технологий государство, располагающее ими и устанавливающее "правила игры", может дискредитировать своих противников, представить их угрозой международной безопасности, демократии и т. д. В этом плане рассматриваются информационные войны, которые велись и ведутся против Ирака, Ливии, Сирии, а также сходство принципов, применяемых в этих войнах.

Ключевые слова: *информационные войны, сравнительный анализ, средства массовой инфпрмации, общественное мнение, пропаганда, химическое оружие*

HAYK NAZARYAN – ***Comparative Analysis of Information Warfare against Iraq, Libya, Syria.*** **–** It is known that military actions are preceded or at least followed by information and psychological activities. They are aimed to pressure the addressee and to influence it. Such actions could lead to the cleavage of the main forces of the counterparts, their demoralization. Nowadays the rapid growth of modern communication and information technologies enables the state which "sets the rules" of the game to present its counterpart countries as discredited, representing a threat, non-democratic and so forth. For these reasons, it is more than urgent to explore information warfares and the resemblances between the main principles of those warfares that were conducted against Iraq, Libya and Syria.

Key words: *information warfare, comparative analysis, mass media, public opinion, propaganda, chemical weapon*

ՊԱՐՉ-ՆԱՈՒՄԱՆԻ «ՄԻՋԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ» ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ

ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) հայեցակարգը տարածքների զավթման միջոցով ծավալվելու, կայսրություն ստեղծելու գերմանական հայեցակարգ է, որը պետք է ստեղծվեր Ավստրո-Հունգարիային Գերմանիայի միավորվելու միջոցով:

Միջին Եվրոպայի (Mitteleuropa) գաղափարի սկզբնավորման վերաբերյալ կան տարբեր տեսակետներ: Օրինակ՝ Ժերար Դենալտիի պնդմամբ՝ Mitteleuropa-ն (Mitteleuropa - գերմաներենից թարգմանաբար նշանակում է միջին կամ կենտրոնական Եվրոպա) որպես քաղաքական կառույց ի հայտ է եկել ի հակակշիռ նապոլեոնական Եվրոպայի և իր տեսակի մեջ հակաեվրոպա է եղել: Յոզեֆ Կրուտվորի կարծիքով՝ Արևմուտքի, Արևելքի և Կենտրոնականի բաժանված Եվրոպայի գաղափարը մշակել է կանցլեր Մետերնիխը. նա պնդում էր, որ միապետական Ավստրիան պետք է «հոգ տանի» Կենտրոնական Եվրոպայի «սեպի» մասին, որպեսզի պաշտպանի այն ավելի մասշտաբային բաժանումներից: Բայց քանի որ, ինչպես նշում է Յորգ Բրեխտեֆելդը, Վիեննայի կոնգրեսը 1815 թ. գերտերություններին արգելել էր սահմանների փոփոխության համար ուժ կիրառելը, այդ իսկ պատճառով Mitteleuropa-ի գաղափարի պաշտպանները առաջին հերթին զարգացրին Mitteleuropa-ի տնտեսական և մշակութային հայեցակարգերը[1]: Հենց այս պատճառով էլ որոշ տեսաբաններ Mitteleuropa-ի գաղափարը կապում են Ֆրիդրիխ Լիստի տնտեսական հայեցակարգի հետ[2]:

Եվ այսպես, Mitteleuropa-ի հայեցակարգը գիտական շրջանառության մեջ մտավ 19-րդ դարի կեսերին տեսաբան-տնտեսագետ Ֆրիդրիխ Լիստի կողմից, ում անվանում են «Միջին Եվրոպայի առաջին մարգարե»: Լիստի Mitteleuropa-ի տնտեսագիտական գաղափարն այնուհետև զարգացրին Կոնստանդին Ֆրանցը, Կառլ Լյուդվիգ ֆոն Բուրկը և Պաուլ դե Լագարդը[3]:

---

[1] Տե՛ս **Brechtefeld J.** Mitteleuropa and German politics, 1848 to the present. New York: St. Martin's Press, 1996 (**Буховски М., Колбон И.** От Mitteleuropa до Центральной Европы: очерк развития идеи // «Журнал исследований восточноевропейского пограничья». Вильнюс, 2006, էջ 112-138):

[2] Տե՛ս **List F.** The national system of political economy. New York: Longman 1904 :

[3] Տե՛ս **Meyer H.** Mitteleuropa in German Thought and Action (1815-1945). The Hague,

Ֆրիդրիխ Լիստը միջինեվրոպական տնտեսական միության ստեղծման կողմնակից էր: Լիստը Միջին Եվրոպայի ստեղծումը կարևորում էր միասնական գերմանական պետության ստեղծման և նրա անվտանգ, ապահով գոյության համար: Նա ենթադրում էր, որ գերմանական պետության ապագան դեպի մայրցամաք էքսպանսիան է:

Միջին Եվրոպայի քաղաքականության (Mitteleuropapolitik) գաղափարը վերջնական ձևակերպում ստացավ Վիլհելմ II-ի իշխանության տարիներին, որի նպատակը ոչ միայն գաղութային պետության ստեղծումն էր, այլև Գերմանիան Եվրոպա մայրցամաքի առաջատար պետություն դարձնելն էր: Նա խնդիր էր դրել ստեղծել տարածաշրջանային քաղաքական կազմավորում, որը կկարողանար դիմակայել Ֆրանսիային, Անգլիային և Ռուսաստանին: Եվրոպայում գերմանական էքսպանսիայի ուղղությունը որոշվել էր դեռևս վաղուց հայտնի թռիչք դեպի Արևելք (Drang nach Osten) և կենսատարածք (Lebensraum) արտահայտություններում: Մի խոսքով՝ Կենտրոնական Եվրոպայի առաջին ծրագիրը պետք է ծառայեր գերմանական հզոր կայսրության ստեղծմանը[4]:

Mitteleuropa-ի աշխարհագրական հայեցակարգը զարգացում է ստացել գերմանացի աշխարհագրագետ Յոզեֆ Պարչի «Միջին Եվրոպա»[5] աշխատանքում, որը եվրոպական համադաշնության հայեցակարգ է, այսինքն՝ պետությունների համախումբ Գերմանիայի միջուկով, քանի որ հենց Գերմանիան էր Արևմտյան Եվրոպայում զբաղեցնում կենտրոնական դիրք[6]:

Յոզեֆ Պարչի «Mitteleuropa» գիրքը գերմանական քաղաքական և տնտեսական ընդհանուր գոտու ստեղծման ձգտումի արդյունք է: Պարչը գծել է մեծ Գերմանիայի քարտեզը, որը ձգվում էր Օստենդեից (Ժնևի միջով) մինչև Սև ծով[7]: Պարչի Mitteleuropa-ի մեջ էին մտնում հետևյալ պետությունները՝ Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Բելգիա, Հոլանդիա, Շվեյցարիա, Չեռնոգորիա, Սերբիա, Ռումինիա և Բուլղարիա[8]:

Միխայիլ Բուխովսկին և Իզաբել Կոլբոնը պնդում են, որ չնայած

1995 (**Баранов Н.** Срединная Европа Фридриха Наумана: становление концепции // "Известия Уральского гос. ун-та". Сер. 2. Гуманитарные науки. 2009, №3 (65), էջ 17-181):

[4] Տե՛ս **Буховски М., Колбон И.,** նշվ. աշխ.:

[5] Տե՛ս **Partsch J.** Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha, 1904:

[6] Տե՛ս **Крупнов Ю.** Минск должен стать столицей «Новой Центральной Европы» // (06. 05. 2011) // http://www.km.ru/bsssr/2011/05/06/soyuznoe-gosudarstvo-rossii-i-belorussii/minsk-dolzhen-stat-stolitsei-novoi-tsentra (13.05.2015)

[7] Տե՛ս **Partsch J.** Mitteleuropa. Gotha: J. Parthes, 1904:

[8] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, Map 1. «Central Europe», frontispiece:

Պարչի աշխատանքում աշխարհագրական և տնտեսական փաստարկները կազմում են աշխատանքի մեծ մասը, այնուամենայնիվ դրանք բոլորն էլ ստորադասված են հեղինակի աշխարհայացքային պատկերացումներին[9]:

Յոզեֆ Պարչի Մեծ Գերմանիայի գաղափարը պետք է հանգեր Պրուսիայի կողմից Կենտրոնական Եվրոպայի կառավարմանը[10]: Այս առիթով Յու. Տիխոնրավովը գրում է, որ երբ Պրուսիան պայքարում էր «բնական սահմանների» սեփական դոկտրինի ներքո Գերմանիան իրեն միացնելու համար, գործընթացը զարգացավ երկու ուղղությամբ՝ «բնական լեզվական սահմանների» («Փոքր Գերմանիայի» գաղափարը) և «բնական ռելիեֆային սահմանների» («Մեծ Գերմանիայի»): Եթե առաջին ուղղությունը նախատեսում էր մեկ պետության մեջ բոլոր այն տարածքների միավորումը, որոնք բնակեցված էին գերմանական ծագում ունեցող մարդկանցով, ապա երկրորդը նախատեսում էր, այսպես կոչված, Մեծ Գերմանիայի ստեղծումը, որի կազմի մեջ պետք է մտնեին ոչ միայն Ավստրիան, այլև Լեհաստանի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Բելգիայի, Հոլանդիայի, Լյուքսեմբուրգի, Շվեյցարիայի տարածքների մի մասը[11]:

Պարչի կարծիքով՝ քաղաքակրթական գերազանցությունը և դեմոգրաֆիական առավելությունը նրան տալիս էին այդ իրավունքը: Այդ կազմավորման սահմաններում գերմանացիները պետք է կազմեին ամբողջ բնակչության 51.1 %-ը[12], ամբողջ տարածքում (բացառությամբ «Սերբիայի և Չեռնոգորիայի հետամնաց շրջանների») հաղորդակցության լեզուն պետք է լիներ գերմաներենը: Գործնականում այն պետք է ընդգրկեր գերմանալեզու ազգությունները, այդ իսկ պատճառով էլ կապված է «ժողովուրդ» (Volk) բառի հետ: Եվ ինչպես Էռնստ Արնդտի հեղափոխական երգում է հնչում. «Գերմանիան պետք է լինի ամենուր, որտեղ կլսվի գերմաներենը»[13]:

Հետագայում այս պանգերմանական գաղափարը առավել զարգացում ստացավ լյութերական քահանա, հրապարակախոս, քաղաքական գործիչ Ֆրիդրիխ ֆոն Նաումանի կողմից՝ նույնանուն «Mitteleuropa»[14] գրքում:

---

[9] Տե՛ս **Буховски М., Колбон И.,** նշվ. աշխ.:

[10] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, էջ 141:

[11] Տե՛ս **Яковюк И.** Идея срединной Европы в концептуальных разработках европейских геополитиков второй половины XIX–начала XX вв.: историко-теоретический анализ // PolitBook, 2013-14, № 3. էջ 132-151:

[12] Տե՛ս **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, էջ 141:

[13] **Буховски М., Колбон И.** նշվ. աշխ.:

[14] Տե՛ս **Науманн Ф.** Срединая Европа (Mitteleuropa). Петроград, 1918.

Ֆրիդրիխ Նաումանի և Յոզեֆ Պարչի ծրագրերը, նախատեսում էին Ավստրո-Հունգարիայի հետ Գերմանիայի միջուկով Կենտրոնական Եվրոպայի տարածության ստեղծումը: Սակայն, բացի Ավստրո--Հունգարիայից, Միջին Եվրոպայի կազմի մեջ պետք է մտնեին նաև Չեռնոգորիան, Ալբանիան, Ռումինիան և Բուլղարիան:

Ֆրիդրիխ Նաումանը մանրամասն վերլուծում է հնարավոր քաղաքական կազմավորման պատմական, կրոնական, ազգային, տնտեսական, մաքսային և սահմանադրական հարցերը: Դրա հիմքում, ինչպես Յոզեֆ Պարչի մոտ, Գերմանիայի և Ավստրո-Հունգարիայի միացումն էր:

Նաումանը գտնում էր, որ Միջին Եվրոպայի բոլոր պետություններն ունեն միևնույն «աշխարհագրական ճակատագիրը». դրանք չունեն «բնական սահմաններ»: «Միջին Եվրոպան», ի տարբերություն պանգերմանական ազգայնական այլ գաղափարների, մաքուր երկրաքաղաքական (գեոքաղաքական) հասկացություն է, որտեղ կենտրոնական տեղը զբաղեցնում է ոչ թե էթնիկ միասնությունը, այլ աշխարհագրական ճակատագրի ընդհանրությունը[15]:

Սա մայրցամաքում աշխարհագրական այն տարածությունն է, որը գերազանցելու է Գերմանիայի սահմանները, որտեղ գերմանացիները պետք է ունենան ռազմավարական գերիշխանություն[16]: Ստյուարտ Էլդենը նշում է, որ այս գաղափարը իր փաստարկներով նման է «տարածք առանց ժողովրդի» մոտեցմանը, որը պետք է լցվեր այնպիսի ժողովրդով, որը կա՛մ չունի տարածք, կա՛մ որի տարածքը բավարար չէ[17]:

Միջին Եվրոպայի հայեցակարգը պետք է դիտարկել որպես Գերմանիայի համար կենսատարածքի ապահովման և գերտերության կարգավիճակի պահպանման ուղիներից մեկը:

Այս ծրագիրը մշակողները, մասնավորապես Ֆ. Նաումանը, կայսերական ծավալապաշտության քաղաքականության կողմնակիցներ էին, և, ինչպես նշում է Օ. Կորենչուկը, Միջին Եվրոպայի հայեցակարգը, ըստ էության, պանսլավոնական ծրագրերի դեմ արձագանքն է և ուղղված է եղել ընդդեմ Արևելյան և Հարավային Եվրոպայի ժողովուրդների վրա Ռուսական կայսրության ազդեցության[18]:

Հարկ է նշել, որ ոչ միայն պետության, այլև ցանկացած միջպետական կազմավորման համար սկզբունքային և կարևորագույն հարցը սե-

---

[15] Տե՛ս **Тихонравов Ю.** Начала геополитики // http://vasilievaa.narod.ru/gu/stat_rab/book/Geopolitika/2-36.aspx.htm (13.05.2015)

[16] Տե՛ս **Elden St**. Reading Schmitt geopolitically. nomos, territory and Großraum. Radical Philosophy, № 161, May/June 2010, էջ 18-26:

[17] Տե՛ս նույն տեղը:

[18] Տե՛ս **Коренчук О.** Идея срединной Европы и ее отражение в работах Ф. Науманна. Legea şi viaţa, Moldova, № 8/3 (272) 2014, էջ 78-80:

փական տարածքների սահմանները որոշելն է[19]: Mitteleuropa-ն երկրաքաղաքական հայեցակարգ է, որն արտահայտում է Գերմանիայի ձգտումը՝ ճշգրտելու սեփական աշխարհագրական տարածքները մյուս պետությունների հաշվին սեփական կենսատարածքը ընդլայնելու միջոցով:

Ընդհանրապես գերմանական երկրառազմավարական միտքը հիմնված է տարածքային էքսպանսիայի սկզբունքի վրա:

Ֆ. Ռատցելը, լինելով պետության օրգանական ծագման տեսության կողմնակից, ձևակերպել է «տարածություն» (Raum) կատեգորիայի նոր բովանդակություն: Ըստ նրա՝ տարածությունը քանակական-նյութական կատեգորիայից փախակերպվում է նոր որակի՝ վերածվելով «կենսատարածքի» (Lebensraum), ինչը իր հերթին պայմանավորում է այնպիսի հասկացությունների առաջացումը, ինչպիսիք են՝ «տարածական զգացողությունը» (Raumsinn) և «կենսաէներգիան» (Lebensenergie), որոնք բնորոշում են աշխարհագրական համակարգերը՝ նախորոշելով նրանց քաղաքական ձևակերպումները[20]:

Ռ. Չելենը ևս մեծ կարևորություն էր տալիս «տարածք» կատեգորիային. նրա կարծիքով՝ տարածքը կյանքի աղբյուրն է և պետության ուժը:

Ռատցելը նաև փորձել է հիմնավորել այն գաղափարը, համաձայն որի՝ տարածական էքսպանսիան օրինաչափ, բնական գործընթաց է: Իր՝ «Պետության տարածական աճի օրենքների մասին» հոդվածում Ռատցելը ձևակերպել է էքսպանսիայի յոթ օրենք. 1. պետության մշակույթի զարգացումը նպաստում է նրա տարածքի ավելացմանը (նա ենթադրում էր, որ մշակույթի տարածումը գործի է գցում մշակութային ժողովուրդների գերաճի գործընթացի ինքնաարագացման մեխանիզմը. բնակչության թվաքանակի աճը պայմանավորված է մշակույթի զարգացմամբ ինչպես հին, այնպես էլ նոր մշակութային կենտրոններում)[21], 2. պետության տարածական աճը ուղեկցվում է գաղափարական, տնտեսական, կրոնական (պրոզելիտիզմի (դավանափոխության) քաղաքականություն) ոլորտների աճով, 3. ընդլայնման գործընթացում պետությունը կուլ է տալիս, կլանում է պակաս նշանակություն ունեցող քաղաքական միավորներին, 4. սահմանները պետության ծայրամասային օրգաններն են և որպես այդպիսին վկայում են նրա աճի և ուժի կամ, ընդհակառակը, թուլության և անկման (նվազման) մասին, 5. էքսպանսիայի քաղաքականությունը ենթադրում է պետության կողմից իր

[19] Տե՛ս **Яковюк И.,** նշվ. աշխ.:

[20] Տե՛ս նույն տեղը:

[21] Տե՛ս **Ратцель Ф.** Народоведение: в 2 т. Т. 1. СПб., 1900. էջ 11, 13-14 (**Яковюк И.** նշվ. աշխ., էջ 132-151).

զարգացման համար առավել կարևոր նշանակություն ունեցող շրջանների (հարուստ տարածքների) գրավումը, 6. էքսպանսիայի համար խթանը առաջանում է պետության սահմաններից դուրս, քանի որ պետությունը «դրդվում» է էքսպանսիայի ավելի ցածր քաղաքակրթական զարգացմամբ հարևան քաղաքական միավորումների կողմից (նրանց հաշվին), 7. թույլ ազգերին կլանելու և ձուլելու ընդհանուր միտումը պետությանը մղում է տարածքների էլ ավելի ընդլայնման[22]:

Ընդհանուր առմամբ՝ սա Ռատցելի կողմից էքսպանսիան որպես օրինաչափ գործընթաց ներկայացնելու փորձ է, որն ուղղված է միայն գերտերությունների զարգացմանը, ինչը տեղի է ունենում մյուս պետությունների հաշվին: Սա փաստացի նշանակում է, պետությունների սուվերեն հավասարության սկզբունքի հերքում, քանի որ պետությունները բաժանվում էին քաղաքակիրթ, սուվերեն պետությունների և ոչ քաղաքակիրթ պետությունների, որոնք ունեին գոյության իրավունք այնքան ժամանակ, քանի դեռ գերտերությունները հետաքրքրություն չէին դրսևորել նրանց տարածքների և ռեսուրսների նկատմամբ[23]:

Սա միգուցե երկրաքաղաքական ռետրոսպեկտիվ (ինչո՞ւ չէ՝ նաև ռեակցիոն հայեցակարգ է, բայց քաղաքական ռեալիզմը գործնականում ապացուցում է սրա անփոխարինելիությունը:

Ինչևէ, անդրադառնանք Ֆրիդրիխ Նաումանի Mitteleuropa-ի հայեցակարգին: Ըստ Նաումանի՝ «Միջին Եվրոպան» ունենալու էր գերմանական առանցք[24]: Այսինքն՝ գերմանացիները գերակայելու էին Mitteleuropa-ում: Գերմանականության շուրջ ծնվելու էր Միջին Եվրոպայի մշակույթը[25]: Գերմանական առանցքին, ըստ Նաումանի, պետք է միավորվեին փոքր պետությունները, որոնք ունակ չեն գոյատևելու առանց մեծ տերությունների հետ դաշինքի[26]: Սակայն մինչև պետությունների միավորման մասին մտածելը պետք է նախ և առաջ ավարտին հասցնել գլխավոր միջուկի (առանցքի) բյուրեղացման գործընթացը[27]: Նաումանը լավ հասկանում էր, որ Mitteleuropa-ի ստեղծման ճանապարհին գոյություն ունեն և ունենալու են բազմաթիվ խոչընդոտներ: «Պետք է հասկանալ, որ փոքր ժողովուրդները ինքնակամ չեն միավորվի միջին եվրոպական միության կազմում»[28]:

---

[22] Տե՛ս **Ratzel F.** Die Gesetze des raumlichen Wachstums der Staaten. Ein Beitrag zur wissenschaftlichen politischen Geographie/ Petermanns Geographische Mitteilungen. 1986, Jg. 42, էջ 97-107:

[23] Տե՛ս **Яковюк И.,** նշվ. աշխ.:

[24] Տե՛ս «Срединная Европа» // **Дергачев В.** Геоэкономический словарь-справочник. Одесса, 2004 // http://politike.ru/dictionary/973/word/-sredinaja-evropa (15.07.2014)

[25] Տե՛ս **Науманн Ф.,** նշվ. աշխ., էջ 55:

[26] Տե՛ս «Срединная Европа» // **Дергачев В.** նշվ. աշխ.:

[27] Տե՛ս **Науманн Ф.,** նշվ. աշխ., էջ 3:

[28] Նույն տեղում, էջ 67:

Mitteleuropa-ի ստեղծման խոչընդոտների շարքում Նաումանը նշում է Պրուսիայի լեհերին, որոնք մեծ խնդիր են պետության համար, բայց, միևնույնն է, նրանք քիչ են, և հարկ չկա նրանց շատ լուրջ ընդունելու[29]: Այնուամենայնիվ, ելնելով նրա մյուս դատողություններից, այդ բոլոր դժվարությունները, խոչընդոտները հաղթահարելի են: Ուստի կայսերապաշտական ոգով գրում է. «Այսօր այլևս ժամանակավրեպ է հաշվի առնել միջին եվրոպական փոքր ժողովուրդներին՝ որպես մեծ ծրագրի իրագործման համար դրական մեծություններ»[30]: Նույն միտքը ասում է նաև Յոզեֆ Պարտչը. «Կենտրոնական Եվրոպայի մյուս հատվածները, ցանկանում են նրանք դա, թե ոչ, պետք է պատկանեն գերմանական քաղաքակրթական միջավայրին»[31]: Այս գաղափարը կապված է գերմանական «Blut und Boden» (արյուն և հող) ռասիստական դիսկուրսի հետ:

Գովերգելով իր ընկեր Ռորբախի գաղափարները՝ Նաումանը գրում է. «…. Ազգային մտածողություն ունեցող ոչ մի չեխ կամ հունգարացի չի դատապարտի մեզ այն բանի համար, որ մենք երգում, երազում և հոգ ենք տանում Գերմանիայի վեհացման մասին»[32]:

Mitteleuropa-ի ծրագրի իրականացման համար Նաումանը նշում է. «Մենք չենք հերքում նրանց (Ավստրո-Հունգարիայի - Հ. Ս.) ձևական իրավունքը՝ զբաղեցնելու մեզ համար ոչ բարենպաստ դիրքեր, սակայն մենք հաստատում ենք միայն այն, որ Ավստրո-Հունգարիայի կողմից միության (Mitteleuropa-ի. Հ. Ս.) գոյությանը սպառնացող գործողությունները հավասարազոր կլինեն նրանց ոչնչացմանը: Գերմանիայի հետ ավստրո-հունգարական դաշինքը ոչ թե բարոյական պարտք է, այլ սեփական ինքնապահպանման անխուսափելի անհրաժեշտություն»[33]:

«Միջին Եվրոպան կարելի է համեմատել լճի հետ, որտեղ լողում են ամենատարբեր տեսակի ձկներ: Միաձուլել այդ ամբողջը մեկ պետական օրգանիզմում և բերել մեկ քաղաքական հայտարարի՝ մարդկային ցանկացած տեսակի ուժը գերազանցող խնդիր է, բայց, -ինչպես կոնտյան և նիցշեական ոգով գրում է Նաումանը, -միևնույն ժամանակ՝ մեծագույն պետական գործիչներին արժանավայել նպատակ, որոնց կամքից է կախված պատմության ոգին»[34]:

Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը Նաումանը համարում էր պատերազմը, ուստի. «Եթե մենք պարտվենք, ապա, ամե-

---

[29] Տե՛ս **Буховски М., Колбон И.,** նշվ. աշխ.,

[30] **Науманн Ф.,** նշվ. աշխ., էջ 2:

[31] **Partsch J.** Central Europe / tłum. C. Black. New York: D. Appleton and Company, 1903, p. 142.

[32] **Науманн Ф.,** նշվ. աշխ., էջ 11:

[33] Նույն տեղում, էջ 24:

[34] Նույն տեղում, էջ 54:

նայն հավանականությամբ, դատապարտված կլինենք մնալու «ազգարբանյակ», եթե հաղթենք կիսով չափ, ապա ստիպված կլինենք ևս մեկ անգամ մտնել պայքարի մեջ, իսկ եթե մենք հաղթենք, ապա մենք կթեթևացնենք մեր երեխաների և թոռների գործը, և Միջին Եվրոպան կգրանցվի գալիք դարերի երկրային գրքի մեջ»[35]:

Mitteleuropa-ի հայեցակարգը պասիոնար էթնոազգային (պանգերմանական) տարածաշրջանային միավորում ստեղծելու հայեցակարգ է[36]:

Mitteleuropa-ն ոչ միայն ծրագրավորվող միավորման մեջ մտնող պետությունների աշխարհագրական տեղակայության, այլև որոշակի քաղաքակրթական երևույթ է: Ըստ Ա. Միլլերի՝ սա Եվրոպայի քաղաքակրթական քարտեզի հետ խաղերի և տարբեր սկզբունքներով այդ քարտեզը բաժանելու ձև է[37]: Ընդ որում, հենց Նաումանի կարծիքով, պատերազմը երկրամասը բաժանելու նախադրյալ է և Mitteleuropa-ի ստեղծման համար լավագույն առիթը համարում էր հենց պատերազմը:

Միջին Եվրոպան բնորոշում է պետությունների երկրաքաղաքական ինքնությունը՝ ձևավորելով «միջքաղաքակրթական գոտի»[38]: Այն ունի իր երկրաքաղաքական ինքնությունը, քանի որ միջանկյալ դիրք է գրավում ատլանտականության և եվրասիականության միջև[39]:

Հարկ է նշել, որ սա, ըստ էության, նաև նոր ինքնության ձևավորման հայեցակարգ է, քանի որ երկրաքաղաքական պատկանելությունն ավելի շարժական է, քան քաղաքակրթականը: Այդ առթիվ Նաումանը գրում է. «Մենք պատմական կիսաֆաբրիկատ ենք. գերմանացիների շուրջ ձևավորվում է Միջին Եվրոպայի մշակույթը, ձևավորվում է միջին եվրոպացին: Մենք պետք է պատերազմից վերադառնանք որպես միջին եվրոպացիներ»[40]:

Հենց էթնոազգային գիտակցության գոյության շնորհիվ (մշակութային արժեքների, զգացմունքների, պատկերացումների, գաղափարների, կարծրատիպերի, սիմվոլների և նույնիսկ գաղափարական առասպելների) գերմանացիները որպես էթնիկական հանրույթ մարդկության էթնիկ բազմազանության համակարգի մեջ իրենց պատմականորեն հիմնավորված սոցիալ-մշակութային տեղանքը (տեղակայութ-

---

[35] Նույն տեղում, էջ 94:

[36] Տե՛ս **Коренчук О.,** նշվ. աշխ.:

[37] Տե՛ս **Миллер А.** Восток Европы или к востоку от Европы // "Pro et Contra". Том 3. № 2, 1998, էջ 7-8:

[38] **Partsch J.** Mitteleuropa. Die Länder und Völker von den Westalpen und dem Balkan bis an den Kanal und das Kurische Haff. Gotha. 1904.

[39] Տե՛ս **Окара А.** Дурманящие иллюзии «Срединной Европы»: Европейский «континентализм» как манипулятор «Большой Евразией» // http://old.russ.ru/politics/ 20021022-okara-pr.html (11.03.2015)

[40] **Науманн Ф.,** նշվ. աշխ., էջ 6:

յունը) պետք է գտնեն: Եվ ինչպես նշում է գերմանացի գրող Է. Արնդտը. «Աստված մեզ տեղավորել է Եվրոպայի կենտրոնում. մենք (գերմանացիներս) աշխարհի մեր հատվածի սիրտն ենք»[41]:

Այս ամենով հանդերձ՝ հարկ է նշել, որ գոյություն է ունեցել «Միջին Եվրոպային» գրեթե նման մի հայեցակարգ ևս, որը կոչվում է «Եվրոպայի միջև» (Zwischeneuropa): Այն ընդգրկում էր Ռուսաստանի և Գերմանիայի միջև ընկած տարածքները, այսինքն՝ բալթյան հանրապետությունները, Լեհաստանը, նախկին Չեխոսլովակիան, Հարավսլավիան, Բուլղարիան և Ռումինիան: Zwischeneuropa-ի գաղափարը առաջ է քաշել Գիզելեր Վիրզինգը[42]: Նա պնդում էր, որ Կենտրոնական Եվրոպայի պետությունները չունեն ազգային (դիմա)գիծ (առանձնահատկություն), հետևաբար նրանց պետք է ընդգրկել «Մեծ Գերմանիայի» կազմի մեջ: Սա դեպի Grossraum (մեծ տարածք) և Lebensraum (կենսատարածք) ուղիղ ճանապարհն է[43]:

Մի խոսքով՝ գերմանական երկրաքաղաքական միտքը միշտ ձգտել է Lebensraum-ի ընդլայնմանը, այդ իսկ պատճառով էլ անընդհատ ծրագրերի փնտրտուքների մեջ է:

Եվ ինչպես իրենց ծավալուն հոդվածում նշում են Մ. Բուխովսկին և Ի. Կոլբոնը՝ Mitteleuropa-ի ծրագիրը, որը ստեղծվելու էր գերմանական հեռանկարով, ոմանց համար (նրանց, ովքեր երազում էին պան-գերմանականության մասին) հույս էր, իսկ ոմանց համար (նրանց, ովքեր կռվում էին բարիկադների մյուս կողմում, և որոնց համար Mitteleuropa-ն զուգորդվում էր «Բեռլին-Բաղդադ առանցքով» ագրեսիվ հայեցակարգերի հետ) սարսափի հայեցակարգ էր[44]:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ «Միջին Եվրոպայի» հայեցակարգը իդեալիստական ոգով, պասիոնար, սակայն երկրաքաղաքական և երկրառազմավարական հաշվարկներով տարածքների զավթման միջոցով կայսրություն ստեղծելու հայեցակարգ է:

Բանալի բառեր - *Միջին Եվրոպա, Գերմանիա, երկրառազմավարություն, տարածք, էքսպանսիա*

АЙК СУКИАСЯН – *Концепции “Срединной Европы” Парча–Наумана.* – В статье исследуется геополитическая концепция Срединной Европы, разработанная Йозефом Парчем и Фридрихом Науманом и получившая широкое распро-

[41] Նույն տեղում, տե՛ս նաև՝ **Яковюк И.** , նշվ. աշխ.:

[42] Տե՛ս **Wirsing G.** Zwischeneuropa und die deutsche Zukunft. Jena: Eugen Diederichs, 1932:

[43] Տե՛ս **Буховски М., Колбон И.** , նշվ. աշխ.:

[44] Տե՛ս նույն տեղը:

странение в немецких политических кругах в период Первой мировой войны. По сути дела, посвящённая империям и их пассионарному духу, она анализирует геостратегическое положение Германии. Mitteleuropa – теория создания за счёт оккупации территорий империи, которая объединит Австро-Венгрию с Германией.

Ключевые слова: С*рединная Европа, Германия, геостратегия, территория, жизненное пространства, экспансия*

HAYK SUKIASYAN – ***Partch-Naumann's Concepts of "Middle Europe".*** – The article studies the geopolitical concept of Middle Europe of Friedrich Naumann and Joseph Partch. This concept had a huge turnover in the German political circles during the First World War. In fact, this concept is characteristic for empires and for their passionate spirit, which describes the geostrategic position of Germany in the Middle Europe. Mitteleuropa – a concept of establishment of an empire due to occupied territories through the expansion of the concept, which will be created by the merger of Austro-Hungary with Germany.

Key words: *Middle Europe, Germany, geostrategy, territory, living space, expansion*

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԸ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Հանրային կառավարման կարևորագույն բաղադրիչ է պետության և հասարակության միջև հաղորդակցության ապահովումը: Զանգվածային հաղորդակցման միջոցները ժամանակակից հասարակական կյանքի անբաժան մասն են դարձել: Որոշակիորեն սոցիալական վերահսկողություն և կառավարում իրականացնելով՝ ԶԼՄ-ն ազդում է հասարակական կարծիքի ձևավորման վրա, տարածում գիտելիքներ, փորձ ու մշակութային արժեքներ, ազգաբնակչության ամենալայն խավերին տեղեկատվություն մատուցում, կատարում հասարակական հարաբերությունների աջակցման ու ամրապնդման կարևորագույն գործառույթներ և այլն: Ներկայումս տեղեկատվության ապահովումը մեծ դեր է խաղում հասարակական կարծիքի ձևավորման, հանրային ինստիտուտների գործունեության և մարդկային կյանքի հետագա զարգացման հարցերում[1]:

ՀՀ անկախացումը և քաղաքական կառավարման ժողովրդավարական ուղու որդեգրումը բազմաթիվ խնդիրներ և մարտահրավերներ առաջադրեցին հայաստանյան հասարակությանը: Նշյալ խնդիրներից առավել կարևոր էր հասարակության ինքնակազմակերպման, հասարակական նոր տիպի հարաբերությունների և դրանց գործունեությունն ապահովող համակարգի ձևավորումը: Սրա հաջող իրականացման համար անհրաժեշտ էր հասարակությունում առկա արժեքների վերանայում, ժողովրդավարության տարածում և կիրառում, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու հանրային կառավարման համակարգի ձևավորում: Սոցիալ-տնտեսական և քաղաքական արմատական վերաձևումները, որոնք իրականացվում են ամբողջ աշխարհում, պայմանավորում են գործունեության շատ ոլորտների, այդ թվում՝ կառավարման դերի և նշանակության լուրջ փոփոխություններ: Այդ ոլորտների թվում պետք է նշել զանգվածային լրատվության միջոցները: Հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացումը և գլոբալ տեղեկատվական ցանցերի ստեղծումն արմատապես փո-

[1] Տե՛ս **Каримова Н. И.** Телевидение как политико-коммуникативный институт формирования имиджа российских политиков // "Казанская наука", 2010, № 8, էջ 848-851:

խում են համաշխարհային տնտեսական, տեղեկատվական հոսքերի պատկերը:

Ժամանակակից աշխարհում փոփոխվող իրադարձությունները ներկայիս տնտեսական և ֆինանսական, գիտական և տեղեկատվական շուկայի աննախադեպ զարգացման հիմք են: Պակաս կարևոր չէ այն, որ զանգվածային լրատվության միջոցները գնալով նորանոր լսարաններ են նվաճում՝ նպատակ ունենալով բավարարել յուրաքանչյուրի տեղեկատվական պահանջներն անհատապես: ԶԼՄ ասելով պետք է հասկանալ հաստատություն, որը ստեղծված է տեղեկատվության բաց, հրապարակային փոխանցման համար՝ օգտագործելով հատուկ տեխնիկական միջոցներ: Անվիճելի է, որ գիտելիք տարածողի և քաղաքական նշանակության տեղեկատվության կրողը ԶԼՄ-ն է[2]: Մեկ այլ բնորոշմամբ՝ ԶԼՄ-ն ուղղված է հասարակության լայն զանգվածների վրա գաղափարահոգեբանական ազդեցություն ունեցող և լսարանին որոշակի գործողությունների մղող տեղեկատվություն մատուցելուն: Ըստ «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի[3]՝ ԶԼՄ են համարվում թերթերը, հանդեսները, փաստավավերագրերը, տեղեկագրերը և պարբերականները, որոնք պարբերաբար հրատարակվում են 100 օրինակից ավելի տպաքանակով, ինչպես նաև հեռուստառադիոծրագրերը, կինովավերագրերը, որոնք հրապարակայնորեն պարբերաբար տարածում են լուրեր և տեղեկություններ:

ԶԼՄ-ն երկրի հանրային կառավարման համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից է, որոնք միևնույն ժամանակ ժողովրդավարական համակարգի և քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից են, քանի որ հնարավորություն են տալիս բնակչությանն ստանալ և տարածել տեղեկատվություն: Դրանք բարդ, բաց համակարգ ունեցող կառույցներ են, որոնք օժտված են արտաքին և ներքին փոփոխվող միջավայրին նպատակաուղղված հարմարվողականությամբ և ինքնակառավարմամբ, իրենց զարգացման ինքնակարգավորման յուրահատուկ հատկություններով[4]: Հանրային կառավարման համակարգը կենդանի օրգանիզմ է, որտեղ յուրաքանչյուր առանձին օրգան իր դերն ու գործառույթն ունի՝ ի նպաստ ընդհանուրի: Այս համատեքստում սոցիալական ինստիտուտները կարող են ներկայացվել որպես կենսականորեն անհրաժեշտ որոշակի օրգաններ: Նման օրգանիզմում գլխուղեղի դերը կատարում են երկրի իշխանությունները, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները՝ արյունատար անոթների դերը, իսկ կենտրոնական նյարդային համակարգի դերն անվերապահորեն պատկանում է ԶԼՄ-ին: Այսինքն՝

[2] Տե՛ս **Прохоров Е. П.** Введение в теорию журналистики. М., 2002, էջ 21:

[3] Տե՛ս «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքը, հոդված 3 (ՀՕ-14, 13. 12. 2003 թ.):

[4] Տե՛ս **Чижма В. С.** СМИ как подсистема культуры // "Омский научный вестник", 2010, № 3 (88), էջ 254-257:

ԶԼՄ-ն ոչ միայն տեղեկատվություն է հաղորդում, այլև պարտավոր է ժամանակին տեղեկացնել ամբողջ օրգանիզմի տարբեր համակարգերում առկա խնդիրների և թերությունների մասին, մասնավորապես հասարակության մեջ անառողջ գործընթացները ժամանակին կանխելու և կարգավորելու առումով[5]:

Յուրաքանչյուր ժողովրդավարական, իրավական, օրինական պետության համար անչափ կարևոր է տեղեկատվական ազատությունը: Տեղեկատվությունը ժողովրդավարության «թթվածինն» է: Եթե քաղաքացիները չգիտեն, թե ինչ է կատարվում իրենց հասարակությունում, եթե նրանց ղեկավարների գործողությունները քողարկված են, ապա նրանք չեն կարող ակտիվորեն մասնակցել հասարակական կյանքին: Բացի այդ՝ տեղեկատվությունը կարևոր է ոչ միայն քաղաքացիների համար, այլև լավ կառավարման անհրաժեշտ պայման է[6]:

ՀՀ-ում այսօր զգացվում է հասարակական ինստիտուտների, այդ թվում՝ զանգվածային լրատվության միջոցների գործառույթների ընկալման պակաս, հասարակական գործընթացներին անհատների մասնակցությունը շատ թույլ է: Հանրային կառավարման համակարգի ազատականացման և կայացման հիմքի վրա օբյեկտիվորեն բարձրացել է զանգվածային լրատվության կազմակերպման դերը ներքին տնտեսական հարաբերությունների ճիշտ ձևավորման և ընդլայնման բնագավառում: Անցումը շուկայական տնտեսության հնարավորություն է ստեղծել աստիճանաբար զարգացնելու անկախ լրատվամիջոցներ ունենալու հայեցակարգը, որը հաշվի է առնում երկրում զարգացող տնտեսական հարաբերությունների առաջավոր փորձը:

Հայաստանի ներկա լրատվական դաշտի ձևավորման ընթացքը հարկ է դիտարկել 1985 թ. սկսած, երբ հռչակվեց «վերակառուցումը» և թուլացավ խորհրդային համակարգը: Այդ գործընթացը կարելի է բաժանել մի քանի հիմնական փուլերի.

- ✓ ազատականացում և ազգայնացում – 1985 թ.-1990-ական թթ. կեսեր,
- ✓ տպագիր մամուլի ոսկեդար - 1990-ական թթ. կեսեր – 1993 թ.,
- ✓ ճգնաժամ և փորձություն - 1993-1995 թթ.,
- ✓ Ճգնաժամի հաղթահարում և առաջընթաց - 1996-2001 թթ.,
- ✓ բարիկադավորում և քարոզչականացում - 2002-2006 թթ.,
- ✓ ցանցայնացում և մրցակցության աճ – 2007 թ. մինչև այժմ:

Վերջին փուլը կարելի է համարել առցանց մամուլի առաջխաղացման և դրանից բխող փոխակերպումների շրջան : Սկզբնական փուլում առցանց լրատվամիջոցները ՀՀ ներքին կյանքում լուրջ դերակատա-

[5] Տե՛ս **Wilson T.** Management, information and power: a narrative of the involved manager // Information Processing & Management, 1998, T. 34, № 4, էջ 507-509:

[6] Տե՛ս **Воскресенский Ю.** Понятие «средства массовой информации»: роль коммуникации и СМИ в политической системе общества // "Юрист", 2005, № 6, էջ 36-39:

ռում չունեին, դրանք ստեղծվեցին 2000 թ.-ից սկսած: Երկրում համացանցի մատչելիացմանը զուգընթաց ձևավորվեց նաև առցանց լրատվամիջոցների ներքին լսարանը, և մեծացավ դրանց նշանակությունը[7]:

Վերջին տարիներին, ՀՀ հանրային կառավարման այլ ոլորտներում իրականացվող բարեփոխումներին զուգահեռ, լրատվամիջոցների առավել արդյունավետ գործունեության անհրաժեշտություն առաջացավ, որի կարգավորման առաջնային նպատակն անկախ և բազմակարծիք լրատվամիջոցների խթանումն է՝ այդպիսով ապահովելով բնակչության՝ տարաբնույթ աղբյուրներից տեղեկատվություն ստանալու իրավունքը: Թեև լրատվամիջոցների ազատության իրավունքը բացարձակ չէ, և որոշ առանձնահատուկ դեպքերում այն կարող է սահմանափակվել՝ պայմանավորված այդ իրավունքի հիմնարար նշանակությամբ, այնուամենայնիվ դրա սահմանափակումները պետք է լինեն հստակ և որոշակիորեն սահմանված՝ օրենքի գերակայության սկզբունքներին համապատասխան: Ցանկացած մարմին, որը լիազորված է կարգավորելու լրատվամիջոցները, պետք է ամբողջապես անկախ լինի կառավարությունից և պաշտպանված՝ քաղաքական և գործարար շրջանակների միջամտությունից[8]:

ՀՀ անկախացումից հետո հեռուստատեսության և ռադիոյի ոլորտում բարեփոխումների համալիր ծրագիր իրականացնելու անհրաժեշտություն առաջացավ, որը այդ ոլորտի գործունեության կարգավորման և հետագա զարգացման հիմք ստեղծեց: Նկատի առնելով հեռուստատեսության առանձնահատուկ դերն ու նշանակությունը, հասարակական կարծիքի ձևավորման վրա ունեցած հսկայական ազդեցությունը, ինչպես նաև հայրենական և սեփական արտադրության հաղորդումների պահանջարկը՝ որոշվեց.

✓ մշակել եթերային նոր քաղաքականություն՝ ապահովելով հեռուստաեթերի թեմատիկ բազմազանությունն ու լուսաբանման բազմակողմանիությունը,

✓ կարևորվեց հեռուստատեսության և ռադիոյի դերը հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական տեղեկատվության մատչելիության ապահովման, համամարդկային արժեքների տարածման գործում: Որպես առաջնահերթություն նշվեց հեռուստառադիոընկերությունների ազատ գործելու և արտահայտվելու, ինչպես նաև հասարակության օբյեկտիվ ու անաչառ տեղեկատվություն ստանալու իրավունքի պաշտպանությունը,

✓ խնդիր դրվեց հստակեցնել հեռուստառադիոընկերությունների

---

[7] Տե՛ս «Իդեոլոգեմները ՀՀ տեղեկատվական տարածքում», Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2013 // http://www.noravank.am/upload/pdf/Idelogeme.pdf

[8] Տե՛ս «ՀՀ հեռարձակման ոլորտի օրենսդրության փոփոխությունների նախագծերի մեկնաբանություններ», // http://www.osce.org/hy/yerevan/36892?download=true

կարգավիճակը, կանոնակարգել դրանց հիմնադրման, արտոնագրման, ղեկավարման կարգը, գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները, իրավունքների ու պարտականությունների առաջացման հիմքերը,

✓ խնդիր դրվեց նաև առավել թափանցիկ դարձնել հեռարձակման արտոնագրի տրամադրման գործընթացը՝ ապահովելով լրատվության միջոցների ազատությունը, անկախությունն ու բազմազանությունը:

Այս խնդիրների ու մտադրությունների իրագործման նպատակով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հիման վրա 2001 թ. ստեղծվեց Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (ՀՌԱՀ), որն իրականացնում է գործադիր գործառույթներ և համարվում է պետական անկախ մարմին[9]: Հանձնաժողովի նպատակն է ապահովել հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրումը, ինչպես նաև վերահսկել հեռուստառադիոընկերությունների գործունեության համապատասխանությունը օրենսդրության և լիցենզիայի պայմաններին՝ դրանով իսկ ապահովելով յուրաքանչյուրի խոսքի ազատության իրավունքի իրականացումն ու պաշտպանությունը: Հանձնաժողովի առաջին կազմը նշանակվել է 2001 թվականի մարտի 19-ին՝ ՀՀ Նախագահի ՆՀ-839 հրամանագրով: Այն բաղկացած է ութ անդամից. անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի կողմից, իսկ մյուս կեսին նշանակում է ՀՀ Նախագահը[10]:

Պետական կառավարման համակարգի և ԶԼՄ-ի փոխհարաբերությունները բնութագրվում են մի շարք ներքաղաքական, տարածաշրջանային և այլ հանգամանքներով ևս: 1995 թ. ընդունված ՀՀ Սահմանադրությամբ ՀՌԱՀ-ի ձևավորման մենաշնորհը պատկանում էր ՀՀ Նախագահին, նոր Սահմանադրությամբ դրանք բավականին փոփոխություն են կրել. այժմ ամրագրվում է, որ հեռարձակվող լրատվամիջոցների ազատության, անկախության և բազմազանության ապահովման նպատակներից ելնելով՝ օրենքով ստեղծվում է անկախ կարգավորող մարմին, որի անդամների կեսը վեց տարի ժամկետով ընտրվում է Ազգային ժողովի, իսկ մյուս կեսը նշանակվում է ՀՀ Նախագահի կողմից՝ վեց տարի ժամկետով: Ազգային ժողովն այդ մարմնի անդամներին ընտրում է պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ[11]:

Հեռուստառադիոհեռարձակման արտոնագրումն իրականացվում է ռադիոյի և հեռուստատեսության մասին ՀՀ օրենսդրությանը համա-

[9] Տե՛ս ՀՌԱՀ պաշտոնական կայք՝ http://www.tvradio.am
[10] Տե՛ս http://www.tvradio.am/hrah.html
[11] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 83.2, 2005 թ.:

պատասխան[12]: ԶԼՄ-ի իրավական կարգավիճակը, դրանց հիմնադրման, աշխատանքների կազմակերպման և գործունեության դադարման հիմքերն ու կարգը սահմանված են 2003 թ. դեկտեմբերի 13-ին ընդունված «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքով: Նման օրենք ունեն ԱՊՀ անդամ բոլոր պետությունները:

Ցանկացած պետական մարմին, որը լիազորված է կարգավորելու լրատվամիջոցների գործունեությունը, պետք է ամբողջովին անկախ լինի կառավարությունից և պաշտպանված լինի քաղաքական ու գործարար շրջանակների միջամտություններից: Հակառակ դեպքում լրատվամիջոցների կարգավորումը հեշտությամբ կդառնա քաղաքական կամ առևտրային նպատակներով չարաշահման առարկա[13]: Անկախ հանրային հեռարձակումը ժողովրդավարության[14] հիմնական հատկանիշներից է, որն անհրաժեշտ է ընտրությունների ազատությունը և թափանցիկությունն ապահովելու, ատելություն պարունակող ելույթների դեմ պայքարելու և երկրի փոքրամասնությունների մշակութային ժառանգությունը պաշտպանելու համար՝ օբյեկտիվ նորություններ առաջարկելու և բարձրորակ ծրագրեր հեռարձակելու միջոցով:

Եվրոպայի խորհրդին անդամակցությունից ի վեր Հայաստանն ստանձնել է մի շարք պարտավորություններ, որոնք ամրագրված են հատուկ հուշագրում: Եվրոպայի խորհրդի կանոնադրության 3-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անդամ պետք է ընդունի օրենքի գերակայության և իր իրավազորության սահմաններում բոլոր անձանց՝ մարդու իրավունքներով և հիմնարար ազատություններով օժտված լինելու սկզբունքները, ինչպես նաև համագործակցել արդյունավետ և բարեխիղճ՝ Խորհրդի նպատակին հասնելու համար (Եվրոպայի խորհրդի կանոնադրություն, 1949 թ.)[15]: Պետության կողմից մշակված օրենսդրական դաշտի կատարելագործման շնորհիվ ՀՀ-ում 2016 թ. հունվարի 1-ից կգործի թվայնացված հեռարձակում՝ ապահովելով առավել արդյունավետ կառավարման ընթացակարգեր:

Սկսած 2000-ական թթ.-ից՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը՝ ընդունել է ՀՀ-ին վերաբերող բազմաթիվ բանաձևեր՝ նվիրված լրատվամիջոցների ոլորտի կարգավորմանը: Ընդունվեցին մի քանի բանաձևեր, որոնք պետք է հաշվի առներ ՀՀ կառավարությունը՝ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար (ԵԽԽՎ-ն Հայաստանի ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների

---

[12] Տե՛ս ՀՀ օրենքը «Զանգվածային լրատվության մասին», հոդված 4, կետ 2 (ՀՕ-14, 13. 12. 2003 թ.):

[13] Տե՛ս ԶԼՄ-ի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կայքում՝ http://www.osce.org/fom

[14] Ավելի մանրամասն տե՛ս **Ա. Ս. Ալեքսանյան**, Քաղաքացիական ժուռնալիստիկան որպես քաղաքացիավարական գործոն, // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2013, № 141.6, էջ 24-34:

[15] Տե՛ս http://www.coe.int/hy/web/yerevan/the-coe/about-coe/overview

կատարման վերաբերյալ 1304 (2002 թ.) բանաձև, 2004 թվականի հունվարի 27-ի 1361 բանաձև, 2007 թվականի հունվարի 23-ի 1532 բանաձև, 2008 թվականի ապրիլի 17-ի 1609 բանաձև, 2009 թ.-ի հունվարի 27-ի 1643 բանաձև և այլն)[16]: ՀՀ-ում այդ ոլորտում իրականացվող բարեփոխումներն սկզբնական շրջանում այնքան էլ զոհացուցիչ չէին՝ հետագայում արձանագրվեց որոշ առաջընթաց: Օրենսդրական բարեփոխումները միշտ չէ, որ կշռադատված են լինում: Հաճախ դրանք չեն ունենում անհրաժեշտ ներգործություն, ինչն արժեզրկում է այդ կարգի նախաձեռնությունների բուն գաղափարը: Օրենքների անկատարությունն այսօր որոշակի խոչընդոտներ է ստեղծում ԶԼՄ-ի զարգացման համար:

Այսպիսով, չնայած վերջին շրջանում իրականացված լուրջ բարեփոխումներին՝ այսօր ՀՀ-ում վաղ է խոսել ազատ, անկախ, արդյունավետ, վերահսկող չորրորդ իշխանության լիարժեք գործունեության մասին: Կան շատ խնդիրներ. օրինակ՝ օրենսդրական դաշտի թերի լինելը, տակավին լուծված չէ հեռարձակման արտոնագրման տրամադրման գործընթացը, դրանց տրամադրումը և երկարաձգումը սահմանող չափանիշը պետք է հստակ նշվի օրենքում: Մեր իրականության մեջ տարածված է նաև զանգվածային լրատվամիջոցների միջև խտրականություն դնելը՝ ՀՀ օրենսդրությունը պետք է ապահովի յուրաքանչյուր ԶԼՄ-ի համար համահավասար հնարավորություն: Ամենօրյա աշխատանքի ընթացքում իշխանական թևերն առանց հիմնավոր պատճառաբանության հաճախ խուսափում են լրագրողներին տեղեկատվություն տրամադրելուց: ՀՀ-ում հիմնականում զարգացում է ապրում կուսակցական մամուլը, ինչը լավատեսական կանխատեսումների առիթ չի տալիս, և մամուլի իրական անկախությունն ապահովելու համար հավանաբար դեռ երկար ժամանակ կպահանջվի: Երբեմն հեռարձակվում են հասարակության լայն խավերի վրա ուղղակի բացասական ազդեցություն թողնող (սոցիալական և ընտանեկան ուղղվածության տարբեր հեռուստասերիալներ, ֆիլմեր, քննարկումներ և այլն) հաղորդումներ: Հասարակության գիտակցության բարձրացման, պետականամետ մտածելակերպի խրախուսման ու ամրապնդման, բարոյական, հայրենասիրական և ազգային արժեհամակարգի կարևորմանը նպաստող հաղորդումները պետք է դառնան հանրային հեռարձակման հիմնական նպատակը:

Այս ամենով հանդերձ, ՀՀ պետական կառավարման համակարգում վերջին տարիների բարեփոխումները զանգվածային լրատվության միջոցների գործունեության համար դրական լուրջ նախադրյալներ ապահովեցին, սակայն համակարգն առավել արդյունավետ դարձնելու համար դեռևս շատ անելիքներ կան:

---

[16] Այս մասին տե՛ս ԵԽԽՎ-ի պաշտոնական կայքում՝ http://assembly.coe.int/nw/Home-EN.asp

Բանալի բառեր – *ԶԼՄ-ի պետական կառավարման ընթացակարգեր, ԶԼՄ-ի իրավական կարգավիճակ, հանրային կառավարում, քաղաքացիական հասարակություն, օրենսդրական բարեփոխումներ, հասարակական ինստիտուտներ, պետական կառավարման արդյունավետություն*

ЭДГАР КАЛАНТАРЯН – ***СМИ в системе государственного управления РА.*** – Недавние реформы, затронувшие деятельность СМИ в Армении, отмечены высокой эффективностью. СМИ – важный компонент в системе государственного управления любой страны. При этом как источник получения и распространения информации они остаются среди главных институтов демократической системы и гражданского общества. Последние предполагают сложную открытую структуру, самоуправление и умение приспособиться к изменениям внешней и внутренней среды. Несмотря на последние реформы, средствам массовой информации Армении все ещё недостаёт эффективности, особенно в законодательной сфере, что немаловажно для улучшения государственного управления.

Ключевые слова: *процедуры государственного управления СМИ, правовой статус СМИ, общественное управление, гражданское общество, законодательные реформы, общественные институты, эффективность государственного управления*

EDGAR KALANTARYAN – ***The Role of Media in the Public Governance of RA***. – The recent reforms concerning activities of Media in the system of public administration of RA were marked by high efficiency. One of the most important elements of public administration system in any country is the Media. At the same time, it is one of the most important institutions of the democratic system and civil society as it assumes the possibility of receiving and sending information. The Media are open and complicated structures that possess targeted adaptation as a result of changing realms, and self-government, with its self-regulative features. Thus, besides the clarification and enhancement of the Media's public administration procedures, it will be possible to contribute in the state government efficiency of the RA, widening the civic rationality scale. Despite recent reforms, yet there are some problems of efficiency in the Media governing process in the public administration system of RA, especially in the legislative aspects, which is much more important for improving the governance.

Key words: *procedures for public administration of the mass media, legal status of the mass media, public administration, civil society, legislative reform, public institutions, effectiveness of state administration*

ТЕОРЕТИЧЕСКОЕ ОФОРМЛЕНИЕ КОНСЕРВАТИЗМА И ПРЕВРАЩЕНИЕ ЕГО В ПОЛИТИЧЕСКУЮ ИДЕОЛОГИЮ

БАЛТАШ КАРИПОВ

Содержание понятия «консерватизм» чрезвычайно многообразно. Оно включает в себя целый ряд противоречивых аспектов, что становится причиной значительных разночтений в характеристике его сущности[1]. Впервые как политическое понятие термин «консерватизм» стал использоваться для характеристики политических явлений во времена Великой Французской революции, причем применительно как к сторонникам сохранения революционных завоеваний, так и к защитникам предшествующего политического строя. В англо-американском политическом лексиконе этот термин получил распространение несколько позже – с 30-х годов XIX века[2]. Именно с этого времени под влиянием многочисленных радикальных теорий формируется устойчивый негативно-эмоциональный подтекст понятия, присущий не только бытовой речи, но и научному языку.

Особенно ярко эта тенденция проявилась в советской историографии; справочные издания называли консерватизм «идейно-политическим течением, противостоящим прогрессивным тенденциям социального развития», а его характерной особенностью считали «враждебность и противодействие прогрессу, приверженность традиционному и устаревшему»[3], «вражду ко всему новому, передовому»[4]. В строгом смысле научными такие определения назвать, безусловно, нельзя. Согласно господствовавшим в советской науке концептуальным установкам их авторы ставили знак равенства между «традиционным» и «отжившим», между «новым» и «прогрессивным». Такой ход рассуждений свойственен

---

[1] См. «Консерватизм как течение общественной мысли и фактор общественного развития» (Материалы «круглого стола») // «Полис», 1995, № 4, с. 33-60; «Русский консерватизм: проблемы, подходы, мнения» // «Отечественная история», 2001, № 3, с. 103-133; «Либеральный консерватизм: история и современность». М., 2001, с. 11-30, 120-214; **Попов Э. А.** Русский консерватизм: идеология и социально-политическая практика. Ростов-на-Дону, 2005, с. 4-8; **Минаков А. Ю.** Русский консерватизм в современной русской историографии. Новые подходы и тенденции изучения // «Отечественная история», 2006, № 6, с. 133-141.

[2] См. **Молчанова Е. Б.** Проблема определения понятия «консерватизм» и «неоконсерватизм» в западной и отечественной политологической литературе. М., 1994, с. 4.

[3] См. «Философский энциклопедический словарь». М., 1983, с. 273.

[4] См. «Советский энциклопедический словарь». М., 1980, с. 628.

представлениям о линейно-поступательном характере развития мировой цивилизации и далеко не всегда находит подтверждение в реальной жизни.

Сам термин «консерватизм» происходит от лат. *conservare* – сохранять, беречь, оставлять невредимым, хранить[5]. Даже на этимологическом уровне обнаруживается положительный характер данного термина, отсутствие в нем какого-либо отрицания, а также обращенность его не к новому или будущему, а к уже имеющемуся, проверенному, обладающему определенной ценностью[6]. Правильное понимание данного феномена может быть достигнуто только путем разграничения понятий консерватизма как течения общественной мысли, идеологии и консерватизма как социально-психологического явления, которое представляет собой важнейший механизм регулирования деятельности общества, обеспечивающий сохранность и развитие мировой цивилизации. Не случайно второе толкование Н. А. Бердяев охарактеризовал как «одно из вечных и онтологических начал человеческого общества»[7].

В современной справочной литературе данная сторона консерватизма обозначается как «умонастроение, присущее достаточно широким общественным группам, оформленным политическим силам, а также определенным индивидам; оно характеризуется приверженностью традициям, стабильности, упорядоченности, отвергает революционные настроения и с сомнением оценивает реформистские импульсы; такое умонастроение считает принципиально недостижимым установление разумного социального порядка по заранее намеченному плану; склонение к признанию необходимости “органического” строения общества и “естественного” его развития»[8]. Однако такое разграничение в понимании консерватизма проводится далеко не всеми исследователями, что ведет к множеству неточностей в его трактовке. Вследствие этого, в частности, имеют место значительные разногласия по вопросу возникновения консерватизма, которое относится исследователями к самым различным историческим эпохам: к XVI веку (периоду Реформации и Контрреформации)[9]; к эпохе Английской революции середины XVII века[10] или, что более распространено, к событиям Великой Французской революции конца XVIII века[11]. Очевидно, что авторы данных концепций рассматривали

---

[5] **Сокольская И. Б.** Консерватизм: идея или метод // «Полис», 1998, № 5, с. 50.

[6] **Ермашов Д. В., Ширинянц А. А.** У истоков российского консерватизма: Н. М. Карамзин. М., 1999, с. 17.

[7] **Бердяев Н. А**. Философия неравенства. М., 1990, с.109.

[8] «Политология. Энциклопедический словарь». М., 1993, с.197.

[9] **Галкин А. А.** Консерватизм в идеологической системе координат (Консерватизм как течение общественной мысли и фактор общественного развития: материалы «круглого стола») // «Полис», 1995, № 4, с. 36.

[10] **Федорова М. Н.** Традиционализм как суть общественно-политического проекта консерватизма и обращенность его к проблемам истории // «Полис», 1995, № 4, с.43.

[11] **Репников А. В.** Консервативная модель переустройства России // «Россия в

консерватизм преимущественно как направление общественно-политической мысли.

На наш взгляд, именно расширительная трактовка консерватизма, включающая в себя понимание его и как стиля мышления, и как комплекса поведенческих социокультурных установок, и как порождаемая ими политическая идеология, более всего соответствует исторической и общественно-политической реальности. Современный немецкий политолог Г. К. Кальтенбруннер определяет консерватизм как «вневременную действительную систему универсальных ценностей», стоящую на одном уровне с такими общечеловеческими категориями, как традиция, религия, этика, культура[12]. Таким образом, было бы неверно говорить о возникновении консерватизма применительно к этапу его теоретического оформления. Консерватизм как особая система «воззрений в отношении окружающего мира, тип сознания и политико-идеологических ориентации и установок»[13], а также политическая практика консервативного характера, несомненно, существовали и в гораздо более ранние периоды истории.

Очевидно, именно такой консервативный первофеномен К. Манхейм называл «универсальным консерватизмом»[14]. Вместе с тем это явление нельзя сводить к консервативному инстинкту или трактовать его как некую особенность обыденного сознания[15]. «Универсальный консерватизм» представляет собой сложный механизм, с помощью которого человеческая цивилизация смогла закрепить и поставить себе на службу достижения общества. Более того, сама цивилизация, или «развивающийся, но устойчивый в своих типологических чертах и архетипах духовный, социокультурный и хозяйственный этнорегиональный комплекс»[16], представляет собой реальное воплощение консервативных принципов, поскольку она постоянно фиксирует и сохраняет определенную систему социальных, политических и духовных отношений, спасает общество от «войны всех против всех» (Гоббс).

В этих целях формирующиеся цивилизации создают «ограничители» в виде системы права, государства, религии. Консерватизм является духовно-психологической основой этих «ограничителей», «психологическим

условиях трансформаций». М., 2000. Выпуск 2, с. 5.

[12] **Kaltenbrunner G.-K.** Der schwierige Konservatismus // Aus Politik und Zeitgeschichte. Bonn, 1973, № 49, с. 25.

[13] «Современный консерватизм». М.,1992, с. 66.

[14] **Манхейм К.** Диагноз нашего времени. М., 1994.

[15] См. «Современный консерватизм», с. 42; **Пустарнаков В. Ф.** Либеральный консерватизм и либерализм в России // «Либеральный консерватизм: история и современность». М., 2001, с. 16.

[16] **Патракова В. Ф.** Русская (российская) цивилизация // «Российская историческая политология». Ростов-на-Дону, 1998, с. 431.

элементом любого государства, с потерей которого государственная организация обезоруживается, чахнет и умирает»[17]. Вместе с тем консервативная составляющая цивилизации позволяет не только сохранять, оберегать уже имеющиеся институты, но и развиваться согласно существующим в данном обществе религиозно-нравственному мировоззрению, системе ценностей, форме государственных и правовых отношений.

Когда развитие протекает подобным образом, консерватизм существует в скрытой латентной форме. Однако когда в обществе начинают происходить трансформации, угрожающие сложившемуся укладу жизни, ситуация меняется коренным образом: «движение оппозиционных слоев и их стремление взорвать существующий порядок как бы извне воздействует на консервативное сознание, заставляя его осмыслить свою историческую роль...»[18]. Происходит своеобразная метаморфоза консервативного мировоззрения – превращение его в идеологическую систему, в направление общественно-политической мысли. Этот процесс, протекавший длительное время, в основном в эпоху Новой истории (XVI–XVIII вв.), стал периодом глобальных изменений в Западной Европе, обусловившим переход к новому, буржуазно-индустриальному обществу. В оценке Ю. Хабермаса этой эпохе соответствует «историческое сознание, которое порывает с традиционализмом “естественных” континуумов»; в нем также превалирует «доверие к разумному дискурсу, который должен быть основой в процессе легитимизации любого политического господства»[19].

Предыстория консервативных идей восходит к первым образцам систематической рефлексии о государстве и политике, которые прослеживаются еще в трудах античных мыслителей Платона и Аристотеля. И хотя этих авторов, безусловно, нельзя считать консерваторами в строгом смысле слова, многие государственно-правовые идеи, выработанные ими, являются основополагающими для консервативной идеологии. Консервативные идеи носят интернациональный характер; они формируются не только на Западе, но и во многих других странах, в том числе и в России. Отдельные тезисы и постулаты, составившие основу консервативной идеологии, по мнению некоторых авторов, представлены, например, в трудах митрополита киевского Илариона (XI в.), а также в других сочинениях русской средневековой мысли[20].

В Новое время консервативные идеи находят отражение в трудах

---

[17] **Смолин Б. М.** Очерки имперского пути. М., 2000, с. 201.

[18] **Манхейм К.** Диагноз нашего времени. М., 1994, с.194.

[19] **Хабермас Ю.** Демократия. Разум. Нравственность // Московские лекции и интервью. М., 1995, с. 62.

[20] См. «Русский консерватизм» // «Социс», 1993, № 1, с. 44.

мыслителей и государственных деятелей Англии – страны, которая считается родиной классического политического консерватизма. Необходимость строгого соблюдения обычаев и установленных законов в конце XVI в. получила обоснование в фундаментальном труде «О законах церковной организации» англиканского богослова Р. Хукера, который полагал, что социальный порядок есть более сложное историческое образование, чем теория естественного права. Полемизируя со сторонниками этой теории, он подчеркивал, что естественное право настолько широко, что из него не вытекают никакие определенные политические решения. В XVIII в. большое значение традициям придавал Д. Юм на том основании, что для большинства людей они являются высшим авторитетом и уже вследствие этого не нуждаются ни в каких доказательствах. Представители шотландской школы «моральной философии» – А. Смит, У. Робертсон, А. Фергюсон и др. – в своих трудах стремились обосновать естественноисторическое происхождение неравенства в обществе, полемизируя с французскими просветителями, которые рассматривали общество как арифметическую совокупность равных индивидов.

Любая революция порождает ситуацию исторической неопределенности. Великая Французская революция не стала в этом смысле исключением. Своеобразной реакцией на подобную «смутность» эпохи явилось завершение теоретического оформления консерватизма, превращение его в политическую идеологию. Однако было бы неверно, как это делают некоторые исследователи, считать *основной* причиной возникновения консерватизма именно революцию[21]. В политической и экономической жизни Европы в Новое время происходили многочисленные процессы, разрушавшие традиционный жизненный уклад и ставившие под угрозу многовековой порядок и стабильность, – начинавшаяся промышленная революция, порожденные ею необратимые социальные изменения, всеобъемлющая секуляризация жизни, размывание привычных духовных ценностей и многое другое. Все это в совокупности со страшным шоком, который был вызван негативными сторонами революционных событий во Франции, привело к широкой реакции не только в сфере политической практики, но и в идейной области.

«Рассуждения о революции во Франции» (1790) Э. Берка – сочинение наиболее видного мыслителя, заложившего основы идей консерватизма в эту эпоху, хотя и посвящено конкретным событиям и обстоятельствам своего времени, содержит многие мысли и постулаты, и по сей день характеризующиеся как консервативные. Исследователи, занимавшиеся проблемой генезиса консерватизма, тщательно проанализировали

[21] См. «Философия и историческая наука: материалы “круглого стола”» // «Вопросы философии», 1988, № 10, с. 18.

воззрения этого идеолога[22], поэтому остановимся лишь на важнейших консервативных тезисах универсального характера, выдвинутых им. Одним из центральных положений, обоснованных Э. Берком, было скептическое отношение к разуму и абстрактным проектам общественного устройства, создаваемым на их основе. Не отрицая роли разума в принципе, Э. Берк лишь подчеркивал, что разум воплощается не в индивидуальном сознании, а в историческом опыте столетий. В отличие от своих либеральных современников, английский мыслитель смотрел аналогичным образом и на общество, полагая, что оно может существовать только благодаря иерархии функций, авторитетов, индивидуальных статусов.

Умозрительно-рационалистическому пониманию общества, свойственному просветителям, противопоставлялась идея органичности и сложности социума, которая рассматривалась не через призму отдельного человека, но как единый организм. Общественный порядок, по его мнению, представлял собой не произвольную импровизацию, а результат постепенного исторического развития. Консервативную позицию Э. Берка по данному вопросу можно охарактеризовать как реакцию на ограниченность либеральной интерпретации разума – как некой природной неспособности индивида понимать социальную детерминированность событий. Из идеи ограниченности разума в познании основных законов развития социума проистекал и принцип традиционализма. Разуму Э. Берк противопоставлял традицию, следование которой он считал основой политической деятельности. Суть традиционализма в политике, по его мнению, заключалась в возможности «сохранять и одновременно реформировать», но без нарушения традиционных устоев общества[23].

Практически одновременно с сочинением Э. Берка в странах континентальной Европы создавались и многие другие труды, в которых закладывались основы консервативной теории и идеологии. Их авторами были французы Ж. де Местр, Л. де Бональд, а также их немецкий единомышленник А. Мюллер. В своих работах они отстаивали корпоративный принцип общественного устройства, в котором частные интересы подчинялись «общему благу»; анализировали такие понятия (которым задавалась консервативная интерпретация), как суверенитет власти, легитимность, авторитет. Большой вклад в становление консервативной теории внесли такие мыслители и общественно-политические деятели, как

---

[22] См. **Галкин А. А., Рахшмир П. Ю.** Консерватизм в прошлом и настоящем. М., 1987; **Абрамов В. Н.** Политическая философия Э. Берка: Автореферат дис. канд. фил. наук. М., 1988; «Неоконсерватизм: философия, идеология, политика». М., 1992.

[23] **Берк Э.** Размышления о революции во Франции. М., 1993, с. 120.

А. Токвиль, Б. Дизраэли, Ф. фон Баадер, выработавшие основные принципы консервативной политики вместе с наиболее значимыми положениями консервативной программы развития государства и общества.

На протяжении длительного времени консерватизм существовал в скрытой форме, как особая форма воззрений на окружающий мир. Однако уже на этой стадии его существования начинается процесс теоретического оформления консерватизма. Превращение консерватизма в политическую идеологию происходило под влиянием событий Нового времени, когда угроза утраты позитивного опыта поколений и возросший радикализм, вырвавшийся за пределы одной страны, заставили европейских мыслителей начать поиски консервативной формы политической практики. Консервативное направление общественной мысли, представлявшее собой принципиально новый взгляд на характер и пути развития человеческой цивилизации оформилось в Европе к середине XIX века. Оно стало результатом многовекового развития консерватизма как социально-психологического феномена, призванное удовлетворить одну из важнейших потребностей общества – сохранение и эволюционное развитие вечных основ человеческого бытия.

Для характеристики консерватизма как общественного феномена необходимо выделить основные смысловые категории, составляющие его сущность. Основой любого мышления является набор определенных ценностей либо их специфическая акцентировка, когда ряд общечеловеческих стремлений и интересов выстраивался в определенной иерархии. Выявление ценностей консерватизма имеет первостепенное значение еще и потому, что согласно наиболее распространенному в современных исследованиях пониманию консерватизм представляет собой не столько политическую идеологию, выражающую интересы каких-либо общественных групп, сколько утвердившийся в обществе набор ценностных ориентаций[24].

Приступая к анализу идейных основ консерватизма, отметим тот факт, что целостной детально разработанной идеологической доктрины данного направления не существует. Более того, одной из главных особенностей консервативного мышления является крайне скептическое отношение к разного рода теориям, идеологиям, программам. Эту черту консерватизма американский историк Р. Вирек назвал «антитеоретичностью»[25]. Сами консерваторы при определении своих мировоззренческих позиций зачастую предпочитали такие дефиниции, как «консервативный

---

[24] См. **Павленко В. М.** К вопросу о наступлении консервативного поворота на Западе // «Консерватизм: история и современность». Пермь, 1994, с. 31.

[25] См. **Гаджиев К. С.** Политическая философия. М., 1999, с. 139.

темперамент», «умонастроение, а не идеология», «система принципов»[26] и т.д. Современный американский социолог консервативного толка К. Росситер отмечает, что «в отличие от радикализма и либерализма подлинный консерватор неохотно пускается в теоретические спекуляции... Само намерение выработать теорию консерватизма, в общем-то, является не свойственным консерватизму побуждением»[27].

Жесткая система постулатов, теоретических построений, схем, присутствующая в других общественно-политических направлениях, в консерватизме выражена значительно слабее. Данная особенность, столь явно бросающаяся в глаза, давала повод многим исследователям утверждать, что консерватизм не является идеологией, что в нем отсутствует всяческая теория, что он совершенно не имеет основополагающих идей и тезисов, дающих возможность отличать его от обычных мнений, суждений, стереотипов поведения. Об этом, в частности, на рубеже XIX и XX веков писал П. Б. Струве. Такой же точки зрения придерживается и С. Хантингтон, утверждающий, что консерватизм представляет собой нечто неопределенное, что не имеет завершенной идеологии и не поддается научному анализу[28]. Однако подобная «антитеоретичность» консерватизма означает не полное отсутствие идей и теорий, а предпочтение практической деятельности, исходящей из реального бытия, а не из абстрактных схем, какими бы стройными и логичными они ни казались.

Консерваторы выступают против абсолютизации каких бы то ни было идей и теорий, тем более их реализации в чистом виде на практике. В основе их мышления и деятельности лежит опыт, а не теория. С. Хантингтон отмечал, что для консерваторов правда существует не в форме общих утверждений, а в форме конкретного опыта, имеющего гораздо большее значение, нежели все производное чистого разума – логика, абстракция, метафизика[29]. М. Оукшотт считал невозможным определение консерватизма как некоего умозрительного набора идей, полагая, что рефлексия данного явления возможна лишь через понимание его «нрава» в связи с практическим поведением и отношением к тем или иным событиям[30]. Долгое время «антитеоретичность» консерватизма не рассматривалась как одна из его специфических черт. Это приводило к тому, что исследователи зачастую пытались самостоятельно сформировать консервативную парадигму по

---

[26] См. «Современный консерватизм», с. 50.

[27] **Росситер К.** Консерватизм // «Век XX и мир», 1991, № 5; http://old.russ.ru/antolog/vek/1991/05/rossit.htm

[28] См. **Галкин А. А. Рахшмир П. Ю.** Указ. соч., с. 7.

[29] См. **Шацкий Е.** Утопия и традиция. М., 1990, с. 399.

[30] См. **Григоров С. Г.** Преодоление заданности // «Полис», 2000, № 4, с. 34.

аналогии с другими политическими направлениями, искажая таким образом ее сущность.

Первостепенную значимость для консерваторов имеет то, что любая завершенная рационалистическая концепция не приемлет диалога, живого спора, результатов практической деятельности. Такая теория, вытеснив религиозную веру, сама приобретает статус веры; она стремится объяснить посредством риторики всю многообразную реальность и поставить ее под свой контроль. Характеризуя любую идеологию вообще, американский консерватор Р. Кирк отмечал, что она представляет собой «совокупность фанатично исповедуемых априорно-секулярных доктрин, цель которых – достижение рая земного... Мыслящий консерватизм есть отрицание идеологии, потому что он довольствуется человеком таким, каков он есть, и стремится лишь примирить друг с другом естественные слои общества»[31].

Таким образом, консерватизм есть чрезвычайно широкое, много-аспектное понятие, включающее в себя множество смысловых уровней, ряд из которых существовал на протяжении всей человеческой цивилизации, а ряд возник под влиянием конкретных исторических событий.

Ключевые слова: *традиционализм, иерархичность консерватизма, консервативное реформирование, консервативная идеология*

ԲԱԼՏԱՇ ԿԱՐԻՊՈՎ - ***Պահպանողականության տեսական ձևավորման և քաղաքական գաղափարախոսության վերափոխման գործընթացը*** – Սույն հոդվածում ցույց է տրված, որ պահպանողականությունը չափազանց լայն և բազմակողմ հասկացություն է, որը ներառում է բազմաթիվ աստիճաններ, որոնցից մի քանիսը գոյություն են ունեցել մարդկային քաղաքակրթության զարգացման ողջ ընթացքում, մյուսներն էլ առաջացել են կոնկրետ պատմական իրադարձությունների ազդեցությամբ: Այս գործոնի արտահայտման ամենաբարձր ձևը յուրաքանչյուր քաղաքակրթության հիմքում ընկած ունիվերսալ մեխանիզմն է, որն ապահովում է տեղեկության կուտակման որշակի փորձ՝ այն փոխանցելով հաջորդ սերունդներին, իսկ նոր տեղեկության ըմբռնումն ու հարմարվողականությունը կարող են բնութագրվել որպես պահպանողական:

Բանալի բառեր – *ավանդապաշտություն, պահպանողականության հիերարխիա, պահպանողական բարեփոխում, պահպանողական գաղափարախոսություն*

[31] **Кирк Р.** Какая форма правления является наилучшей для счастья человека // «Полис», 2001, № 3, с. 145.

BALTASH KARIPOV – *Process of Theoretical Registration of Conservatism and its Transformation into Political Ideology.* – In this paper we show that conservatism is extremely broad, multifaceted concept that includes many levels of meaning, some of which have existed throughout the development of the entire human civilization, and some arose under the influence of specific historical events. The highest form of manifestation of this phenomenon is the presence in the heart of any civilization, a universal mechanism for performing the functions of experience in the form of specific information, transferring it from the present to future generations, as well as the perception of new information and adaptation to it, which can be characterized as conservative.

Key words: *traditionalism, conservatism hierarchy, conservative reformation, conservative ideology*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՇՈՒՐՋ

ԿՆՅԱԶ ՍԱՐՈՅԱՆ

Հետսառըպատերազմյան աշխարհակարգում, ի թիվս այլ իրողությունների մի շարք երկրների քաղաքական օրակարգի գերակա խնդիր հռչակվեց ժողովրդավարական քաղաքական համակարգի կառուցումը: Այս համատեքստում հատկապես հետխորհրդային երկրների, որոնք մասնագիտական գրականության մեջ առավելապես հայտնի են որպես անցումային հասարակություններ, հասարակական-քաղաքական դիսկուրսում ավելի արդիական են դառնում քաղաքացիական մշակույթ հասկացության շուրջ դիտարկումները:

Քաղաքացիական մշակույթի և նրան առնչվող երևույթների ուսումնասիրությունը թույլ է տալիս ոչ միայն մեկնաբանել հասարակական գիտակցության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, այլ նաև վեր հանել և բացատրել սոցիումի քաղաքական կյանքում տեղ գտած մի շարք բացասական երևույթներ և խնդրահարույց իրավիճակներ: Մյուս կողմից, հանդես գալով որպես անձի սոցիալականացման գործընթացն ապահովող երևույթ, քաղաքացիական մշակույթը դառնում է հասարակական փոփոխությունները չափող կարևորագույն գործիք: Քաղաքական համակարգի ժողովրդավարացման, հասարակության գաղափարական կողմնորոշիչների փնտրտուքների, քաղաքական գործընթացներին հասարակության մասնակցության, դրանց ձևերի և արդյունավետության խնդիրների համատեքստում կամա թե ակամա կարևորվում են քաղաքացիական մշակույթի շուրջ ուսումնասիրությունների արդիականությունը և անհրաժեշտությունը:

Քաղաքացիական մշակույթի հիմնախնդրի նկատմամբ մասնագիտական գրականության մեջ ուշադրությունը պայմանավորված է նաև աշխարհում տեղի ունեցող աշխարհաքաղաքական և հատկապես սոցիոմշակութային ընդհանուր տեղաշարժերով, աշխարհի գլոբալացման գործընթացի և դրանից ածանցվող նոր միտումների այլևս օբյեկտիվ իրականություն լինելու հանգամանքով:

Այս համատեքստում քաղաքացիական մշակույթ հասկացության ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ավելի խորը պատկերացում կազմելու հատկապես ժողովրդավարացման տեսանկ-

յունից անցումային փուլում գտնվող քաղաքական համակարգերի գործառության և ժամանակ առ ժամանակ նկատվող խափանման պատճառների, քաղաքական իշխանության որդեգրած բարեփոխումների հաջողության կամ տապալման պատճառների, լայնածավալ սոցիալական փոխակերպումների էության և այս կամ այն հասարակության կարիքներն ու պահանջները բավարարելու կամ չբավարարելու պատճառների, ինչպես նաև քաղաքացիների քաղաքական վարքի և դրա հիմքում ընկած շարժառիթների մասին:

Առնվազն վերջին երկու տասնամյակում՝ ժողովրդավարացման հերթական ալիքի ավարտից հետո, քաղաքացիական մշակույթ հասկացությունը քննության է առնվում բոլոր այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում հասկանալու, թե ինչու միևնույն քաղաքական ինստիտուտները տարբեր երկրներում տարբեր կերպ են աշխատում, ինչու այս կամ այն քաղաքական նորարարություն ենթադրող նախաձեռնությունները մի տեղում մեծ հաջողություն են գտնում հասարակության շրջանում, իսկ մեկ այլ դեպքում տեղիք են տալիս ընդգծված հասարակական դժգոհության: Մյուս կողմից՝ այդ նույն վերջին երկու տասնամյակում թվում էր, թե հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող բոլոր փոփոխությունները պետք է ծավալվեն և ընթանան գերազանցապես ժողովրդավարություն հասկացության և դրա տրամաբանությունից բխող երևույթների շրջանակներում: Սակայն արդի գործընթացները, ինչպես օրինակ՝ Մերձավոր Արևելքում «Իսլամական պետություն» ծայրահեղական խմբավորման ի հայտ գալն ու որոշակի քաղաքական դերակատարում ստանձնելը, մի շարք երկրների հասարակական տրամադրություններում գնալով գլուխ բարձրացնող ազգայնական, ծայրահեղական դրսևորումները ցույց են տալիս, որ գործ ունենք բոլորովին նոր իրավիճակի հետ: Արդյոք այս նոր զարգացումները առաջընթացի պայման համարվող ժողովրդավարության գաղափարից տարբերվող և վնասակար անոմալիա՞ են, առաջադեմ մարդկությանն ուղղված լուրջ վտա՞նգ, թե՞, այդուհանդերձ, այն ևս զարգացման ուղի է, որը համապատասխանում է այդ ճանապարհին ընտրած հանրույթների և քաղաքական խմբավորումների սոցիոմշակութային առանձնահատկություններին, ուստի այն ընդունելի մոդել է վերջիններիս համար: Ի վերջո, երևույթների այս համախումբը դժվար է բացատրել միայն իշխանության ձգտելու, այն նվաճելու և պահպանելու խնդրով: Հետևաբար, այս համատեքստում ևս անհրաժեշտություն է առաջանում նորովի անդրադառնալ քաղաքացիական մշակույթի ձևավորման, կայացման ընթացակարգերին:

Ժամանակակից քաղաքական գիտության մեջ գոյություն ունի քաղաքացիական մշակույթ հասկացության սահմանումների բավա-

կան լայն շրջանակ: Այս առումով պետք է նկատել, որ վերջին հասկացությունը առավելապես քննության է առնվում ավելի լայն՝ քաղաքական մշակույթ հասկացության համատեքստում: Քաղաքացիական մշակույթը՝ որպես մշակույթի առանձին տարատեսակ, առաջին անգամ դիտարկվել է ամերիկացի գիտնական Չարլզ Մերիամի կողմից՝ 1928-1938 թթ. «The Making of Citizens» քաղաքացիական կրթությանը վերաբերող դասընթացներ[1]: Քաղաքական մշակույթի հիմնահարցի ուսումնասիրության մեջ կարևոր նշանակություն է ունեցել 1956 թվականին հրատարակված Գ. Ալմոնդի և Ս. Վերբայի համատեղ՝ աշխատությունը»[2]: Հիմնահարցի հետազոտության տեսական հայեցակարգերի մշակման մեջ իրենց ավանդն են ունեցել Լ. Փայը, Ս. Լիփսեթը, Ս. Վերբան, Ս. Հանթինգտոնը, Ե. Վյատրը, Կ. Օպալեկը, Է. Բատալովը, Կ. Հաջիևը և ուրիշներ, որոնց ուշադրության կենտրոնում են եղել հիմնականում քաղաքական մշակույթի ուսումնասիրության տեսամեթոդաբանական խնդիրները:

Չնայած քաղաքացիական մշակույթի վերաբերյալ տեսական լայն անդրադարձների առկայությանը՝ միևնույն ժամանակ պետք է նկատել, որ արդի քաղաքական գիտության մեջ դժվար է գտնել այս հասկացության սպառիչ սահմանում: Իսկ գոյություն ունեցող սահմանումներից շատերի դեպքում էլ դժվար է հստակ պատկերացում կազմել նախ քաղաքական և քաղաքացիական մշակույթների տարբերության և ապա դրանց էության ու բնորոշ գծերի մասին[3]:

Սահմանումների և մոտեցումների նման լայն շրջանակի առկայությունը կարող է բացատրվել նաև այն հանգամանքով, որ քաղաքական մշակույթ հասկացության դեպքում իրականում գործ ունենք երկու՝ իրենց բովանդակությամբ բավական բարդ և տարողունակ հասկացությունների հետ, ինչպիսիք են մշակույթը և քաղաքականությունը: Առհասարակ պետք է նկատել, որ մշակույթը ներկայացվում և ուսումնասիրվում է առավելապես որպես մարդկային գործունեության առանձնահատուկ եղանակ, որպես այնպիսի մեխանիզմների և միջոցների համակարգ, որոնց գործառությունը կոչված է ապահովելու մարդկային գործունեությունը[4]: Դժվար չէ նկատել, որ թերևս մշակույթի հենց այս ըմբռնումն էլ ընկած է քաղաքական մշակույթի էության հիմքում:

---

[1] Տե՛ս **Merriam Ch**. The Making of Citizens// Teachers College Press 1960, // էջ 5:

[2] Տե՛ս **Almond G., Verba S**. The Civic Culture.Political Attitudes and Democracy in Five Nations, 1963, էջ 2:

[3] Տե՛ս **Alexanyan A. S**. Post-Soviet social partnership: the political and civiliarchic dimensions of social responsibility // Central Asia and the Caucasus: Journal of Social and Political Studies, 2010, vol.11, Issue 4, էջ 126-137, նաև՝ **Алексанян А. С**. Цивилиархические основы демократизации политического режима в Армении // «Центральная Азия и Кавказ». Журнал социально-политических исследований. Том 14, вып. 3, 2011, էջ 132-145:

[4] Տե՛ս **Маркарян Э. С**. О генезисе человеческой деятельности и культуры. Ер., 1973, էջ 14:

Քաղաքականության և մշակույթի փոխկապվածությունը, իր առանձնահատկություններով հանդերձ, արտացոլվում է հենց քաղաքական մշակույթի մեջ: Իր հերթին քաղաքականությունը սահմանվում է որպես քաղաքական հարաբերությունների ոլորտում իրացվող կոնկրետ գործողություն: Այս դեպքում արդեն քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես այդ գործունեության բնութագրման, ընկալման աստիճան:

Առհասարակ, քաղաքացիական մշակույթ հասկացության շուրջ դատողություններ անելիս առաջին հերթին անհրաժեշտ է քննության առնել դրա էությունը: Նման մոտեցումը հրամայական է այնքանով, որ հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացում կազմելու այն մասին, թե այս երկու հասկացություններից բովանդակային առումով որն է առավել լայն, կամ, այլ կերպ ասած, ինչպիսին է այդ երկու հասկացությունների հարաբերակցությունը: Արդյո՞ք մեկը ենթադրում է մյուսի գոյությունը, կամ հարցերի որոշակի շրջանակ քննարկելիս ո՞ր դեպքում է ավելի նպատակահարմար դիտարկումներ անել քաղաքական մշակույթի լույսի ներքո և ո՞ր դեպքում՝ քաղաքացիական մշակույթ հասկացության:

Արդեն նշեցինք, որ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն քաղաքական մշակույթ հասկացության բազմաթիվ սահմանումներ: Որոշակի հստակ պատկեր ունենալու համար, օրինակ, ռուս հետազոտող Ի. Ն. Գոմերովը քաղաքական մշակույթի սահմանումները բաժանում է չորս հիմնական խմբի՝ 1. օբյեկտիվ, 2. էվրիստիկական, 3. համընդգրկուն, 4. սուբյեկտիվ կամ հոգեբանական: Ըստ այդմ՝ առաջին խմբի սահմանումներում քաղաքական մշակույթը առավելապես ընկալվում է որպես քաղաքական համակարգի անդամների վարքի ստանդարտներ, որոնցից շեղումը բերում է իշխանության կողմից սահմանված պատժամիջոցների: Երկրորդ խմբի սահմանումների դեպքում քաղաքական մշակույթը հանգեցվում է քաղաքական կողմնորոշումների գաղափարին: Համընդգրկուն սահմանումների պարագայում շեշտադրվում են քաղաքական մշակույթի մեջ բովանդակային բաղադրիչները, ինչը, սակայն, միաժամանակ հնարավորություն չի ընձեռում սահմանելու քաղաքական մշակույթի ընդհանուր բնորոշիչները: Սուբյեկտիվ կամ հոգեբանական բնույթի սահմանումների դեպքում արդեն քաղաքական մշակույթը հանդես է գալիս որպես ինչպես անհատին, այնպես էլ քաղաքական համակարգի անդամներին բնորոշ դիրքորոշումների, համոզմունքների և կողմնորոշումների համակարգ: Սույն մոտեցումը ընդունում են նաև Կ. Օպալեկը և Ե. Վյատրը: Վերջինս, քաղաքական մշակույթ հասկացության մեջ զետեղում է նաև քաղաքականության վերաբերյալ գիտելիքները, քաղաքական երևույթնե-

ին գնահատողական վերաբերմունքը, քաղաքական դիրքորոշումների զգացմունքային կողմը և տվյալ հասարակության մեջ ընդունված քաղաքական վարքի ձևերը[5]: Քաղաքական մշակույթի մեջ վարքի մոդելների վրա է շեշտը դնում նաև Է. Յ. Բատալովը՝ քաղաքական մշակույթը սահմանելով որպես պատմականորեն ձևավորված և հարաբերականորեն կայուն վարքի ձևերի համակարգ[6]: Այս համատեքստում Ն. Մ. Կեյզարովը նույնպես քաղաքական մշակույթ ասելով հասկանում է «քաղաքական գիտելիքների, քաղաքական նորմերի և գործունեության նորմերի ամբողջականություն»[7]:

Կանադացի հետազոտող Պրեստուսը քաղաքական մշակույթը բնորոշում է որպես «արժեքներ և ինստիտուցիոնալ կառույցներ»[8]: Վերջինս քաղաքական մշակույթ հասկացության մեջ ներառում է նաև քաղաքականության նկատմամբ զանգվածների վերաբերմունքը, քաղաքականությանը մարդկանց մասնակցությունը, քաղաքականության արդյունավետության ընկալումը քաղաքացիների կողմից և դրանից օտարվածությունը, քաղաքական էլիտաներին վերագրվող օրինականությունը, ինչպես նաև հասարակական համակարգի և նրա տարբեր ենթահամակարգերի ներսում քաղաքականության բնույթն ու հիմքը:

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են նաև քաղաքական մշակույթ հասկացության այլ սահմանումներ, ինչպես օրինակ, Լ. Փայի և Պուտնամի առաջարկած մոտեցումներն են: Վերջիններս քաղաքական մշակույթ հասկացության մեջ ներառում են մոտավորապես այն ամենը, ինչը վերաբերում է «քաղաքական գաղափարախոսություն, ազգային բնավորություն և ոգի, ազգային քաղաքական հոգեբանություն և ազգի հիմնարար արժեքներ, քաղաքական համակարգ» կատեգորիաներին:

Խոսելով քաղաքական մշակույթի սահմանումների մասին՝ նկատեցինք, որ ժամանակակից քաղաքագիտության մեջ առավել հաճախ հանդիպողը սահմանումների այսպես կոչված հոգեբանական կամ սուբյեկտիվ համախումբն է, որի դեպքում քաղաքական մշակույթը առավելապես բնորոշվում է որպես քաղաքական համակարգի նկատմամբ անհատների կամ խմբերի դիրքորոշումների, պատկերացումների, գնահատականների և դրանցով պայմանավորված վարքի ձևերի ու մոդելների, ինչպես նաև արժեքների որոշակի համակարգ: Այլ կերպ ա-

---

[5] Տե՛ս **Вятор Е**. Социология политических отношений. М., 1979, էջ 259-260:

[6] Տե՛ս **Баталов Э. Я**. Политическая культура современного американского обшества, էջ 25:

[7] **Кейзаров Н. М**. О соотношении категорий «власть» и «политическая культура» // "Советское государство и право", 1983, № 1, էջ 78:

[8] **Бурлацкий Ф. М., Галкин А. А**. Современный Левиафан: очерки политической социологии капитализма. М., 1985, с. 199.

սած՝ շեշտը առավելապես դրվում է իրացվող քաղաքականության նկատմամբ գոյություն ունեցող սուբյեկտիվ, անհատական-հոգեբանական ընկալումների վրա: Պետք է նկատել, որ սույն մոտեցմամբ քննարկումներից դուրս են թողնվում քաղաքական մշակույթի և քաղաքական ինստիտուտների կապի, փոխազդեցության խնդիրները, ինչը ինքնին կարևոր է թեկուզև ընդհանուր քաղաքական գործընթացի տեսանկյունից: Այս առումով առավել ընդունելի կարելի է համարել, օրինակ, ռուս հետազոտող Է. Բատալովի մոտեցումը, որտեղ հեղինակը քաղաքական մշակույթի բաղկացուցիչների շարքում, բացի սուբյեկտիվ-անհատական ընկալումներից, շեշտադրում է այն հանգամանքը, որ «քաղաքական մշակույթը նաև քաղաքական ինստիտուտների և դրանց կողմից ձևավորվող համակարգերի գործառման մոդել է, որն էլ իր հերթին դրսևորվում է քաղաքական գործընթաց նախաձեռնող քաղաքական սուբյեկտների անմիջական գործունեության մեջ՝ այս կերպ ապահովելով հասարակության քաղաքական կյանքի հետագա էվոլյուցիան»[9]:

Եթե փորձենք ի մի բերել քաղաքական մշակույթի առկա սահմանումները, ապա կարելի է նկատել, որ քաղաքական մշակույթը տվյալ հասարակության քաղաքական համակարգի նկատմամբ ունեցած անհատական կամ խմբային մակարդակում ձևավորված գիտելիքների, պատկերացումների, կողմնորոշումների, արժեքների հարաբերակցորեն կայուն մի համակարգ է, որտեղ վերը թվարկված բաղադրիչները հանդես են գալիս որպես մարդկանց քաղաքական կյանքին մասնակցության հիմքեր, նրանց քաղաքական վարքը պայմանավորող շարժառիթներ: Անկախ քաղաքական համակարգի բնույթից՝ ժողովրդավարակա՞ն է այն, թե՞ ոչ, քաղաքական մշակույթը միշտ առկա է որպես քաղաքական հարաբերությունների ոլորտում իրացվող կոնկրետ գործողության՝ քաղաքականության, բնութագրման, գնահատման և ընկալման աստիճան:

Քաղաքական մշակույթ հասկացությանը վերը կատարած թեկուզև հպանցիկ անդրադարձը պատահական չէ այն առումով, որ գրեթե բոլոր դեպքերում էլ քաղաքացիական մշակույթ հասկացության շուրջ դատողությունները արվում են քաղաքական մշակույթ հասկացության համատեքստում: Առանց հաշվի առնելու քաղաքական մշակույթ երևույթի առանձնահատկությունները հնարավոր չէ համակողմանի պատկերացում կազմել քաղաքացիական մշակույթ հասկացության մասին[10]:

---

[9] **Баталов Э. Я.**, նշվ. աշխ., էջ 116-117:

[10] Տե՛ս **Ա. Ս. Ալեքսանյան,** Քաղաքացիական ժուռնալիստիկան որպես քաղաքացիավարական գործոն // «Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն», 2013, № 141.6, էջ 24-34, նաև՝ **Алексанян А. С.** К вопросу о взаимоотношениях цивилиархии и глобализации // Բանբեր Երևանի համալսարանի, 2002, № 1, էջ 115-125:

Այսպես՝ ամերիկյան հեղինակներ Ալմոնդը և Վերբան քաղաքացիական մշակույթը սահմանում են որպես այնպիսի բաղադրյալ քաղաքական մշակույթ, որտեղ առավելապես գերակշռում է քաղաքական մշակույթի մասնակցային տիպը: Հեղինակների սահմանումից կարելի է եզրակացնել, որ քաղաքացիական մշակույթը, լինելով բաղադրյալ քաղաքական մշակույթ, ձեռք է բերում մի շարք բնութագրեր, որոնք այն դարձնում են այնպիսի քաղաքական մշակույթ, որն ավելի է համապատասխանում հենց ժողովրդավարական քաղաքական համակարգին: Քաղաքացիական մշակույթի հատկանիշները բացահայտող այդ բնութագրիչների շարքում առավել կարևորն այն է, որ արդեն քաղաքացիական մշակույթ կրող անձը ոչ թե անընդհատ ակտիվ, ինչպիսին նրանից պահանջում է լինել քաղաքական մշակույթը, այլ պոտենցիալ ակտիվ քաղաքացի է: Այս բանաձևի վրա է հիմնված քաղաքացիական մշակույթի կարևորագույն մեխանիզմներից մեկը, որը նպաստում է հասարակության մեջ ժողովրդավարական ինստիտուտների ոչ թե հռչակագրային, այլ իրական գործունեությանը: Մեխանիզմի տրամաբանությունը հետևյալն է. երբ երկրի հասարակական-քաղաքական կյանքում «ամեն ինչ կարգին է», քաղաքացիական մշակույթ կրող անձը քաղաքականապես պասիվ է, իսկ այդ պասիվությունն էլ թույլ է տալիս, որ քաղաքական վերնախավերը իրականացնեն իրենց գործառույթը՝ կառավարեն պետությունը: Սակայն, երբ երկրում ի հայտ է գալիս քաղաքական, տնտեսական կամ, օրինակ, լայնածավալ հասարակական այնպիսի իրավիճակ, որն ունի կոնֆլիկտային բնույթ, հարուցում է խնդիր և այդ խնդրի լուծման հասարակական պահանջ կամ արդեն իսկ գոյություն ունեցող լուծման այս կամ այն տարբերակի նկատմամբ հասարակական ընդգծված դժգոհություն, ապա քաղաքացիական մշակույթ կրող անձն ակտիվանում է: Եվ քանի որ նա արդեն իսկ պատկերացում ունի հասարակական-քաղաքական կյանքին մասնակցության ձևերի մասին, իր քաղաքական ակտիվ դիրքորոշումների և կողմնորոշումների հիման վրա արդեն իսկ ներառված է քաղաքացիական տարբեր խմբերում և ցանցերում, տեղյակ է քաղաքականությունից և ունի քաղաքական սուբյեկտայնության զգացողություն, այլ կերպ ասած՝ քաղաքական մշակույթի կրող է, հետևաբար արդեն կարողանում է ձևակերպել իր շահերը, առանձնացնել պահանջները, փոխանցել դրանք քաղաքական վերնախավին և հետամուտ լինել դրանց իրականացմանը: Երբ կոնֆլիկտային իրավիճակը հանգուցալուծվում է, քաղաքացիական մշակույթ կրող անձի ակտիվությունը մարում է, իսկ քաղաքական գործընթացները վերադառնում են բնականոն վիճակին:

Քաղաքացիական մշակույթում երկրորդ հիմնական մեխանիզմը վերաբերում է քաղաքական վերնախավի մեջ գոյություն ունեցող «ժո-

ղովրդավարական առասպելին»: Որպես կանոն՝ այս մշակույթը կրող քաղաքական վերնախավերը հավատում են, որ հասարակության լայն շրջանակներ ունեն քաղաքական սուբյեկտայնություն, այդ իսկ պատճառով էլ քաղաքական որոշումներ ընդունելիս և իրացնելիս նկատի են առնում հասարակությունից եկող արձագանքները:

Հաշվի առնելով քաղաքացիական մշակույթ հասկացության մեկնաբանման այս մոտեցումը՝ պետք է նկատել, որ դրա մասին առավել ընդգրկուն պատկերացում են տալիս հատկապես մասնագիտական այն անդրադարձները, որոնցում քաղաքացիական մշակույթ հասկացությունը դիտարկվում է հենց քաղաքացիականություն հասկացության համատեքստում՝ միաժամանակ շեշտադրելով քաղաքացիական կյանքի և այդ հիմքով կառուցվող քաղաքացիական հասարակության հետ քաղաքացիական մշակույթի ունեցած անմիջական կապը, այս երկու հասկացությունները միմյանցով փոխպայմանավորելը: Այսպես, Ա. Պ. Կոչետկովի դիտարկմամբ՝ քաղաքացիական մշակույթ հասկացության մեջ մեկտեղվում են քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, մշակութային արժեքներ, որոնք մարդու համար հիմք են գիտակցելու իր քաղաքական իրավունքները, ինչպես նաև պետության և հասարակության առջև ունեցած պարտավորությունները: «Քաղաքացիական մշակույթը հասարակական կյանքի, քաղաքացիական իրավունքների բազմազանության արտահայտումն է և վճռական ազդեցություն է գործում քաղաքացու սոցիալական կարգավիճակի վրա»[11],- գրում է Կոչետկովը որը, ի տարբերություն այլ հեղինակների, ավելի հստակորեն է մատնանշում քաղաքացիական մշակույթի կապը քաղաքացիական հասարակության հետ՝ նկատելով, որ այդ հասկացությունը սահմանում է քաղաքացիական հասարակության հիմնաքարային արժեքները:

Քաղաքացիական մշակույթի համանման սահմանում է ներկայացնում Պ. Ա. Սերգիենկոն: Ըստ նրա՝ դա ամենից առաջ մարդու իրավական, քաղաքական, բարոյական բարձր մշակույթի սինթեզ է[12]: Ուսումնասիրելով քաղաքացիական մշակույթ հասկացությունը, Ն. Մ. Կեյզարովը նույնպես այն դիտարկում է որպես «քաղաքացիական կյանքի կառուցվածքային տարր, որն արտահայտում է հասարակության հասունության մակարդակը, քաղաքացիական շահերի ապահովման հարցում առկա հակասությունները հաղթահարելու կարողությունը, ինչպես նաև համատեղ գործողությունների և որոշումների մշակ-

[11] **Кочетков А. П**. О формировании гражданского общества // "Социально-политические науки", 1999, № 1, с. 14-22.

[12] Տե՛ս **Сергиенко П. А**. Массовое политическое сознание: проблемы формирования и развития. Киев, 1997:

ման, իրականացման ձևն ու մեխանիզմները»[13]: Սահմանումից կարելի է ենթադրել, որ Կեյզարովը, քաղաքացիական մշակույթ հասկացությունը դիտարկելով քաղաքացիականություն հասկացության հետ, առավելապես շեշտը դնում է քաղաքացիական մշակույթի՝ որպես քաղաքացիական երկխոսության և համաձայնության մեխանիզմի վրա՝ այդ կերպ քաղաքացիական մշակույթը կապելով քաղաքացիական հասարակության կայունությանը որպես վերջինիս ապահովման կարևոր գործոն:

Քաղաքացիական մշակույթի և քաղաքացիական հասարակության կապի և փոխպայմանավորվածության խնդիրներին է անդրադարձել նաև Յ. Մ. Ռեզնիկը[14]: Վերջինս քաղաքացիական մշակույթի կարևորագույն հատկանիշների թվում նշում է քաղաքացիական հասարակության արժեքային կողմնորոշումների ձևավորումը և դրանց խորհրդանշական արտացոլումը հանդիսացող ռացիոնալությունը, բազմակարծությունը և ժողովրդավարությունը:

Խնդիրների այս շարքին են անդրադարձել նաև Ե. Ս. Վիկտորովնան[15], Բ. Ն. Բեսսոնովը[16], Կ. Ս. Հաջիևը[17] և շատ այլ հեղինակներ:

Այսպիսով, սույն աշխատանքի շրջանակներում քաղաքական մշակույթ և քաղաքացիական մշակույթ հասկացությունների բնորոշ գծերի և առանձնահատկությունների քննությունը թույլ է տալիս եզրակացնել՝

- ի սկզբանե ձևավորվելով որպես քաղաքական կյանքի մասին այս կամ այն հասարակության պատկերացումների և ընկալումների հարաբերականորեն կայուն համակարգ՝ քաղաքական մշակույթը բովանդակային առումով ավելի լայն հասկացություն է և որպես այդպիսին միշտ առկա է հասարակության զարգացման գործընթացում:
- Անկախ այն հանգամանքից, թե քաղաքական վարչակարգերից որ տիպն է իշխում տվյալ քաղաքական համակարգում՝ ժողովրդավարակա՞ն, ավտորիտա՞ր, թե՞ խառը, խնդրո առարկա հասարակությանը միշտ բնորոշ է որոշակի տիպի քաղաքական մշակույթ: Այստեղ արդեն կարևորվում է այն հանգամանքը, թե քաղաքական մշակույթը պայմանավորող բաղադրիչներից որն է տվյալ հասարակության մեջ առավել կամ պակաս զարգացած, և այդ բաղադրիչներից որն է գերակայում

---

[13] Տե՛ս **Амелин В. Н**. Социология политики. М., 1992, էջ 113:

[14] **Резник Ю. М**. Гражданское общество как объект социологического познания // "Вестн. Моск. ун-та". Сер. 18, 1998, № 2, с. 32.

[15] Տե՛ս **Викторовна Е. С**. Становление гражданской культуры в современной России: Философский анализ. Ставрополь, 2004, էջ 26:

[16] Տե՛ս **Бессонов Б. Н**. Гражданское общество: история, сущность, проблемы развития. М., 1998, էջ 289:

[17] Տե՛ս **Гаджиев К. С**. О перспективах демократической государственности в России // "Политические исследования", 1994, № 3, էջ 45-49:

տվյալ հասարակության քաղաքական վարքի և, հետևաբար, քաղաքական կյանքին մասնակցության տեսանկյունից:

• Քաղաքացիական մշակույթ հասկացության պարագայում արդեն գործ ունենք քաղաքական մշակույթի զարգացածության (այսինքն՝ զարգացման առավելապես ժողովրդավարական մոդելին համապատասխանելու) որոշակի մակարդակի հետ:

• Քաղաքացիական մշակույթը կրող հասարակության անդամները ոչ միայն ունեն քաղաքական համակարգի և դրանում իրենց տեղի ու դերի մասին պատկերացումներ, այլ նաև տիրապետում են քաղաքական կյանքին մասնակցության գործուն և արդյունավետ մեխանիզմների, և հասարակության մեջ հստակորեն ուրվագծվում է քաղաքացիական գիտակցության նկատելի բարձր մակարդակ:

• Քաղաքացիական մշակույթ կրող կառավարողների դասը առավելապես հակված է մտածելու, որ հասարակությունը կամ դրա առանձին շերտեր ունեն քաղաքական սուբյեկտայնություն, հետևաբար, քաղաքական որոշումներ ընդունելիս միշտ հաշվի են առնվում դրանցից բխող հասարակական արձագանքները:

Բանալի բառեր - *քաղաքական մշակույթ, քաղաքացիական մշակույթ, ժողովրդավարացում, քաղաքական ինստիտուտներ, քաղաքական մասնակցություն, քաղաքական ակտիվություն*

КНЯЗЬ САРОЯН – ***К определению понятия гражданская культура***. – В статье рассматриваются концепции политической и гражданской культуры. Сопоставляются подходы разных авторов к основным различиям двух этих понятий. Выдвинута идея, что политическая культура как относительно стабильная система восприятия политической жизни всегда соответствует эволюции социума, причём независимо от политического режима. Подчёркивается, что наличие гражданской культуры способствует установлению в стране демократической модели. Иными словами, когда в обществе разработаны представления о политической системе и своей роли в ней, то неизбежно складываются эффективные механизмы политического участия, созданные на основе этих представлений.

Ключевые слова: *политическая культура, гражданская культура, демократизация, политические институты, политическое участие, гражданская активность*

KNYAZ SAROYAN – ***On the Definition of the Concept of Civic Culture***. – In the article, the reference is made to the concepts, political culture, and civic culture. Through the comparative analysis of different authors' approaches, the article attempts to demonstrate the existing differences in the meanings of the two concepts: political

culture and civic culture. Consequently, the article brings forward the thesis according to which political culture, as a relatively stable system of this or that society's ideas and perceptions on political life, is constantly present in the evolutionary process of that particular society. And this is true notwithstanding the type of regime that rules in that particular society. In case of civic culture the thesis, emphasized in the article, deals with a specific type of regime: a democratic model. To put it otherwise, this is the case, when the representatives of a society do not only possess perceptions on type of political system as well as on their place and role in that system, but on the basis of those perceptions they also possess efficient and effective mechanisms necessary for civic participation.

Key words: *Political Culture, Civic Culture, Democratization, Political Institutions, Political Participation, Civic Activeness*

ՀՀ-ՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ժողովրդավարական քաղաքական համակարգի կայացման ժամանակակից պատկերացումները սերտորեն առնչվում են քաղաքացիական հասարակությանը և իրավական պետությանը: Քաղաքացիական հասարակության (ՔՀ) մասին դատողություններն ու ուսումնասիրությունները մեզանում հրատապ դարձան վերջին 20-25 տարիների ընթացքում, որը պատմականորեն համընկնում է ԽՍՀՄ-ի փլուզման և հետխորհրդային-անցումային իրականության մեջ հայտնված պետությունների անկախացման գործընթացին:

ՔՀ զարգացման և կայացման համար ընտրված ռազմավարական ծրագրերի, օրենքների, իրավական և նորմատիվ ակտերի վրա ազդող գլխավոր գործոնը քաղաքական իշխանությունն է, որից կախված է ՔՀ հատվածի հետ գործընկերային հարաբերությունների մշակումը[1]: Թեպետ հետխորհրդային գրեթե բոլոր երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, սահմանվել են ՔՀ հատվածի գործունեության իրավական չափանիշները, սակայն ՔՀ-ի և իշխանությունների միջև գործընկերության բարենպաստ պայմաններ ստեղծելը դժվար գործընթաց է: Ժողովրդավարացման էական նվաճումներ արձանագրել են հետխորհրդային այն երկրները, որոնք խրախուսել և ֆինանսավորել են հասարակական կազմակերպությունների (ՀԿ) աճը (Լիտվա, Լատվիա, Էստոնիա, Հունգարիա): Պատկերը բոլորովին այլ է ԱՊՀ այն երկրներում, ուր իշխանություններն ընդունել են կրավորական դիրքորոշում ՀԿ-ների գործունեության ու արժևորման գործում[2]:

Հարյուրամյակներ շարունակ չունենալով պետություն և պետականության ինստիտուտներ, հայ հասարակությունը ինքնակազմակերպվել, գոյատևել ու, ավելին, ձևավորել, զարգացրել է հասարակա-

---

[1] Տե՛ս **Алексанян А. С.** Цивилиархические основы демократизации политического режима в Армении // «Центральная Азия и Кавказ». Журнал социально-политических исследований. Том 14, вып. 3, 2011, էջ 132-145, **Ա. Ս. Ալեքսանյան**, Կանանց քաղաքացիավարական ներկայացվածության հիմնախնդիրները ՀՀ-ում // Բանբեր Երևանի համալսարանի. Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, 144.6, 2014, № 3, էջ 36-46:

[2] Տե՛ս **Հ. Հովհաննիսյան**, Հասարակական համակարգի զարգացման հիմնախնդիրները, Եր., 2003, էջ 22:

կան տարբեր ինստիտուտներ: Որոշակի վերապահումներով քաղաքացիական ինքնակառավարման հաստատությունների շարքում կարելի է դիտարկել նաև պետականության բացակայության պայմաններում ավանդական ազգային կուսակցությունների գործունեությունը: ՀԿ-ների գործունեության զարգացման գործում կարևոր է տեղայնացնել ոչ միայն արևմտյան փորձն ու մոդելները, այլև հաշվի առնել ազգային ավանդույթներն ու Սփյուռքի ներուժը:

20-րդ դարի երկրորդ կեսը միջազգային և ազգային մակարդակներում նոր ակտորների՝ հասարակական և միջազգային կազմակերպությունների զարգացման ու գործունեության համար ունեցավ մեծ նշանակություն: ՀԿ-ները, որոնք կամավորության սկզբունքով ձևավորված ազատ քաղաքացիների միավորումներ են, բոլոր ժողովրդավար երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, ձևավորում են քաղաքացիական հասարակության հիմքը: Դրանք ոչ կառավարական, պետությունից հարաբերականորեն անկախ, շահույթ չհետապնդող կազմակերպություններ են, որոնց անդամները միավորվում են ընդհանուր նպատակների, շահերի և քաղաքացիական արժեքների շուրջ՝ նպատակ ունենալով լուծել ոչ միայն սեփական անդամների, այլև հասարակության առջև ծառացած սոցիալ-մշակութային, կրթական, գենդերային, բնապահպանական որոշ հիմնախնդիրներ, որոնք չեն հակասում կազմակերպության կանոնադրությանը:

ՀԿ-ները ՔՀ ձևավորման անհրաժեշտ պայմաններից են, վճռորոշ դեր ունեն ժողովրդավարության հաստատման և քաղաքական երկխոսության մշակույթի ձևավորման գործընթացում: 2012 թ. պաշտոնական տվյալների համաձայն՝ ՀՀ-ում գրանցված էին տարբեր ուղղվածություն ունեցող 3789 քաղաքացիական հասարակության կառույցներ (ՔՀԿ), որոնցից 1200-ից ավելին ԶԼՄ-ներ էին, 765-ը՝ հիմնադրամներ, 301-ը՝ իրավաբանական անձանց միություններ, 1500-ից ավելինն՝ հասարակական կազմակերպություններ[3]: 2014 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ-ում գրանցված էին 4066 ՀԿ-ներ, 902 հիմնադրամ և 296 իրավաբանական անձանց միություն[4]:

ՀԿ-ների պաշտոնական գրանցման և ակտիվ գործունեության առումով Հայաստանը տարածաշրջանում փոքր-ինչ զիջում է միայն Վրաստանին: Այս իրողությունն ունի իր օբյեկտիվ հիմքերը: Առաջին ու կարևոր պատճառն Արցախի չլուծված հիմնախնդիրն է, ինչի հետևանքով միջազգային դոնոր կազմակերպությունները հիմնականում գերադասում են գրասենյակներ հիմնել Վրաստանում, այլ ոչ ՀՀ-ում:

---

[3] Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան: USAID, CDPF: 15-րդ խմբագրություն», 2012, հունիս, էջ 2:

[4] Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան, ՔՁՀՀ/ԱՄՆ ՄԶԳ», 2014, հունիս:

Եվ երկրորդ պատճառը, որը պակաս կարևոր չէ, Վրաստանի նախկին նախագահ Մ. Սահակաշվիլու իրականացրած բարեփոխումներն էին:

ՀՀ-ում ՀԿ-ների ձևավորումը մեծապես կախված էր 1988 թ.-ի ավերիչ երկրաշարժի և Բաքվի, Սումգայիթի ողբերգական դեպքերի հետ, որոնց անմիջապես արձագանքեց միջազգային հանրությունը: Այս ընթացքում միջազգային կազմակերպությունները գրասենյակներ հիմնեցին Հայաստանում՝ իրականացնելով բարեգործական առաքելություն: Զուգահեռաբար ձևավորվեցին նաև տեղական ՀԿ-ներ, որոնք ֆինանսավորվում էին հիմնականում Սփյուռքից ու ՄԱԿ-ից: Հետագայում ՀԿ-ների գործունեության թիրախը կուտակված սոցիալական խնդիրների հաղթահարումն էր, քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ինստիտուտների կայացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը[5]:

ԽՍՀՄ նախկին պետությունների տարածքում տեղի ունեցող փոփոխությունները հասարակության կյանքի բոլոր ոլորտներում ստեղծեցին նոր իրականություն: Այս իրականության մեջ, սակայն, ինքնուրույն ու կայացած ՀԿ սեկտոր ստեղծելու խնդիր օրակարգում չկար: Իսկ սպորտային, մշակութային՝ նկարիչների ու երաժիշտների, կանանց ու երիտասարդների կազմակերպությունները կորցնում էին իրենց բնականոն գործունեության ռիթմն ու ուղղությունները: Այս կազմակերպությունները ոչնչանալուց փրկելու և դրանք տարբեր խմբերի շահերը պաշտպանող ինքնուրույն կազմակերպությունների վերածելու հարցը հետխորհրդային հասարակագետները կարևոր չհամարեցին: Միանգամայն նոր տիպի ոչ կառավարական կազմակերպությունների գրանցման դանդաղ գործընթաց տեղի էր ունենում հասարակության բոլոր շերտերում՝ արևմտյան քաղաքական մշակույթի ընկալումների շրջանակներում երրորդ սեկտորի դերի և տեղի վերաբերյալ անտեղյակության պայմաններում[6]:

Նշված իրողություններն ու հանգամանքները հաշվի առնելով՝ ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում երրորդ սեկտորի և դրա ամենաազդեցիկ ինստիտուտների՝ ՀԿ-ների ձևավորումը, գործունեությունն ու կառուցվածքը պետք է տարբերվեին ոչ միայն արևմտյան երկրների փորձից, այլև տարածաշրջանի մյուս պետություններից: Մասնավորապես՝

1) Հայաստանում գրանցված ՀԿ-ներից, հիմնադրամներից և իրավաբանական անձանց միություններից, սակայն, փորձագետների գնա-

---

[5] Տե՛ս «Հայաստանի ՀԿ սեկտորի գնահատում. Համեմատական հետազոտություն», Եր., 2004, էջ 11:

[6] Տե՛ս **Ա. Մկրտչյան**, Արևմտյան մոդելի երրորդ սեկտորի հարմարման գործընթացները հետխորհրդային հասարակություններում // «21-րդ դար», թիվ 3 (55), 2014, էջ 108

հատմամբ միայն 15 - 20 % է գործում[7]: Շատ կազմակերպություններ առկա են միայն թղթի վրա, քանի որ բազմաթիվ ՀԿ-ներ մեկ-երկու ծրագրի ավարտից հետո փաստացի դադարեցնում են իրենց գործունեությունը: Գրանցված ՀԿ-ների մոտ կեսը տեղակայված է Երևանում, իսկ մյուս կեսը գրեթե հավասարապես բաշխված է մարզերի միջև: Գյուղական ՀԿ-ների քանակը Հայաստանում շատ փոքր է, իսկ մարզային ՔՀԿ-ների մեծ մասը տեղակայված է մարզկենտրոններում: ՀՀ-ում ՀԿ-ները առավել հաճախ աշխատում են համայնքային զարգացման, սոցիալական ծառայությունների, բարեգործության, երիտասարդության հիմնախնդիրների և կրթության ոլորտներում:

Պաշտոնապես գրանցված ՀԿ-ների ավելի քան մեկ երրորդն իր գործունեությունը ծավալում է ամբողջ հանրապետությունում[8]:

2) ժամանակակից ընկալումներով ՀԿ-ների ստեղծման տարեթիվն ընդունելով 1988 թ.՝ կարելի է ուշագրավ դիտարկումներ անել ՀՀ-ում գործող կազմակերպությունների անվանումների վերաբերյալ: Մասնավորապես, եթե 1988 թ. դրանք հանրությանը հայտնի էին «Հայ օգնության ֆոնդ» (ՀՕՖ, 1988 թ.), «Առաքելություն Հայաստան» (1988թ.), «Վորլդ վիժն Հայաստան» (1988), «UOU–Քինդերդորֆ ինտերնացիոնալ» (1989, այնուհետև՝ UOU-Մանկական գյուղեր), «Save the children» (1993), «Ազնավուրը Հայաստանին»[9] անուններով , ապա ազգային զարթոնքը և անկախացումը ստեղծեցին հայ ինքնության և մշակույթի պահպանմանն ուղղված «Շեն», «Սասնա տուն», «Ակունք», «Ոստան», «Հայրենիք Հայոց», «Օրրան», «Զանգակատուն» և նմանատիպ այլ անվանումներով ՀԿ-ներ: Ընդամենը 10 տարի անց՝ 2000-ական թթ., ՀԿ-ներն սկսեցին ընտրել այնպիսի անվանումներ, որոնք հնարավորինս կարտահայտեին ժամանակի հասարակական, քաղաքական, սոցիալ-մշակութային և քաղաքացիական պահանջները՝ «Եվրոպական ինտեգրացիա» , «Սիվիլիթաս», «Կանանց ռեսուրս կենտրոն», «Խաղաղության երկխոսություն», «Քաղաքացիական հասարակության զարգացման և եվրոպական ինտեգրման կովկասյան երիտասարդության կենտրոն», «Մարդը կարիքի մեջ է», «Կանայք հանուն զարգացման», «Ազատ հասարակության ինստիտուտ», «Քաղաքակրթությունների երկխոսության ազգային կենտրոն» և այլն: Հատկանշական է, որ այս համատեքստում որքան ավելի հնչեղ են անվանումները, այնքան ավելի մեծ են միջազգային դոնորների կողմից հատկացվող դրամաշնորհներ ստանալու հնարավորությունները:

---

[7] Տե՛ս **Տ. Մարգարյան, Ա. Հակոբյան,** ՔՀԿ-ների ներգրավվածությունը քաղաքականության մշակման և իրականացման մոնիթորինգի գործում. կարիքներ և կարողություններ (Հայաստան), Եր., 2015, էջ 5:

[8] Տե՛ս նույն տեղը:

[9] Տե՛ս http://www.encyclopedia.am/pages.php?bId=2&hId=1012

3) ՀՀ-ում ՀԿ-ները շարունակում են ձևավորվել՝

ա) հասարակական հնչեղություն ունեցող որևէ խնդրի շուրջ, բ) դառնալով ՀՀ-ում միջազգային կազմակերպության մասնաճյուղ, գ) դրամաշնորհ ստանալու նպատակով, դ) ակտիվ քաղաքացիների նախաձեռնությամբ, ե) կրոնական որևէ գաղափարախոսություն քարոզելու նպատակով:

4) ՀՀ-ում գործող ՀԿ-ներից շատերը չունեն կայուն ու մշտական ֆինանսական ռեսուրսներ, հիմնական գրասենյակ, իսկ շատերն էլ իրենց ակտիվ գործունեությունը պարբերաբար լուսաբանելու հետևանքով չեն իջնում տպագիր ու էլեկտրոնային մամուլի էջերից: Հասկանալի է, որ խոսքը հիմնականում վերաբերում է միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցող ՀԿ-ներին և դրանց տեղական գրասենյակներին: Չնայած ոչ քիչ ռեսուրսներին՝ այս ՀԿ-ները չունեն սեփական գործունեության անկախություն և ստիպված են իրականացնել դոնորի ծրագրերը: Այլ խոսքով, նրանք պարզապես միջնորդ են ոչ թե իշխանության և հասարակության միջև, ինչը ՀԿ-ների առաջնային գործառույթն է ու գործունեության տրամաբանությունը, այլ դոնորի և ՀՀ-ի միջև: Նման կազմակերպությունները մասնագիտական գրականության մեջ հայտնի են «ցանցային կազմակերպություններ» անվամբ: Անկախ գործունեության և տեղակայման վայրից՝ միասնական են նրանց ծրագրերը, նպատակները, ուղերձները և անգամ աշխարհի տարբեր երկրներում տեղի ունեցող գործընթացների վերաբերյալ գնահատականները, դիրքորոշումներն ու վերաբերմունքը: «Նորավանք» գիտակրթական կենտրոնի կողմից 2004 թ. իրականացված վերլուծությունում կարելի է գտնել ասվածի ապացույցը: Մասնավորապես 1999 թ. ՌԴ-ում ազգային անվտանգության կողմից ձերբակալվեց ՌԱԱ, Կանադայի և ԱՄՆ-ի ինստիտուտների ռազմատնտեսական ոլորտի մասնագետ և նույն բաժնի վարիչ Իգոր Սուտյագինը[10] (հիշեցնենք, որ նա արտասահմանյան այցերից մեկի ժամանակ պետական գաղտնիք էր տրամադրել ամերիկյան լրտեսական գործակալներին): Այս իրադարձությանը արձագանքեցին ողջ միջազգային հանրությունը[11], եվրոպական և ամերիկյան, այդ թվում՝ նաև ռուսական իրավապաշտպան ՀԿ-ները[12]: Նրանք ՌԴ իշխանություններին մեղադրում էին անմեղ մարդուն կալանավորելու և քաղաքացու հիմնարար ազատություններն ու իրավունքները ոտնահարելու, մի շարք կոնվենցիաների և հռչակագրերի դրույթներն անտեսելու մեջ: Իրենց օտարերկրյա գործընկերներից հետ չմնացին նաև մեր իրավապաշտպան ՀԿ-ներն ու մի-

[10] Տե՛ս http://www.hrw.org/legacy/backgrounder/eca/russia/index.html

[11] Տե՛ս http://topics.nytimes.com/top/reference/timestopics/people/s/igor_v_sutyagin/index.html, http://www.theguardian.com/world/2010/aug/17/igor-sutyagin-spy-swap

[12] Տե՛ս http://www.newsru.com/dossier/5777.html

ջազգային կազմակերպությունների տեղական գրասենյակները, մասնավորապես՝ Հելսինկյան ասոցիացիայի անդամները կոչ էին անում ազատ արձակել Սուտյագինին: ՀՀ-ում անգամ նախաձեռնվեց ստորագրահավաք:

Բոլորովին խնդիր չունենալով քննադատելու վերջիններիս դիրքորոշումն ու նախաձեռնություններն այս հարցում, բերենք ևս մեկ օրինակ:

2014 թ. ՌԴ-ում ձերբակալվեց հայազգի գործարար ու բարերար Լևոն Հայրապետյանը: Բազմաթիվ միջազգային կառույցների, այդ թվում և ռուսական ՀԿ-ներից շատերի գնահատականով դա քաղաքական պատվեր էր, և ըստ նրանց՝ Հայրապետյանը ապօրինի էր պահվում բանտախցում: Որպես փաստարկ հղում էր կատարվում նաև ՌԴ կառավարության կողմից հաստատված հիվանդությունների ցանկին, որոնցից առնվազն մեկի դեպքում չէր կարելի մարդուն, անկախ նրա կատարած հանցանքից, պահել բանտում: Դեպքը լայն քննարկում ստացավ տեղական և միջազգային ԶԼՄ-ներում: Հայաստանյան որևէ իրավապաշտպան ՀԿ ոչ մի կոչ չարեց, որևէ ստորագրահավաք չնախաձեռնեց և զերծ մնաց գնահատականներ տալուց: Հանուն արդարության նշենք, որ քաղաքացիական հասարակության որոշ ակտիվիստների կողմից իրականացվեց ակցիա, որի մասնակիցները, հասնելով ՌԴ դեսպանատուն, նամակ հանձնեցին դեսպանին: Շեշտենք, որ ակցիան կազմակերպեցին ոչ թե ՀՀ-ում իրավապաշտպան ՀԿ-ները, այլ ակտիվ քաղաքացիները: Նշված երկու օրինակների միջոցով փորձեցինք ներկայացնել ցանցային կազմակերպությունների և դոնորի սցենարով աշխատող տեղական ՀԿ-ների գործունեության առանձնահատկությունները:

Ըստ իս, այսօրինակ դեպքերը կարող են հասարակության մեջ կարծիք ձևավորել, թե ՀԿ-ները գրանտակերներ են և կառավարվում են դրսից՝ հեռակառավարման վահանակի միջոցով՝ դառնալով գործիքներ՝ այլ երկրների ներքին գործերին խառնվելու նպատակով:

5) ՀՀ-ում պաշտոնապես գրանցված ՀԿ-ների ճնշող մեծամասնությունը գոյություն ունի միայն «դե յուրե»: Հաճախ պաշտոնապես գրանցված որոշ ՀԿ-ների հասցեներ փնտրելիս կամ հեռախոսահամարը հավաքելիս պարզվում է, որ հարցվողը տեղյակ չէ իր անունով գրանցված կազմակերպության, և, առավել ևս, դրա գործունեության մասին: Անհասկանալի է, թե ինչո՛ւ են գրանցել ՀԿ-ն, ինչո՛ւ պատահական մարդու անունով: Շատ են նաև այն դեպքերը, երբ փաստացի չգործող ՀԿ-ները չեն լուծարվում փաստացի, շարունակում են գոյություն ունենալ «թղթի վրա»: Նշենք, որ ՀՀ ՀԿ գործող օրենքով հստակեցված չէ, թե ինչպես պետք է տնօրինվի լուծարված ՀԿ-ի գույքը:

Այս առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կարելի է եզրակացնել, որ պաշտոնապես գրանցված ՀԿ-ների թվի բարձր ցուցանիշը բոլորորվին չի խոսում ՀՀ-ում ՔՀ կայացվածության մասին:

6) Ակտիվ գործող ՀԿ-ների ղեկավարների և անդամների մեծ մասն ունի կայուն քաղաքացիական դիրքորոշում, բարձր ինքնագիտակցություն, իրավատիրության զգացում և մտավոր ներուժ: Առավել ցածր մակարդակում է գտնվում նրանց կողմից ղեկավարվող ՀԿ-ների ինստիտուցիոնալ զարգացումը: Տիրապետելով օտար լեզուների և ունենալով համակարգչային իմացության բարձր հմտություններ՝ նրանք ամուր կապեր ունեն ոչ միայն տեղական մյուս ՔՀԿ-ների և ՀԿ-ների, այլև իշխանության տարբեր օղակների ներկայացուցիչների հետ (օրինակ՝ «Սոցիոմետր», «Գելափ», «Կովկաս», «Սիվիլիթաս», «Եվրոպական ինտեգրացիա», «Համալսարանական կրթությամբ կանայք», «Կրթություն առանց սահմանների» և այլն): Նրանք ցուցաբերում են հանրային մասնակցության, պատրաստակամության և քաղաքացիական նախաձեռնողականության բարձր մակարդակ: Այս ամենով հանդերձ, սակայն, ոչ բոլորն են պատրաստ իրենց ռեսուրսները տրամադրել հասարակական խնդիրների լուծման և պահանջմունքների բավարարման համար: Այս իրողությունը շատ հաճախ դրամաշնորհ տրամադրող կազմակերպության սեփական շահերի հետևանք է, որը ոչ միշտ է համընկնում մեր հասարակության առջև ծառացած խնդիրներին ու դրանց լուծման առաջնահերթությանը. հաճախ կարող են սխալ ընտրվել թիրախ խումբն ու լուծում պահանջող խնդիրները, իսկ ծախսված ռեսուրսները դառնալ անարդյունավետ ու ոչ շոշափելի: Օրինակ՝ 2014 թ. «Համահայկական ծնողական կոմիտե» նախաձեռնող խմբի կողմից հանրությանը ներկայացվեց մի տեսանյութ, որտեղ 15-16-ամյա հայ աղջիկն Ազատության հրապարակում մասնակցում էր ֆլեշմոբի՝ կազմակերպված «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից: Աղջիկը նստած տեղից վեր է կենում, դեն նետում տիկնիկները, ապա կտրում երկար վարսերը, մատիտով բեխեր նկարում երեսին, դնում գլխարկն ու իր հետևից տանում է նույն գործողությունը կրկնող այլ աղջիկների: Այս ակցիան բուռն քննարկումների տեղիք տվեց, սակայն իրենց ծրագրի կարևորությունը հիմնավորելու համար «Կանանց ռեսուրս կենտրոն» ՀԿ-ի կողմից բերված փաստարկները որևէ քննադատության չէին դիմանում: Այս դրամաշնորհը, որի չափը ոչ մի կերպ չհաջողվեց իմանալ, հայ հասարակության համար ոչ մի խնդիր չլուծեց, ավելին՝ գումարեց նորերը: Սակայն, մյուս կողմից, զուցե հենց դա էր դրամաշնորհ հատկացնող կազմակերպության ծրագիրը կամ նպատակը:

Հաճախ միջազգային կազմակերպությունները հրաժարվում են ֆինանսավորել ազգային շահեր քարոզող ՀԿ-ների ծրագրերը: Իհարկե,

մեծ ցանկության դեպքում կարելի է սինթեզել ազգայինն ու արևմտյանը կամ գտնել այն ռացիոնալ հատիկը, որի շուրջ կարելի է մաններել:

7) ՀՀ հասարակական համակարգում վերջերս կարելի է նկատել ևս մեկ առանձնահատկություն. խոսքը նորաստեղծ երիտասարդական կազմակերպությունների մասին է: Այս ՀԿ-ները ամեն կերպ փորձում են մոտ գտնվել իշխանություններին՝ մի կողմից՝ որպես ՀԿ պետության կողմից հատկացվող դրամաշնորհներից օգտվելու, մյուս կողմից՝ ստեղծված կապերն օգտագործելով նրանց շարքերում ընդգրկվելու համար («Սյունյաց արծիվներ», «Հայաստանի երիտասարդական հիմնադրամ», «Բազե», «Կրթություն առանց սահմանների» և այլն): Ասվածից կարող ենք եզրակացնել, որ ակտիվ երիտասարդների մի խումբ իշխանամերձ կամ իշխանական օղակներում հայտնվելու համար ստեղծում է ՀԿ-ներ: Հասարակական ոլորտում որոշ ուշագրավ միջոցառումներ իրականացնելուց հետո՝ ծառատունկ, կամավորական աշխատանքներ, ընդդիմության հասցեին քննադատող ելույթներ, այս երիտասարդները իշխանության ոլորտում հայտնվելու խնդիրն են լուծում:

8) ՀՀ-ում ՀԿ-ների գործունեության ու գործառության մշտադիտարկումները թույլ են տալիս դրանց դասակարգել ըստ ակտիվության աստիճանի՝ ա) գրեթե չգործող կամ պասիվ, բ) բավարար ակտիվ կամ ակտիվ, գ) առավել ակտիվ կամ հանրաճանաչ: Բազմաթիվ զեկույցների («ՀՀ հասարակական սեկտորի գնահատում», «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան» և այլն) համաձայն՝ ՀԿ-ների մեծամասնությունը դեռևս գտնվում է կենսացիկլի զարգացման փուլում: Շատ ՀԿ-ների ղեկավար խորհուրդը փաստացիորեն չի կատարում իր գործառույթները, ռազմավարական պլանավորումը պատշաճ կերպով չի իրականացնում, ֆինանսական կայունության և կարողությունների պակաս կա. այս բոլոր խնդիրները ՀԿ-ների զարգացումը խոչընդոտող լուրջ բացեր են: ՀԿ-ների աշխատակազմը ներգրավվում է հիմնականում ծրագրային հիմքի վրա, քանի որ դրանց մեծամասնությունը հնարավորություն չունի վարձատրելու մշտական աշխատողների[13]:

Գրեթե չգործող կամ պասիվ գործող ՀԿ-ները չունեն գրասենյակ, գույք, հիմնական աշխատակազմ: Ուշագրավ է, որ այսպիսի կազմակերպությունների մեծ մասը գտնվում է մարզերում: Պայմանականորեն այս խմբին կարելի է դասել նաև նոր ստեղծվող ՀԿ-ները, որոնք դեռ չեն հասցրել իրականացված ծրագրերով հայտնի դառնալ և ինչ-որ չափով ճանաչվել հասարակության մեջ[14]:

Ակտիվ կամ բավարար չափով ակտիվ ՀԿ-ներն, ի տարբերություն

[13] Տե՛ս **Տ. Մարգարյան, Ա. Հակոբյան**, նշվ. աշխ., էջ 19:

[14] Տե՛ս **Թ. Վարդանյան**, ՀՀ հասարակական համակարգի հիմնախնդիրներն արդի փուլում: Եր., «Նորավանք» ԳԿՀ, 2004, էջ 25:

նախորդ խմբում դասակարգվածների, ունեն սեփական գրասենյակներ, հասցե, պաշտոնական էլեկտրոնային կայք, բավարար թվով անդամներ[15]: Դրանք բավականին հայտնի են հասարակությանը, ինչն ուղիղ համեմատական է նրանց կողմից իրականացված ծրագրերի որոշակի օգուտին: Բոլորովին այլ է պատկերը ակտիվ գործող ՀԿ-ների դեպքում: Նրանց անունը քաջ հայտնի է հասարակությանը ԶԼՄ-ների՝ առավել հաճախ լուսաբանումների հետևանքով: Իրականացված ծրագրերի արդյունավետությունը բարձր է, իսկ դրանց մասին ողջ տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ համացանցային էլ. կայքերում: Այս ՀԿ-ների ակտիվ գործունեությունը մեծ մասամբ պայմանավորված է շոշափելի ֆինանսական ռեսուրսներով: Դրանց նախագահները սովորաբար ճանաչված մարդիկ են ոչ միայն ՀՀ-ում, այլև տարածաշրջանում և արտասահմանում:

9) Մեզանում ՀԿ-ների գործունեության արդյունավետության ու ակտիվության մասին կարելի է տեղեկանալ տեղական կամ միջազգային կազմակերպությունների զեկույցներում, Հանրային խորհրդի ու ՄԻՊ-ի տարեկան հաշվետվություններում և այլն: ՀՀ-ում գործող կազմակերպությունների գործունեության ուղղությունները կարելի է առանձնացնել ըստ ոլորտների՝ կրթական, բնապահպանական, իրավապաշտպան, երիտասարդության, կանանց հիմնախնդիրներով և այլն: Շատ հաճախ միևնույն հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ները տեղեկացված չեն միմյանց գոյության մասին, սակայն շատ հարցեր կարելի է լուծել համատեղ ջանքերով՝ գումարելով ռեսուրսները, անձնական կապերը, փորձն ու գիտելիքները, հմտություններն ու թիմային աշխատանքը: Սա վկայում է, որ ՀԿ-ները ճիշտ չեն գիտակցում իրենց տեղն ու դերը , հասարակական խնդիրների մասին տեղեկացված են ոչ թե սեփական ուսումնասիրություններից, այլ ուրիշ աղբյուրներից: Այս ամենի արդյունքում հասարակությունն ինքը չի ճանաչում և, որ ավելի վատ է, չի վստահում ՀԿ-ներին՝ նրանց համարելով իշխանական կառույցների կցորդներ կամ արտասահմանյան կազմակերպությունների գործակալներ: Նշենք, որ հասարակական կարծիքի ուսումնասիրությունների տարբեր մշտադիտարկումները ցույց են տվել, որ այսօր մեր հասարակության համար առավել գերադասելի է ունենալ հզոր քաղաքական իշխանություն, քան կայացած ՀԿ սեկտոր[16]:

10) Շատ հաճախ մեզանում՝ հատկապես երիտասարդների շրջանում, ՀԿ-ները ծառայում են որպես «ցատկահարթակ» դրսում հայտնվելու համար: ՀՀ-ում ՀԿ-ները ոչ միայն սնվում են օտարերկրյա դոնորնե-

[15] Տե՛ս նույն տեղը, էջ 22:

[16] Այդ մասին տե՛ս **Ռ. Խուրշուդյան,** Արդի հասարակության զարգացման ուղիները, // «Հանրապետական», թիվ 6 (15), // 2004, էջ 2 :

րից, այլև սերտորեն համագործակցում են նրանց հետ՝ իրականացնելով փոխանակման տարբեր ծրագրեր: Այսպիսի ծրագրերը ենթադրում են շոշափելի ֆինանսական ռեսուրսներ և արտերկրում աշխատանքի ձեռքբերման հեռանկար: ՀԿ անդամները հնարավորություն են ունենում ստանալու ֆինանսական միջոցներ՝ բարելավելով իրենց բարեկեցությունը՝ մինչ պետական աշխատանք գտնելը: Առաջին հայացքից այս գործընթացը կարելի է դրական համարել: Բացասական է, սակայն, այն, որ նախ՝ աշխատանքային տարիները չեն համարվում ստաժ, և երկրորդ՝ արտասահման մեկնողների շատ քիչ տոկոսն է վերադառնում[17]:

11) ՀՀ-ում ՀԿ-ները ֆինանսական կամ այլ օգնություն գրեթե չեն ստանում մասնավոր սեկտորից: Այս խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է նախ կարևորել ՔՀ դերը ժողովրդավարության ամրապնդման մեջ, նույն սկզբունքով շեշտադրելով ՔՀ կայացման գործընթացում ՀԿ-ների դերը: Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը (ԿՍՊ), որը բիզնես հատվածի օրակարգի անբաժան մասն է ամբողջ աշխարհում, դեռևս նոր զարգացող հայեցակարգ է Հայաստանում: Առևտրային հատվածի որոշ ներկայացուցիչներ երբեմն շփոթում են ԿՍՊ գաղափարը բարեգործության հետ[18], իսկ այն ձեռնարկությունները, որոնք որդեգրել են ԿՍՊ քաղաքականություն, չեն դիտում ՔՀԿ-ներին որպես լիարժեք գործընկերներ: Խոշոր ընկերությունները առավել հաճախ նախընտրում են սոցիալական և բարեգործական ծրագրեր իրականացնել՝ առանց ՔՀԿ-ներին որպես միջնորդ կազմակերպություն ընդգրկելու: Ընկերությունները կարծում են, որ շատ ՔՀԿ-ներ պատրաստ չեն բիզնես ոլորտի հետ հաղորդակցվելու և ավելի շատ մտածում են ֆինանսավորում հայթայթելու, քան առաքելություն իրականացնելու մասին[19]: Ինչպես պետության հետ համագործակցության դեպքում, այնպես էլ այստեղ, ՔՀԿ-ների հանդեպ վստահության պակասը համագործակցության հիմնական խոչընդոտներից է: Համաձայն ՔՀԿ-ներին տված գնահատականի՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությունը ամենաթույլն է մյուս բոլոր դերակատարների հետ համագործակցության համեմատությամբ՝ 10-ից 3,91 միավոր, որտեղ 10-ը համագործակցության ամենաբարձր մակարդակն է[20]:

---

[17] Տե՛ս **Թ. Վարդանյան, Կ. Ավետիսյան,** Երիտասարդական հասարակական կազմակերպությունների դերը, Եր., 2005, էջ 24:

[18] Տե՛ս **Մ. Թաղևոսյան, Լ. Հակոբյան,** Կոորպորատիվ սոցիալական պատասխանատվություն. Գործունեության նոր շրջանակ, // «Քաունթերփարթ ինթերնեյշնլ», CIVICUS, Քաղաքացիական մասնակցության համաշխարհային միավորում: Եր,, 2010:

[19] Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ 2013. Հայաստան, ՔՁՀՀ/ԱՄՆ ՄԶԳ», հունիս, 2014:

[20] Տե՛ս «ՍՈՑԻՈՄԵՏՐ» անկախ սոցիոլոգիական կենտրոնի իրականացրած ուսումնասիրություն («Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ի հետ համատեղ), Եր., 2014, էջ 39:

Վերջին 10 տարիներին հայաստանյան որոշ ՀԿ-ներ այս խնդիրը լուծելու համար արդեն այսօր քայլեր են ձեռնարկում կրթության ոլորտում՝ ոչ ֆորմալ կրթության մեջ ներառելով նաև ԿՍՊ-ի և գործարար էթիկայի վերաբերյալ բաղադրիչներ: «Երկրորդ սեկտորը պետք է ճիշտ գնահատի իրադրությունը և հասկանա, որ 3-րդ սեկտորի զարգացումը շահեկան է նաև իրեն»[21],-նշում է Գ. Պողոսյանը:

Այսօրվա իրավիճակը բացառում է 2-րդ սեկտորի շահագրգռվածությունը համագործակցության եզրեր ունենալու ՀԿ-ների հետ: ՀԿ-ներն իրենք շատ հաճախ ռեալ չեն գնահատում իրենց ուժերը և չեն գիտակցում իրենց դերը, ինչո՞ւ պիտի մասնավոր հատվածն ու պետական մարմինները գնահատեն նրանց: Սա հասարակության մեջ կարծրատիպ է ձևավորում, թե ՀԿ-ներն ստանում են դրամաշնորհներ, գումարը ծախսում, իսկ իրենք մնում են իրենց խնդիրների հետ միայնակ: Թեև այսօրվա ՌԴ-ն հեռու է ՀԿ սեկտոր–պետություն արդյունավետ համագործակցության օրինակ լինելուց, սակայն ՌԴ նախագահ Վ. Պուտինի ակնարկն այս առումով թույլ է տալիս դրական կանխատեսումներ անել նաև ԵԱՏՄ անդամակցող երկրների համար. «Աշխարհը գլոբալացվում է: Սա իրողություն է, և ոչ մի ժողովրդավարական արժեքների ձգտող երկիր չի կարող խոսել զարգացման մասին՝ անտեսելով ՔՀ-ն: Առանց հասուն ՔՀ–ի մարդկանց հրատապ խնդիրների արդյունավետ լուծումն անհնար է»[22]: Նա միաժամանակ նաև մտավախություն ունի՝ կապված որոշ ՀԿ-ների գործունեության հետ. «…մի շարք ՀԿ-ների համար գերակա խնդիր է միջազգային հեղինակավոր հիմնադրամներից ֆինանսներ ստանալը, մյուսների համար՝ կասկածելի խմբերին ու առևտրային շահերին ծառայելն այն ժամանակ, երբ պետության և քաղաքացիների առջև ծառացած սուր խնդիրները նրանց կողմից մնում են անտեսված»[23]:

12) Գաղտնիք չէ, որ ՀԿ-ները նաև ժամանակավոր զբաղվածության խնդիր են լուծում: Սա առաջին հայացքից դրական է և անգամ ողջունելի: Կարևորելով դրականը, նշենք նաև որոշ բացասական կողմեր: Ընդգրկվելով տարբեր ՀԿ շարքերում, որոշ դեպքերում նաև ոչ քիչ գումարներ վաստակելով, քաղաքացին սկսում է ՀԿ –ն համարել իր հիմնական աշխատավայրը: Սա մի կողմից շահագրգռում է ՀԿ անդամին առավել բարձր որակով իրացնել իր ներուժն ու հնարավորությունները, սակայն մյուս կողմից խախտվում է թե՛ ՀԿ-ների, թե՛ հասարակական գործունեության տրամաբանությունն ու բովանդակությունը: ՀԿ-ում ընդգրկված մարդիկ իրականացնում են տարբեր ծրագրեր, որոնց

[21] **Погосян Г.А.** Армянское общество в трансформации. Ер., 2003, с. 231.

[22] «Послание Президента РФ Федеральному Собранию» // http://www.regnum.ru/allnews/267244.html

[23] Նույն տեղում:

մեծ մասը՝ դրսի դրամաշնորհի շրջանակներում և նրանց պատվերով: Մի կողմից կրկին արժևորվում են դրսի շահերն ու պահանջները, որոնք միշտ չէ, որ կարող են համընկնել մեր հասարակության խնդիրների հետ և առավել ևս բխել ազգային շահերից: Եվ երկրորդ, չունենալով պետական աշխատանք, քաղաքացին իր ողջ մտավոր, հաճախ նաև ֆիզիկական ներուժը ներդնում է ծրագրում՝ գումարների դիմաց: Տարածված գործազրկության պայմաններում քաղաքացուն քիչ է մտահոգում, թե ծրագիրն ինչ չափով կամ ինչ ազդեցություն կունենա հասարակության վրա, արդյոք այդ տարիները կգրանցվեն աշխատանքային գրքույկում, թե ոչ:

13) Միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների ուսումնասիրությունները վկայում են, որ Հայաստանում ՀԿ-ները հաճախ անձնավորվում են տվյալ կազմակերպության ղեկավարի կամ նախագահի հետ[24]: Այս հանրային ընկալումը մեզանում բավական տարածված է նաև քաղաքական կուսակցությունների առումով: Սակայն այս մոտեցումը չի սահմանափակվում միայն հանրային ընկալմամբ: Այն առավել ակնհայտ է ՀԿ ներսում իրականացվող գործնական քաղաքականությամբ, մասնավորապես որոշումների ընդունման, հասարակական միջոցառումներին ներկայանալու ժամանակ:

2010 թ. «Կովկաս» ՀԿ-ի կողմից իրականացված հետազոտությունները փաստում են, որ ՀՀ ՔՀԿ-ների, ՀԿ-ների անդամների՝ իրենց կազմակերպություններում որոշումներ ընդունելու գործընթացների վրա ազդելու ցուցանիշը, սեփական գնահատականներով, բավականին ցածր է. «Համապատասխանաբար՝ 2,1 և 2,0 միավոր՝ 5 հնարավորից»[25]: 2013 թ. ՀՀ ՀԽ քաղաքացիական հարցերի կայացման հանձնաժողովի կողմից մշակվեց «ՀՀ–ում ՔՀ կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգը»: Բազմաթիվ խնդիրների և բացթողումների հնարավոր լուծումների շարքում կարելի է գտնել նաև ըստ էության կենսունակ առաջարկություններ: Առաջիկայում ՀԿ-ների կազմակերպչական կարողությունների և հմտությունների զարգացման հիմնական ուղղություններից մեկն էլ պետք է լինի ներքին ժողովրդավարության և մասնակցային մեխանիզմներին կենսական նշանակություն հաղորդելը և սեփական անդամների համար ևս հաշվետվողականության և թափանցիկ աշխատելաոճի մակարդակի բարձրացումը[26]:

---

[24] Տե՛ս «ՔՀԿ կայունության ցուցանիշ. Հայաստան, USAID, CDPF, 19-րդ խմբագրություն», 2012, հունիս, էջ 3-4:

[25] «Հայաստանում հասարակական-քաղաքական մասնակցության գենդերային առանձնահատկությունները: Ձեկույց սոցիոլոգիական հետազոտության արդյունքների վերաբերյալ»: UNFPA, «Կովկաս» հասարակագիտական հետազոտությունների կենտրոն, Եր., 2011, էջ 64:

[26] Տե՛ս «ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ», Եր., 2012, էջ 23:

14) Միջազգային կազմակերպություններից և այլ դոնորներից դրամաշնորհ ստացող ՀԿ-ները պատշաճ հաշվետվություններ և հանգամանալից զեկույցներ են ներկայացնում իրենց իրականացրած ծրագրերի և ֆինանսական միջոցների սպառման վերաբերյալ: Հատկանշական է, որ ՀԿ-ների մասին ՀՀ օրենքում նշվում է, որ գործող կազմակերպությունը պարտավոր է ընդհանուր ժողովին առնվազն երկու տարին մեկ անգամ ՀԿ-ի գործունեության, գույքի օգտագործման, իրականացված ծրագրերի վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել[27]: Օրենքում չի հստակեցվում, թե այդ հրապարակայնությունն ապահովելու համար առավել ընդունելի և իրավաբանորեն ճիշտ ձևը որն է: Բացակայում է նաև հաշվետվությունների համար մշակված և կիրառվող ընդունելի ձևանմուշը: ՀԿ-ների էլեկտրոնային պաշտոնական էջերի և azdarar.am կայքի թեթևակի ուսումնասիրությունից անգամ երևում է, որ տեղական կազմակերպությունները առանձնապես ոգևորված չեն հաշվետվություն ներկայացնելու՝ հատկապես «դեպի վար» հրապարակայնություն ապահովելու համար: ՀԿ-ները պարբերաբար և հանգամալից հաշվետվություններ են ներկայացնում դեպի «վեր»՝ դոնորներին և պետական մարմիններին, բայց թերանում են կամ դժկամ են հասարակության, շահառուների նկատմամբ, իսկ որոշ դեպքերում նաև սեփական անդամներին ներկայացնելիս:

15) ՀԿ-ների առաջնային հիմնախնդիրներից է ֆինանսական կենսունակության ու կայունության ապահովման մեխանիզմների ձևավորումը[28]: Ըստ պաշտոնական տվյալների՝ վերջին երեք տարիների ընթացքում ՀՀ-ում գործող ՀԿ-ների 75 %-ը ֆինանսավորման հիմնական աղբյուր նշել է միջազգային կազմակերպություններին, 14 %-ը՝ պետական մարմիններին, 11 %-ը՝ նվիրատվություններն ու անդամավճարները[29]: Խնդիրը տեղական ՀԿ-ներին մշտապես կողմնորոշում է դեպի արտաքին կառույցների դրամաշնորհներ: Այս իրողությունը միշտ արդիական է եղել ՀԿ-ների համար՝ սկսած 1988-ական թթ. մինչ օրս[30]: ՀԿ-ների կենսունակության և գործունեության իրականացման համար ֆինանսավորման հիմնական հույսը Հայաստանում դեռևս մնում են դրսի դրամաշնորհները: Շոշափելի արդյունքներով ծրագրերի մեծ մասն իրականացվում է դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրված դրամաշնորհների հաշվին և միջոցով: Դրամաշնորհներ տրամադրում է նաև պետությունը: Սակայն այս գործընթացն աչքի է ընկնում

[27] Տե՛ս «Հասարակական կազմակերպությունների մասին ՀՀ օրենքը», // http://www.arlis.am/documentview.aspx?docid=337 //:

[28] Տե՛ս «Հայաստանի քաղաքացիական հասարակությունը: Անցումային փուլից մինչև համախմբում., Վերլուծական զեկույց», Եր., 2010, էջ 44-46:

[29] Տե՛ս **Տ. Մարգարյան, Ա. Հակոբյան,** նշվ. աշխ., էջ 7:

[30] Տե՛ս «ՀՀ օրենքը Հասարակական կազմակերպությունների մասին» (հոդված 15, կետ 1, ենթակետ 6):

խիստ կառավարելի քաղաքականությամբ, թափանցիկ ընթացակարգերի բացակայությամբ, տրամադրվող դրամաշնորհների և իրականացվող ծրագրերի վերաբերյալ ինֆորմացիայի դժվար մատչելիությամբ և միայն «յուրայիններին» տրամադրելու մտադրությամբ[31]:

16) ՀՀ-ում չի գործում ՀԿ-ների տվյալների ամբողջական շտեմարան: Գործնականում գրեթե անհնար է այս կազմակերպությունների տվյալների, գործունեության ուղղությունների վերաբերյալ որևէ տեղեկություն գտնել: Անհրաժեշտություն է առաջանում օգտվելու ամենատարբեր աղբյուրներից: Առկա բացը քիչ թե շատ լրացնում է Spyur.am կայքը: ՀԿ-ՀԿ համագործակցության կապն ամրապնդելու, հանրային քննարկումներին կամ լսումներին բոլոր շահագրգիռ ՀԿ-ներին մասնակից դարձնելու և, ի վերջո, միևնույն գործով զբաղվող ՀԿ-ներին իրար հետ «ծանոթացնելու» համար առաջարկում ենք ստեղծել առցանց շտեմարան, ուր պարտադիր կերպով տեղ կգտնեն ՀՀ-ում պաշտոնապես գրանցված, գործող բոլոր ՀԿ-ները՝ սեփական տվյալների լիարժեք ընդգրկմամբ:

17) Ըստ պաշտոնական տվյալների՝ 2010 թ. ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել է 66 կրոնական կազմակերպություն[32]: Ցավոք, 2011-2015 թթ. այս առումով համապարփակ վերլուծություններ և զեկույցներ չկան: Վերջին զեկույցը՝ «Կրոնական հանդուրժողականությունը Հայաստանում» իրականացվել է 2010 թ. ԵԱՀԿ հայաստանյան գրասենյակի կողմից[33]: Սակայն խնդիրը գրանցված կրոնական կազմակերպությունների քանակը չէ և ոչ էլ անգամ դրանց նկատմամբ հասարակության հանդուրժողականության աստիճանը: Խնդիրն այն է, որ թերի օրենսդրության հետևանքով որոշ կրոնական կազմակերպություններ պետականորեն գրանցվում են որպես հասարակական կազմակերպություն[34]: Սա ևս ՀՀ-ում ՀԿ կառուցվածքային գործառական առանձնահատկություններից է և ունի թաքնված ռիսկեր թե՛ հասարակության, թե՛ ազգային անվտանգության և թե՛ ՀԿ-ների հեղինակության համար:

Ամփոփելով ՀՀ-ում ՀԿ-ների գործունեության առանձնահատկությունները, նշենք՝

1. որքան էլ զարմանալի թվա, սակայն նույնիսկ խորհրդային տարիներին ոչ կառավարական կազմակերպությունները իրենց գործունեությամբ կարողացել են հիմք դնել և հնարավորին չափ զարգացնել Սփյուռքի հետ կապերը: Մասնավորապես, շնորհիվ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի և սփյուռքահայության հետ

---

[31] Տե՛ս «ՔՀ կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում»: Հետազոտական արդյունքների վերլուծություն: USAID, PFCS, CDPF, Եր., 2012, էջ 5-9:

[32] Տե՛ս http://www.gov.am/u_files/file/kron/Tsutsak2-%20herakhos-new.pdf

[33] Տե՛ս http://www.osce.org/hy/yerevan/67675?download=true

[34] Տե՛ս http://armenpress.am/arm/print/605451

կապերի կոմիտեների գործունեության, արտերկրի հայ էթնոսի մի ստվար զանգված կարողանում էր շփվել ազգային-մշակութային արժեքների հետ:

2. Ֆինանսական հոսքերի կամ միջազգային կազմակերպությունների դրամաշնորհների հետ միաժամանակ ՀՀ են ներխուժում նաև մեր հասարակությանը խորթ, երբեմն նաև վտանգավոր «արժեքներ»: Այս միտումը բացասաբար է անդրադառնում ՀԿ սեկտորի վերաբերյալ հանրային ընկալման, հասարակության գնահատականի և իշխանության համար գործընկեր դառնալու գործընթացի վրա. եվրոպական արժեքային համակարգի «ներմուծումը» հայ հասարակության մեջ համարվում է լուրջ մարտահրավեր ՀՀ-ում ազգային արժեքների պահպանմանը:

3. ՀԿ-ները սնվում են ոչ թե ներքին, այլ հիմնականում արտաքին աղբյուրներից: Այս կապակցությամբ Սթիվեն Սեմփսոնը նշում է հետևյալը. «ՀԿ լիդերները արևմտյան ծրագրերի պահաջներով ձեռք են բերում հմտություններ, բայց ձեռք չեն բերում արժեքներ… Իրական խնդիրն այն չէ, որ «մենք» «մեր արժեքները» դնում ենք «իրենց» վրա, այլ այն, թե ինչու են «նրանք» դա ընդունում: Այս հարցն ունի ցինիկ պատասխան՝ փողի դիմաց ու փողի համար»[35]: Այս իրողության մեջ կան թե՛ վտանգներ, թե՛ մարտահրավերներ, թե լատենտ ռիսկեր: Սովորաբար ՀԿ-ներում ներգրավված են համեմատաբար ակտիվ ու կիրթ երիտասարդները: Նրանց մեծ մասը դրամաշնորհների միջոցով լուծում է կենսական անհրաժեշտություն ունեցող խնդիրներ: Իսկ այս պարագայում նրանց քիչ է մտահոգում դրամաշնորհի՝ վտանգ կամ մարտահրավեր պարունակելու փաստը: Սա մեծ առումով կարող է դառնալ ազգային անվտանգության խնդիր, իսկ ավելի նեղ դիտանկյունից այս իրողությունը խախտում է ՀԿ-ի ողջ տրամաբանությունը. ՀԿ-ն վերածվում է հիմնական աշխատավայրի:

4. ՀԿ-ների գործունեությունն ավելի նկատելի, հասցեական և արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ են լուրջ օրենսդրական փոփոխություններ, որոնց մասին բարձրաձայնում են հենց ՀԿ-ները: Հարկ է նշել, որ ՀՀ-ում հատկապես վերջին տարիներին սնկի պես աճող ՀԿ-ների համար խթան են հանդիսացել օրենսդրական դաշտի լրացումներն ու փոփոխությունները, ինչպես նաև պետություն-ՀԿ սեկտոր գործակցության արդյունավետության բարձրացմանն ուղղված Հանրային խորհրդի և Քաղաքացիական ֆորումի ստեղծումը:

5. ՀԿ-ների առավել կայացած կողմը դրանց հատկապես փորձա-

[35] **Sampson S.,** Too much Civil Society? Donor driven Human rights NGOs in the Balkans in the book revisiting the role of Civil Society in the Promotion of Human Rights. Denmark. 2004, p. 208 -212.

գիտական ու վերլուծական հմտություններն են, թեև այս գործոններն ավելի շատ վերաբերում են աշխատակազմի մասնագիտական կարողություններին, քան ՀԿ ինստիտուցիոնալ կարողություններին:

Բանալի բառեր – *քաղաքացիական հասարակություն, իրավական պետություն, հասարակական համակարգի ինստիտուտներ, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հետխորհրդային հասարակություններ, միջազգային կազմակերպություններ, ցանցային կազմակերպություններ*

ЛИЛИТ СТЕПАНЯН – ***Об особенностях деятельности общественных организаций в РА.*** – Демократические политические системы современного мира тесно связаны с гражданским обществом и законодательством. После распада СССР постсоветские республики оказались в совершенно новой общественно-политической реальности. В каждой из них параллельно с политическими институтами формировались и развивались также общественные институты. Сложились представления о политическом обществе, приняты законы, регулирующие эту сферу. В связи с различными факторами сегодня в Армении наиболее активные организации обладают рядом структурных и функциональных особенностей, которые положительно, но подчас и отрицательно воздействуют на становление гражданского общества.

Ключевые слова: *гражданское общество, правовое государство, институты общественной системы, корпоративная социальная ответственность, международные организации, сетевые организации*

LILIT STEPANYAN – ***On the Peculiarities of Non-Govermental Organizations of the RA.*** – The democratic political systems of the modern world is closely linked with civil society and legal system of the state. After the collapse of the Soviet Union, the former Soviet states were in an entirely new social, political, post-Soviet reality. Naturally, in each of them, including Armenia, together with the institutions of the political system, some institutions of the social system were formed and developed. Ideas about the political society of the third sector have been put forward; the laws governing this area have been developed. In connection with both political and non-political factors existing in Armenia nowadays social organizations present a number of structural and functional features that have positive and sometimes negative impact on the development and formation of the civil society of Armenia.

Key words: *civil society, legal state, institutions of the social system, corporate social responsibility, the post-Soviet society, international organizations, network organizations*

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **ԼԵՎՈՆ ՇԻՐԻՆՅԱՆ** – քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի քաղաքագիտության բաժնի վարիչ

   ЛЕВОН ШИРИНЯН – доктор политических наук, профессор, заведующий отделом политологии Института философии, социологии и права НАН РА

   LEVON SHIRINYAN – Sc. D. in Political Science, Professor, Head of the Political Department at the Institute of Philosophy, Sociology and Law of NAS RA

   Էլ. հասցե՝ levon_art@yahoo.com
2. **ՀԱՅԿ ՆԱԶԱՐՅԱՆ** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի դասախոս

   АЙК НАЗАРЯН – кандидат филологических наук, преподователь кафедры международных отношений и дипломатии ЕГУ

   HAYK NAZARYAN – PhD, Lecturer of the Chair of International Relations and Diplomacy, YSU

   Էլ. հասցե՝ hayk.nazaryan@ysu.am
3. **ՀԱՅԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ** – քաղաքագիտության թեկնածու, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ասիստենտ

   АЙК СУКИАСЯН – кандидат политических наук, ассистент Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна

   HAYK SUKIASYAN – PhD, Assistant Professor at Armenan Pedagogical University after Kh. Abovyan

   Էլ. հասցե՝ hayk_sukiassyan@mail.ru
4. **ԷԴԳԱՐ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ** – քաղաքագիտության թեկնածու, ԵՊՀ հանրային կառավարման ամբիոնի ասիստենտ, միջազգային հարաբերություններ ֆակուլտետի փոխդեկան

   ЭДГАР КАЛАНТАРЯН – кандидат политических наук, преподаватель кафедры государственного управления ЕГУ, заместитель декана факультета международных отношений ЕГУ

   EDGAR KALANTARYAN – PhD, Assistant Professor of the Chair of Public Administration, deputy dean of the faculty of International Relations, YSU

   Էլ. հասցե՝ edgar.kalantaryan@ysu.am

5. **ԲԱԼՏԱՇ ԿԱՐԻՊՈՎ** – Շ. Շ. Ուալիխանովի անվան Կոկշետաուի պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնի դոցենտ
БАЛТАШ КАРИПОВ – доцент кафедры философии Кокшетауского государственного университета имени Ш. Ш. Уалиханова
BALTASH KARIPOV – PhD, Associate Professor of the Chair of Philosophy, Kokshetau State University named after Sh. Sh. Ualikhanov
Էլ. հասցե՝ bkaripov@yandex.ru
6. **ԿՆՅԱԶ ՍԱՐՈՅԱՆ** – ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի ասպիրանտ
КНЯЗЬ САРОЯН – аспирант кафедры истории и теории политической науки ЕГУ
KNYAZ SAROYAN – PhD student of the Chair of History and Theory of Political Science, YSU
Էլ. հասցե՝ saroyan.knyaz@gmail.com
7. **ԼԻԼԻԹ ՍՏԵՓԱՆՅԱՆ** – ԵՊՀ քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի հայցորդ
ЛИЛИТ СТЕПАНЯН – соискательница кафедры политических институтов и процессов ЕГУ
LILIT STEPANYAN – Dissertee of the Chair of Political Institutions and Processes, YSU
Էլ. հասցե՝ lilitzara@yahoo.com

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ❋ СОДЕРЖАНИЕ ❋ CONTENTS

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
МЕЖДУНАРОДНЫЕ ОТНОШЕНИЯ
INTERNATIONAL RELATIONS

Լևոն Շիրինյան – Հայոց հարցի բալկանյան շրջադարձը (*երկրաքաղաքական էտյուդ*) 3

Левон Ширинян – Балканский перелом Армянского вопроса (геополитический этюд)

Levon Shirinyan - Balkanian turning point of Armenian Question (geopolitical etude)

Հայկ Նազարյան – Իրաքի, Լիբիայի, Սիրիայի դեմ տեղեկատվական պատերազմների համեմատական վերլուծություն 13

Айк Назарян – Сравнительный анализ информационных войн против Ирака, Ливии, Сирии

Hayk Nazaryan – Comparative Analysis of Information Warfare against Iraq, Libya, Syria

Հայկ Սուքիասյան – Պարչ-Նաումանի «Միջին Եվրոպայի» հայեցակարգերը 21

Айк Сукиасян – Концепции “Срединной Европы” Парча–Наумана

Hayk Sukiasyan – Partch-Naumann’s Concepts of “Middle Europe”

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ПОЛИТОЛОГИЯ
POLITICAL SCIENCE

Էդգար Քալանթարյան – Զանգվածային լրատվամիջոցները ՀՀ պետական կառավարման համակարգում 31

Эдгар Калантарян – СМИ в системе государственного управления РА

Edgar Kalantaryan – The Role of Media in the Public Governance of RA

Բալտաշ Կարիպով - Պահպանողականության տեսական ձևավորման և քաղաքական գաղափարախոսության վերափոխման գործընթացը (ռուս.) 39

Балташ Карипов – Теоретическое оформление консерватизма и превращение его в политическую идеологию

Baltash Karipov – Process of Theoretical Registration of Conservatism and its Transformation Into Political Ideology(rus.)

Կնյազ Սարոյան – Քաղաքացիական մշակույթ հասկացության սահմանման շուրջ 49

Князь Сароян – К определению понятия гражданская культура

Knyaz Saroyan – On the Definition of the Concept of Civic Culture

Լիլիթ Ստեփանյան **–** ՀՀ-ում հասարակական կազմակերպությունների գործունեության առանձնահատկությունների մասին 60
Лилит Степанян – Об особенностях деятельности общественных организаций в РА
Lilit Stepanyan – On the Peculiarities of Non-Govermental Organizations of the RA

Տեղեկություններ հեղինակների մասին 76
Сведения об авторах
Information about the Authors

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից:
Իրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:
Журнал выходит три раза в год. Издается с 2010 года. Правонаследник издававшегося
в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".
The Bulletin is published thrice a year. It has been published since 2010. It is the successor
of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Կայք՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝ Գ. Գրիգորյան
Контрольный корректор Г. Григорян
Proofreader G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝ Մ. Աբգարյան
Компьютерная верстка М. Абгарян
Computer designer M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 22. 09. 2015:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: